Էջմիածին



1961

ԺԸ ՏԱՐԻ

Սեպտեմբեր

ԷՋՄԻԱԾԻՆ

ՊԱՀՏՕՆԱԿԱՆ ԱՄՍԱԳԻՐ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԱԹՈՌՈՅ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ

Թ

1961

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

	էջ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԻ կոնդակը Սուրբ Մեսրոպ Մաշտոցի ծննդյան հազարվեցհարյուրամյակի առթիվ	3
ԽՄԲԱԳՐԱԿԱՆ—Սուրբ Մեսրոպ Մաշտոց	6
ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ	10
Սուրբ Էջմիածնի Հոգևոր ճեմարանի վերաբացումը	12
ՆԵՐՍԵՍ ԱԲԵՂԱ ՊՈՂԱՊԱՆՅԱՆ—Զբոսարշավ դեպի Արագածի գագաթը	14
Ապրիլյան մեծ եղեռնի նահատակների հուշարձանի բացումը Բուենոս-Այրեսում	17
Քենտրբերիի Արքեպիսկոպոսն համայն Անգլիո եպիսկոպոսապետ և Միտրոպոլիտ դոկտոր Արթուր Ռեմզիի գահակալությունը Քենտրբերիի մեջ	19
ՁԱՎԵՆ ՎԱՐԴԱՊԵՏ ԱՐԶՈՒՄԱՆՅԱՆ—Սուրբ Գրքի անգլիերեն նորագույն թարգմանության առթիվ	20
Հ. Ճ. ՍԻՐՈՒՆԻ—Օրմանյան և իր ժամանակը	24
ՊՐՈՖ.-ԴՈԿՏ. Լ. Մ. ՄԵԼԻՔՍԵԹ-ԲԵԿ— Թելեթը հայ և վրաց պատմագրության, բանահյուսության և վիմագրությանց մեջ . . .	45
ԼՈՒՐԵՐ ՄԱՅՐ ՀԱՅՐԵՆԻՔԻՑ	57
Ցուցակ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի նոր ստացված ձեռագրերի . .	60

ՀԱՅԿ ԴԵՊԱՐԱՆԻ ԳՈՒՆԴԱՄԵՏՏԻ ԳՐԱԴԱՐԱՆ ԱԿԱԴԵՄԻԱ

ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՆ
ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ, ԷՋՄԻԱԾԻՆ

«ԷՋՄԻԱԾԻՆ» ԱՄՍԱԳՐԻ ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Армянская ССР, Эчмиадзин, Редакция журнала «Эчмиадзин»

Rédaction de la revue «Etchmiadzine», Etchmiadzine, Arménie, URSS.

ՀՐԱՄԱՆԱՒ

Տ. Տ. ՎԱՂԳԵՆԻ ԱՌԱՋՆՈՑ

ՎԵՀԱՓԱՌ ԵՒ ՍՐԲԱՁՆԱՓՈՅՆ

ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԿՈՆԴԱԿԸ ՍՈՒՐԲ ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՑԻ ԾՆՆԴՅԱՆ ՀԱԶԱՐՎԵՑՀԱՐՅՈՒՐԱՄՅԱԿԻ ԱՌԹԻՎ

ՎԱԶԳԷՆ ԾԱՌԱՑ ՅԻՍՈՒՍԻ ԳՐԻՍՏՈՍԻ, ՈՂՈՐՄՈՒԹԵԱՄԲ ԱՍՏՈՒԾՈՅ ԵՒ ԿԱՄՕՔՆ ԱԶԳԻՆ ԵՊԻՍԿՈՊՈՍԱՊԵՏ ԵՒ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՑՆ ՀԱՅՈՑ, ԾԱՅՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ՀԱՄԱԶԳԱԿԱՆ ՆԱԽԱՄԵԾԱՐ ԱՐՈՒՈՅՈՅ ԱՅՐԱՐԱՏԵԱՆ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻՈՅ ՍՐՈՅՑ ԿԱԼՈՒՈՂԻԿԷ ԷՋՄԻԱԾՆԻ

ԶՐԻՍՏՈՍԱՒԱՆԴ ՍԻՐՈՅ ՈՂՋՈՒՅՆ ԵՒ ՕՐՀՆՈՒԹԻՒՆ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹԵԱՆ, ՊԱՏՐԻԱՐՔՈՒԹԵԱՆ ԵՐՈՒՍԱՂԵՄԻ ՀԱՅՈՑ ՊԱՏՐԻԱՐՔՈՒԹԵԱՆ ԹՈՒՐՔԻՈՅ ՀԱՅՈՑ, ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԱՑ, ԵՊԻՍԿՈՊՈՍԱՑ, ՎԱՐԴԱՊԵՏԱՑ, ՔԱՀԱՆԱՅԻՑ ԵՒ ՍԱՐԿԱՒԱԳԱՑ, ԹԵՄԱԿԱՆ ԵՐԵՍՓՈԽԱՆԱԿԱՆ ԺՈՂՈՎՈՅ, ԹԵՄԱԿԱՆ ԵՒ ԹԱՂԱԿԱՆ ԽՈՐՀՐԴՈՅ ԵՒ ՊԱՇՏՕՆԵԻՑ ԵՒ ՍԻՐԵՑԵԱԼ ՀԱՄԱՅՆ ՀԱՒԱՏԱՑԵԱԼ ԺՈՂՈՎՐԴԵԱՆ ՀԱՅՈՑ

Ստված, երանելի օր մը, այցի ելավ Իր հավատացյալ հոտին ի Հայաստան աշխարհ, և Հաքեկաց գյուղակին մեջ Իր արարչագործ Աջով բացավ աչքերը հայ մանուկի մը, «ելից կնա աստուածեղէն հոգւով իմաստութեան» (Ելք ԼԵ 31), և կոչեց զայն մեծ առաքելության մը:

Այդ պատահեցավ Փրկչական 361 թվականին:

Աստվածընտիր մանուկը հրաշալի կերպով աճեցավ և անհագ ծարավով ըմպեց երկնային շնորհներու բաժակեն, զորացավ, հանճարացավ, ամբողջ կյանք մը տքնեցավ և իր մեծ առաքելությունը ի կատար ածեց՝ փառքով:

Մեսրոպ վարդապետ Մաշտոց գտավ և բյուրեղի վերածեց հայ ժողովուրդի խոսած լեզվի հնչյունները, հորինեց անոնց նշանագրերը և Սահակ Պարթև Հայրապետի հետ թարգմանեց Սուրբ Գիրքը: Եվ Մեծ Վարդապետը իր լույս ձեռքով գրեց առաջին հայերեն բառերը՝ «Ճանաչել վիմաստութիւն և վխրատ, իմանալ զբանս հանճարոյ» (Առակք Ա 2), Սուրբ Էջմիածնի կամարներուն տակ:

Մեսրոպ վարդապետ հիմը դրավ հայ դպրության և գրականության:

Հայաստանյայց Եկեղեցին և ժողովուրդը կայն հաչակեցին՝ ՍՈՒՐԲ:

Սուրբ Մեսրոպ իր մեծ գործով շարունակեց Սուրբ Գրիգոր Լուսավորչի առաքելությունը և կայն իր լրումին հասցուց. «կարդարեց տնօրինաբար իմաստն Աստեղին», և աստվածային լույսը տարավ հայ ժողովուրդի մտքեն ու սրտեն ներս: Քրիստոնեությունը և հայ ժողովուրդը նույնացան. Հայաստանյայց Եկեղեցին դարձավ Հայոց Ազգային Եկեղեցի:

Սուրբ Մեսրոպ հայ ժողովուրդին գիր ու գիրք տալով. դարձավ աշխարհի մշակույթ ստեղծող լուսավոր ուժերեն մեկը. վասնզի հայ ժողովուրդը իրեն տրված այդ մեծ շնորհը գիտցավ արգասավորել, հարստացնել ու ծաղկեցնել. և հասնիլ գրական ստեղծագործությանց բարձր կատարներու:

Տասնվեց դարերե ի վեր Սուրբ Մեսրոպ իր հուժկու ուսերուն վրա կկրե հայ ժողովուրդի մշակույթը և կտանի կայն բարձունքե բարձունք: Հայ ժողովուրդն ալ. տասնվեց դարերե ի վեր. իր տաղանդաշատ կավակներու գործերով. բարձունքե բարձունք կտանի Սուրբ Մեսրոպի պայծառ անունը: Իրապես. Սուրբ Գրքի թարգմանության առաջին տողերեն մինչև մեր օրերու հայերեն ստեղծագործության վերջին տողերուն մեջ Սուրբ Մեսրոպ Մաշտոցն է. որ կապրի ու կփառավորվի:

Սուրբ Մեսրոպի գործով հայ ժողովուրդը իր ինքնությունը գտավ. իր մտքի ու զգացումի կաղապարները ձուլեց և հորինեց՝ իր ապրելու և ստեղծագործելու ոճը:

Մեր ազգային ամբողջ մշակույթը իր բոլոր վավերական արժեքներով՝ գրականության. ճարտարապետության. գիտության և արվեստներու մեջ. սկիզբ կառնեն Սուրբ Գրիգոր Լուսավորչի և Սուրբ Մեսրոպ Մաշտոցի տեսիլքներեն: Այդ ոգեկան աղբյուրներեն է. որ բուն հայ ժողովուրդը ծնավ՝ իր հոգիով. իր իմացականությամբ. իր զգայնությամբ. իր պատմությամբ. իր մշակույթով:

Այդ ինքնաճանաչման և ինքնակերտման ճանապարհին վրա կազմվեցավ և դարբնվեցավ նաև հայուն ապատ ապրելու կամքը: Սուրբ Մեսրոպն է. որ միշտ կորացուց բազուկը Հայրենյաց պաշտպան հայ հերոսներուն՝ Ավարայրեն մինչև Սարդարապատ:

Մեծ Վարդապետը թաղված է Օշական՝ Արագածի փեշերուն. Հայաստանի նվիրական հողին մեջ:

Մեռած չէ սակայն Օշականի Սուրբը. «Զանկի անմահ է յիշատակ նորա» (Իմաստ. Դ 1):

Սուրբ Մեսրոպ այսօր ամենակենդանի հայն է: Ան կապրի մեր վերապրող ու վերածնած ժողովուրդի սրտին մեջ և շրթներուն վրա. Հայրենի աշխարհի ափերեն մինչև հեռուները հայ Սփյուռքին:

Սուրբ Մեսրոպ կապրի մանավանդ ու կգործե՝ մեր արդի վերաշինված հայրենի կտուրին տակ. քաղաքամայր Երևանի Մատենադարանի կամարներուն ներքև. Հայաստանի համալսարանի և դպրության բազում հաստատություններուն մեջ:

Տասնվեց դարեր առաջ. Սուրբ Մեսրոպ հայ ժողովուրդի հոգիին մեծ հաղթանակը հանդիսացավ: Իսկ տասնվեց դարեր հետո. այսօր. մեր ժողովուրդի. մեր Հայրենիքի ու մշակույթի գոյությունն ու ծաղկումը մեծ հաղթանակներն են մանավանդ Սուրբ Մեսրոպ Մաշտոցին:

Հայ հավատքի վեմ Սուրբ Էջմիածնեն և երախտագետ հայ ժողովուրդի սրտեն՝ հարգա՜նք և փա՜ռք և օրհնությո՜ւն սքանչելագործ Սուրբ Մեսրոպի հիշատակին և անոր անմահ գործին:

Հարգա՜նք և փա՜ռք և օրհնությո՜ւն նաև հայ ժողովուրդի կյանքին ու վերածնունդին. անոր ապրելու կամքին և ստեղծագործ անսպառ ուժերուն:

Թող մեր հայրերու Աստվածը միշտ պայծառ պահե լուսեղեն դափնեպսակը Սուրբ Մեսրոպին, և միշտ կենդանի, խաղաղ ու ապահով պահպանե հայ ժողովուրդը և անոր Մայր Երկիրը նվիրական:

Եվ թող Աստված Իր շնորհները նույն առատությամբ բաշխե մեր Ազգին, որպեսզի ան հաղթականորեն շարունակե իր առաքելությունը այս աշխարհի վրա, մյուս ժողովուրդներու կողքին, իր կավակներուն հանճարով հարստացնելով մշակութային գանձարանը համայն մարդկության:

Հայրապետական Մեր այս կոնդակով կհրահանգենք մեր նվիրապետական Աթոռներուն, թեմական առաջնորդներուն, ազգային-եկեղեցական իշխանությանց, վարժարաններու տնօրենությանց, հոգաբարձությանց, հայ մամուլին և հայ մշակույթի բոլոր հաստատությանց՝ համազգային հանդիսությամբ տոնել, պանծացնել սուրբ հիշատակը Մեսրոպ Մաշտոց Վարդապետին, անոր ծննդյան 1600-ամյակի առիթով, հոկտեմբեր 14-ին, թարգմանիչ վարդապետներու տոնին:

Հա՛յ ժողովուրդ, միշտ կենդանի և միշտ փառքի մեջ պահե քու մեծասքանչ մայրենի լեզուդ և գիրդ Մեսրոպյան:

«Ողորմութիւն Աստուծոյ եւ շնորհք Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի եղիցին ընդ ամենեսին»: Ամեն:

ԵԱՏՐԱԳՈՒՑՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՑՆ ՀԱՅՈՑ

Տուաւ կոնդակս ի 23-ն օգոստոսի
1961 Փրկչական ամի,
և ի տուժարիս Հայոց ՌՆԺԱ.
ի մայրավանս Սրբոյ Էջմիածնի:

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

ՍՈՒՐԲ ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՑ

(ԾՆՆԴՅԱՆ 1600-ԱՄՅԱԿԻ ԱՌԹԻՎ)

Իր ամսագրի սույն համարի սկզբում հրապարակվում է Վեճափառ Հայրապետի օգոստոս 25 թվակիր սրբատառ կոնդակը Ս. Մեսրոպ Մաշտոցի ծննդյան 1600-ամյակի առթիվ:

«ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՄԵՐ ԱՅՍ ԿՈՆԴԱԿՈՎ,— գրում է Վեճափառ Հայրապետը հիշրնշման ոգով լի իր կոնդակում,— ԿՀՐԱՀԱՆԴԵՆՔ ՄԵՐ ՆՎԻՐԱՊԵՏԱԿԱՆ ԱԹՈՌՆԵՐՈՒՆ, ԹԵՄԱԿԱԼ ԱՌԱՋՆՈՐԴՆԵՐՈՒՆ, ԱԶԳԱՅԻՆ-ԻԿԵՂԵՑԱԿԱՆ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆՑ, ՎԱՐԺԱՐԱՆՆԵՐՈՒՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆՑ, ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹՅԱՆՑ, ՀԱՅ ՄԱՄՈՒԼԻՆ ԵՎ ՀԱՅ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԲՈԼՈՐ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆՑ՝ ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ՀԱՆԴԻՍՈՒԹՅԱՄԲ ՏՈՆԵԼ, ՊԱՆԵԱՑՆԵԼ ՍՈՒՐԲ ՀԻՇԱՏԱԿԸ ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՑ ՎԱՐԴԱՊԵՏԻՆ, ԱՆՈՐ ԾՆՆԴՅԱՆ 1600-ԱՄՅԱԿԻ ԱՌԹԻՎ, ՀՈԿՏԵՄԲԵՐ 14-ԻՆ, ԹԱՐԳՄԱՆԻՉ ՎԱՐԴԱՊԵՏՆԵՐՈՒՆ ՏՈՆԻՆ»:

1912 թվականին, հոգելույս Տ. Գևորգ Ե Կաթողիկոս Սուրենյանցի հայրապետական կարգադրությամբ, մեծվայելուչ հանդիսությամբ ամենուրեք առնվեց «Հայ տառերի գյուտի հազար հինգ հարյուր և հայ տպագրության չորս հարյուրամյակը» (412—1512—1912):

Լուսահոգի Տ. Խորեն Կաթողիկոսը 1934 թվականին Իր հոկտեմբեր 1 թվակիր սրբատառ կոնդակով հրամանագրել էր մի ամբողջ տարի՝ 1934 հոկտեմբերից 1935 հոկտեմբեր, համարել հոբելյանական տարի և համազգային մեծաշուք հանդեսներով առնել «հազար հինգ հարիւրամեայ տարեդարձ ոսկեղէն թարգմանութեան Ս. Գրոց ի հայ լեզու», 434—1934, միաժամանակ «տրամաբանելով գերախտագիտական զգացումս և գնէր առ մեծ երախտաւորս Ազգիս, առ երանելի դասս ասեմ սրբոց թարգմանչաց, գրչախատարութեամբ Սրբոցն Սահակայ Պարթևի և Մեսրոպայ Մաշտոցի»:

Քիչ բան գիտենք Ս. Մեսրոպ Մաշտոցի կյանքի և կենսագրության մասին: Մեզ ամփոփ տեղեկություններ են հաղորդել ե դարի մեր մատենագիրները՝ Կորյունը, Մովսես Խորենացին և Ղազար Փարպեցին: Մեր պատմիչները տարված, հափշտակված և սքանչացած Ս. Մեսրոպի ԳՈՐԾՈՎ, մոռացության են տվել նրա ԱՆՁՆԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ: Կորյունը, Խորենացին, Փարպեցին և հետագայում այլ կենսագիրներ Փոքր Կորյունը, Մեսրոպ երեցը, Կարապետ Սասնեցին և ուրիշներ ավելի շատ խոսել են Ս. Մեսրոպի ԳՈՐԾԻ քան ԱՆՁԻ մասին:

Եվ երբեմ պատահականություն չէր այն, որ շատ սերունդների համար Ս. Մեսրոպի մեծ գործը՝ հայ գրերի գյուտը նրաչալի պատմությամբ է հերկայացված: Կորյուն, Ս. Մեսրոպի աշակերտը և նրա առաջին կենսագիրը, որը գրել է Մեծ Վարդապետի «Վարք»-ը, տարված Ս. Մաշտոցի մեծ գործով, մոռացության է տվել նրա ՄԵՍ ԵՎ ՈՒՍԱՆԵԼԻ

ԿՅԱՆՔԸ, մանավանդ առաջին տարիների կյանքը, և սխանչացումով գրել է գրերի գյուտի և Աստուածաշնչի հայերեն թարգմանությունն հոյակապ «դեպք»-ի մասին, թե «ԵՐԲ ԵՒ ՅՈՐՈՒՄ ԺԱՄԱՆԱԿԻ ԵՒ ՈՐՊԻՍԻ ԱՐԱՄԲ» կատարվեց այդ հրաշք-հրեայքը մեր մշակույթի պատմության մեջ:

Կորյունը, Խորենացին, Փարպեցին և մյուս կենսագիրները նկարագրում են հրաշալի դեպքը ոչ թե «Ի ՊԱՐԾԱՆՍ ԳՈՎՈՒԹԵԱՆ ԱՆՁԱՆՑ», այլ «ՆԱԽԱՆՁԱԻՈՐ ԼԻՆԵԼՈՎ ՀՈԳԵԻՈՐԱՑՆ», որպեսզի «ՀԱՅԵՑԵԱԼՔ ՅԵԼՍ ԳՆԱՑԻՑ ՆՈՅՆ, ՆՄԱՆԵԱԼՔ ԼԻՑՈՒԻՔ ՀԱԻԱՏՈՅՆ»:

Կորյունը Ս. Մեսրոպ Մաշտոցի կյանքի ընթացքը բաժանում է երկու շրջանի՝ աշխարհական և հոգևորական: Նա Ս. Մեսրոպի աշխարհական կյանքի մասին շատ քիչ բան է հաղորդում, որով. սակայն, ըստ Մ. Աբեղյանի և Հ. Աճառյանի, «պարզվում է նրա դեմքը», բայց ընդարձակ է գրում հոգևորական գործունեության մասին, որը տևել է 45 տարի՝ 395—440:

Ս. Մեսրոպ Մաշտոցը ծնվել է 361 թվականին Տարոն գավառի Հացեկաց գյուղում, որը գտնվում է համբավավոր Մշո դաշտում, Մուշ քաղաքից 40 կիլոմետր դեպի արևելք, Մեղրագետի աջ կողմում (տե՛ս Հ. Աճառյան, «Մեսրոպ Մաշտոց». «էջմիածին», 1954. № 11, էջ 22):

Ծնողով հավանաբար Մամիկոնյան էր Ս. Մեսրոպ, որդին՝ Վարդան անունով բարեպաշտ մի մարդու: Նախնական կրթությունն ստանում է հոչակավոր Ս. Կարապետի վանքում, ուր կրթվում է, ըստ Կորյունի և Փարպեցու վկայության, հելլենական ուսմամբ. «ի մանկութեան պիսն վարժեալ էր հելլենական դպրութեամբն»:

Այնուհետև նա տիրապետում է նաև պարսկերեն և ասորերեն լեզուներին, Տարոնից անցնում է Վաղարշապատ, ուր խորանում է ուսման և գիտության մեջ, «ամենն պատրաստությամբ զարդարելով իրեն» (Կորյուն):

Վաղարշապատում Մեսրոպ Մաշտոցը մտնում է արքունի ծառայության մեջ, որպես կրթված և պատրաստված մեկը, «լինել սպասաւոր արքայատուր հրամանին» (Կորյուն), և կամ «ի դրան արքունի կարգեալ քարտուղար» (Խորենացի), նախ Խոսրով Գ-ի օրով. Առավան հազարապետի ձեռքի տակ, և ապա Վռամշապուհ արքայի օրով:

Մեսրոպ Մաշտոցը ծանոթ էր նաև զինվորական արվեստին. «տեղեկացեալ և հմուտ եղեալ աշխարհակոց կարգաց, ցանկալի եղեալ զինուորական արուեստիւն իւրոց զօրականացն» (Կորյուն):

Փարպեցու վկայությամբ, Ս. Մեսրոպ հայոց արքունիքում արդյունավորությամբ և բարեխղճությամբ էր կատարում իր պաշտոնական և զինվորական պարտականությունները, «և սպասաւորեալ անդ ամս կարգաւորապէս առանց եպիրանաց», սիրելի լինելով նաև իր սորադաս զինվորներին:

Մեսրոպ արքունի պաշտոնեներում մնում է մոտ 10 տարի, 386—395 թվականներին:

Մեսրոպի հետագա կենսագիրներից մեկը. Կարապետ Սասնեցին, իր ներբողյանում Մեսրոպին ներկայացնում է որպես տիպար անձնավորություն, որը թեպետև ապրում էր արքունիքում, բազմապիսի աշխարհիկ ապականության և գայթակղության մեջ, բայց բոլորովին հեռու էր այդ օրգաններից. մաքուր էր և իր պաշտոնը ի գործ էր դնում խեղճերի և զրկյալների պաշտպանության համար, կրոնաշունչ գրերի ընթերցանության մեջ ուրոնում էր, ըստ Կորյունի վկայության, «իր երկնասլաց հոգու հագուրդը և վշտաճար սրտի սփոփանքը աշխարհային ցավերի և վշտերի մեջ» (Հ. Աճառյան, «Մեսրոպ Մաշտոց», «էջմիածին», 1954, № 11, էջ 28): Իսկ մի օր, հավատով և սիրով հանում է իր զինվորական փայլուն համազգեստը, առնում իր խաչը, գնում է ՁԱՅՆԻ հետևից, որ իրեն կանչում էր հավերժական առաքելության, հրաժարվում աշխարհիկ հաջողություններից, կնգուղ է հագնում և դառնում վանական. «ըստ աւետարանական շափուցն՝ ի ծառայութիւն Աստուծոյ մարդասիրին դարձեալ. մերկանայր այնուհետև զիշխանակիր ցանկութիւնսն և առեալ զխաչն պարծանաց. ելանէր զկնի ամենակեցոյց խաչելոյն» (Կորյուն):

Ս. Մեսրոպ Մաշտոց 394 թվականին թողնում է զինվորական ծառայությունը և 395 թվականին, Ս. Սահակ Պարթև Հայրապետի հանձնարարությամբ, դառնում է վանական և ուղարկվում Գողթնյաց աշխարհ որպես քարոզիչ: Այնտեղ նա հավաքում է բազմաթիվ աշակերտներ և զբաղվում «առաքելական» գործունեությամբ. «գերեալ ամենեքին հայրենական ավանդությունքներից և սատանայական դիվապաշտ ծառայությունից» (Կորյուն):

Գողթն գավառում Ս. Մեսրոպ Մաշտոցի հոգում ծագում է պայծառ միտք, փրկարար լույս: Նա մտածում է ամբողջ հայ ժողովրդի հոգևոր, իմացական լուսավորության մասին: Նա խորապես զգում է անհրաժեշտությունը հայ գրի ու դպրության: Ս. Մեսրոպի հայրենանվեր և ժողովրդասեր սիրտը կարեվեր վառվում էր հայ ժողովրդի տխուր կյանքով և անստույգ ապագայի մտահոգություններով. «Տրտմություն է ինձ համար և անպակաս են իմ սրտի ցավերն իմ եղբայրների և ազգայիններ համար»:

Մեծ տեսանողը. «անկեալ ի ծուփս խորհրդոց», գիշեր և ցերեկ, անգադրում և անձանձրույթ, մտածում էր արմատական միջոցի. փրկության միակ ելքի մասին: Դա սեփական գիր և գրականություն ունենալու պահանջն էր:

Ս. Մեսրոպ Մաշտոցը, զգալով գործի համազգային պատմական նշանակությունը և որա հետ կապված բազմաբիվ դժվարությունները, Դողթնյաց աշխարհում երկար ժամանակ այդ հարցով զբաղվելուց հետո, 402 թվականին վերադառնում էր Վաղարշապատ և հարց էր բարձրացնում Ս. Սահակ Հայրապետի առաջ: Ս. Սահակ հայրապետը, նույնպես մտազբաղ նույն հարցերով, ջերմորեն ընդունում էր Ս. Մեսրոպի առաջարկը. այն համարելով նաև իր սրտին շատ մոտ. անհետաձգելի հարց:

403 թվականին, Վաղարշապատում գումարվում է խորհրդակցական մի ժողով, որին հերկա են լինում բարձրաստիճան հոգևորականներ և գիտնականներ:

Կաթողիկոսի նախագահությամբ կազմված ժողովին մասնակցում է նաև Վռամշապուհ արքան, ի սպաս դնելով արքունիքի գանձերը, Ս. Մեսրոպ Մաշտոցի գործի հաջողության համար:

Վաղարշապատի համագումարը միաձայն որոշում է Մեսրոպ վարդապետին հանձնել այդ գործը:

404—405 թվականներին, Մեսրոպ Մաշտոցը, մի խումբ աշակերտներով, մեկնում է Միջագետք, Ամիդ, Եդեսիա, Սամոսատ: Ոչ մի տեղ սակայն նրան որևէ լուրջ օգնություն չեն կարողանում տալ, բացի սիրալիր ընդունելություններից և ուշադրությունից: Այնուամենայնիվ, Ս. Մեսրոպը, իր շրջագայության ընթացքում, ձեռք է բերում որոշ հրմտություն և ծանոթություն:

Բայց նա իր առաջադրած նվիրական նպատակին հասնում է ՄԻԱՅՆ ԵՎ ՄԻԱՅՆ ԻՐ ՀԱՄԱՌ, ՏՔՆԱՋԱՆ ԵՎ ՍՏԵՂԾԱԳՈՐԾ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՇՆՈՐՀՈՎ:

405—406 թվականներին, ի վերջո, հաջողությամբ են պսակվում Ս. Մեսրոպի տքնությունները: Մի խոստումնալից և պայծառ օր, ինքնամփոփման, խոկման և աղոթքի պահում, «ոչ ի քուն երազ և ոչ յարբեալ տեսիլ» վիճակում, Եդեսիայում, ստեղծագործական երկունքի մեջ, նա հնարում է հայկական նշանագրերը. «Եւ այնպէս քաղում աշխատութեանց համբերեալ, ՎԱՍՆ ԻՐՈՅ ԱՋԳԻՆ ԲԱՐԵԱՑ», ծնունդ է տալիս հայ տառերին: «Նա իր սուրբ Աչով,—գրում է Կորյունը,—հայրաբար նորհնեց նոր և սքանչելի ծնունդներ՝ հայերեն լեզվի նշանագրեր»:

Գրերի ստեղծումից հետո, Ս. Մեսրոպ Մաշտոցը նրանց յուրաքանչյուրին տալիս է առանձին ձև, որոշում անունները, և որոշ դասավորությամբ շարում. կազմելով մեր այսօրվա այբուբենը: Այնուհետև նա անցնում է Սամոսատ, Միջագետքի հյուսիսում գտնվող և հելլենիստական մշակույթի կենտրոն համարվող այդ քաղաքը, հունական դպրության հմուտ գրիչ Հռուփանոսի մոտ, իր ստեղծած հայ տառերին տեխնիկական վերջին ձևավորումը տալու համար: Հռուփանոսը վերցնում է Մեսրոպյան նշանագրերի պարզ սևագրումը և մազաղաթյա թղթի ու մոմի տախտակների վրա նկարում է մի վայելուչ պնակիտ, «տառերի կարգը՝ կարգ, երկարը՝ երկար պահելով և նուրբ ու հաստ գծերը գեղեցիկ նկարելով» (Կորյուն):

Նուրբ 1550 տարի է անցել այն օրվանից, երբ Ս. Մեսրոպը ստեղծեց հայ նշանագրերը: Բայց հայկական այբուբենը մինչև այսօր էլ մնացել է անփոփոխ:

Այնուհետև Սամոսատից Ս. Մեսրոպը վերադառնում է «հոգելից ուրախութեամբ ի Հայաստան աշխարհ, ի կողմանս Այրարատեան գաւառին, առ սահմանօք Նոր Քաղաքին» (Կորյուն), այն է՝ հայրապետանիստ և թագավորանիստ Վաղարշապատ մայրաքաղաքը:

Ս. Մեսրոպ Վաղարշապատում ընդունվում է ժողովրդի «ցնծութեան բարբառօք և երգօք հոգևորօք» (Կորյուն):

Ղազար Փարպեցին նկարագրում է հոգևոր ուրախությունն ու խանդավառությունը ամբողջ ժողովրդի, հոգևորականության ու արքունիքի. ամեն օր «փափաքէր յուսումն գիտութեան, որպէս ի խաւարէն յաստղի տաճչանացն զերծեալք ի լոյս խնդային»:

Կորյունը, դեպքին ականատես, Ս. Մեսրոպի Հայաստան գալուստը, ձեռքում հայկական նշանագիր, նմանեցնում է շատ դիպուկ կերպով, Մովսես մարգարեի Սինայից էջքին, Տաճարանյա աստվածատուր պատվիրաններ ձեռքին. «Օրհնութեամբն ի քաղաքն [թագաւորական] դառնային և գաւառս տօնական ուրախութեամբ անցուցանէին»:

Գրերի գյուտը համազգային ցնծատոն էր բովանդակ հայ ժողովրդի համար:

Կորյունը, արտահայտելով բովանդակ հայ ժողովրդի «սրտային ուրախութիւն»-ը, գրերի գյուտի բերկրանքը դեպքի և նշանակության մասին արդարորեն գրում է հետևյալը. «Յայնմ ժամանակի երանելի և զանկալի աշխարհս Հայոց անպայման սքանչելի լինէր», որովհետև, գրերի գյուտով և Աստվածաշունչի հայերեն թարգմանությամբ, մեր երկրում ՀԱՍՏԻՐԱՏԱԿՈՒՄ ՍՔԱՆՉԵԼԱԿԻՐՔՈՒԹԻՒՆՔ ԳԻՐԾԵՑԱՆ, և հայ ժողովուրդը, գրերի գյուտի խորհրդով, «առ ժամայն վաղվաղակի ամենայն իրաց հղելոց խելամուտ լինէր» (Կորյուն):

Ժ դարի պատմիչ Ասողիկը ավելացնում է. «Սկիզբն դպրութեանս Հայոց եղև սկիզբն մեծի գիտութեան և անպայման ուրախութեան» («Պատմութիւն տիեզերական, Ս. Պետերբուրգ, 1880, էջ 74):

Միջնադարյան մի անանուն գրիչ ասում է, որ գրերի գյուտով «բացվեց հայի կապված բերանը, փարատվեց մեգը և հոգևոր ստինը իր կաթը ցամքեց»:

Գրերի գյուտով հայ ժողովուրդը գտավ իր գոյության և հավերժության կոչանը և դարերի դիմաց վառեց իր կյանքի անշեջ խարույկը:

Գրերի գյուտից հետո, մեր պատմության վրայով անցան արյան ամենի մռայլերը, մեր ժողովուրդը փշուր-փշուր եղավ աստղերի նման և գրվեց աշխարհում «զորէն մոլորական աստեղաց»:

ՄԵՍՐՈՊՅԱՆ ՆՇԱՆԱԳՐԵՐԸ ՄԵԶ ՓՐԿԵՑԻՆ ՀՈԳԵԿԱՆ ՈՒ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԳԵՐՈՒԹՅՈՒՆԻՑ. ՊԱՅԾԱՌԱՑՐԻՆ ՀԱՅ ԵԿԵՂԵՑՈՒՆ, ԿԵՆԴԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՆՈՐ ԼԻՑՔ ՀԱՂՈՐԴԵՑԻՆ ՀԱՅ ԴՊՐՈՑԻՆ ԵՎ ԴՊՐՈՒԹՅԱՆ, ԱՅԴ ԲՈԼՈՐՈՎ ՀԱՅ ՀՈԳԻՆ ՈՒ ՄԻՏՔԸ ԶՐԱՀԵՑԻՆ ԳԱԼԻՔ ԲՈԼՈՐ ԶՐՀԵՂԵՂՆԵՐԻ ԴԵՄ, ԼՈՒՍԱՎՈՐ ԵՎ ՓՐԿԱՐԱՐ ՃԱՆԱՊԱՐՀ ՀԱՐԹԵԼՈՎ ԴԵՊԻ ՊԱՅԾԱՌ ԱՊԱԳԱ:

Երբ, Ազգիս Վեհափառ Հայրապետի հրամանով, ոգեկոչում ենք հիշատակը Օշականի Մեծ Սրբի, Նարեկ Ա. Օծությունը, Իր սրբատառ կոնդակով, մի քաղցր և սրբազան պարտականություն է դնում յուրաքանչյուր հայ մարդու վրա, այն է՝ աչքի լույսի պես պահել հայոց Մեծասքանչ լեզուն մեր եկեղեցիներում, մեր դպրոցներում, մեր ընտանիքներում, ապրեցնել ամեն տեղ մեր շրջանների վրա, սիրել և տարածել հայ գիրն ու գրականությունը, դաստիարակել հայ նոր սերնդին Մեսրոպյան նշանագրերի լույսով և խորհրդով, պայքարել հայ լեզվի աղավաղումների և աղճատումների դեմ:

Տարեդարձներն ու հոբելյանական հանդիսությունները ավելորդ կլինեին, երբ արդարև չկարենայինք բարձրացնել տոնի խորհրդին և իմաստին և չկարենայինք բաղել մեզ համար անհրաժեշտ դասերը, թե՛ իբր անհատ և թե՛ իբր հավաքականություն:

«ՀԱՅ ՀԱՎԱՏՔԻ ՎԵՄ Ս. ԷՋՄԻԱԾՆԻՆ,— գրում է Վեհափառ Հայրապետը Իր օգոստոս 25 թվակիր սրբատառ կոնդակում,—ԵՎ ԵՐԱԵՏԱԳՆՏ ՀԱՅ ԺՈՂՈՎՈՒՐԴԻ ՍՐՏԵՆ՝ ՀԱՐԴԱՆՔ ԵՎ ՓԱՌՔ ԵՎ ՕՐՀՆՈՒԹՅՈՒՆ ՍՔԱՆՉԵԼԱԳՈՐԾ Ս. ՄԵՍՐՈՊԻ ՀԻՇԱՏԱԿԻՆ ԵՎ ԱՆՈՐ ԱՆՄԱՀ ԴՈՐՇԻՆ»:

Ցի մեռել Օշականի Մեծ Սուրբը: Նա, իր նշանագրերի խորհրդով, առաջնորդում և դեկավարում է մեզ:

Ազգիս Վեհափառ Հայրապետը, Ս. Մեսրոպի ծննդյան 1600-ամյակի առթիվ, տալիս է Իր զավակներին Իր իրավ, մեսրոպաբույր պատգամը.

«ՀԱ՛Յ ԺՈՂՈՎՈՒՐԴ, ՄԻՇՏ ԿԵՆԴԱՆԻ ԵՎ ՄԻՇՏ ՓԱՌՔԻ ՄԵՋ ՊԱՀԵ ՔՈՒ ՄԵԾԱՍՔԱՆՉ ՄԱՅՐԵՆԻ ԼԵԶՈՒԴ ԵՎ ԳԻՐԴ ՄԵՍՐՈՊՅԱՆ»:

ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

ՕԳՈՍՏՈՍԻ 21-ԻՆ, ԵՐԿՈՒՇԱԲԹԻ, Վեհափառնում տեղի ունեցավ Մայր Աթոռին առընթեր ճարտարապետական հանձնաժողովի հերթական նիստը նախագահությամբ Վեհափառ Հայրապետի, ուր քննարկվեցին Իջման Ս. Սեղանի և Ս. Հռիփսիմեի տաճարի սեղանների վերաշինության հարցերը։

Խորհրդակցությունից հետո տեղի ունեցավ հյուրասիրություն, որին ներկա էին նաև սփյուռքահայ ծանոթ մտավորականներ Կոստան Զարյանը և պրոֆ. Մանասե Սեակը։

***

ՕԳՈՍՏՈՍԻ 25-ԻՆ, ՈՒՐԲԱԹ, Վեհափառ Հայրապետը այցելություն տվեց մեծանուն գիտնականներ Ալիխանյան եղբայրների Ֆիզիկայի ինստիտուտին, որը գտնվում է Արագածի կատարին և ուսումնասիրում է տիեզերական ճառագայթները։

Վեհափառ Հայրապետին ուղեկցում էին Հայկական ՍՍՌ Մինիստրների սովետին առընթեր Հայ Եկեղեցու գործերի խորհրդի նախագահ պր. Ս. Գասպարյանը, հոգեշնորհ Տ. Հուսիկ վարդապետ Սանթուրյանը, հոգեշնորհ Տ. Ներսես աբեղա Պոզապալյանը, ինչպես նաև Մայր Աթոռի հյուրեր գրող Կոստան Զարյանը և պրոֆ. Մանասե Սեակը։

***

ՕԳՈՍՏՈՍԻ 26-ԻՆ, ՇԱԲԱԹ, հոգեշնորհ Տ. Մեսրոպ աբեղա Պալյանը, հին տոմարով Ս. Աստվածածնի Վերափոխման տոնակատարության մասնակցելու համար, մեկնեց Բաքու, ուր պատարագեց և քարոզեց «Ուրախ լեր, բերկրեալդ, Տէր ընդ քեզ» բնաբանով։

***

ՕԳՈՍՏՈՍԻ 27-ԻՆ, ԿԻՐԱԿԻ առավոտ, Վեհափառ Հայրապետը մեկնեց միամսյա օդափոխության Կիսլավոդսկի «Լեռնային բարձունքներ» սանատորիան։

Վեհափառ Հայրապետին ընկերակցում էր հոգեշնորհ Տ. Հուսիկ վարդապետը։

***

ՕԳՈՍՏՈՍԻ 27-ԻՆ, ԿԻՐԱԿԻ, «տօն գիւտի գաւուլ Ս. Աստուածածնի»։ Մայր Տաճարում պատարագեց արժանապատիվ Տ. Հակոբ քահանա Հակոբյանը և քարոզեց հոգեշնորհ Տ. Գրիգոր աբեղա Եղիայանը, վեր առնելով Աստվածածնի դերը քրիստոնեության մեջ, որպես տիպար մոր։

***

ՕԳՈՍՏՈՍԻ 31-ԻՆ, ՀԻՆԳՇԱԲԹԻ, Հոգևոր Ոեմարանի ուսանողությունը, գլխավորությամբ վերատեսուչ գերաշնորհ Տ. Հայկազուն արքեպիսկոպոս Աբրահամյանի և ուսուցչական կազմի, ուսումնական տարվա բացման նախօրյակին, մեկնեց Հանքավան միօրյա պտույտի։

***

ՕԳՈՍՏՈՍԻ 31-ԻՆ, ՀԻՆԳՇԱԲԹԻ, Բաքվից Մայր Աթոռ վերադարձավ հոգեշնորհ Տ. Մեսրոպ աբեղա Պալյանը։

***

ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 3-ԻՆ, ԿԻՐԱԿԻ, Մայր Տաճարում պատարագեց արժանապատիվ Տ. Հովհաննես քահանա Մարուքյանը։

Սուրբ պատարագին ներկա էին մեծ թվով սփյուռքահայ ուխտավորներ։

***

ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 8-ԻՆ, ՈՒՐԲԱԹ, «տօն ծննդեան Սրբուհւոյ Կուսին Մարիամու յԱկ-

նալէս։ Մայր Տաճարում պատարագեց հոգեշնորհ Տ. Եղիշե արեղա Գարաջյանը։

Հավարտ սուրբ պատարագի, Հոգևոր Ճեմարանի ուսանողները, ուսումնական տարվա նախօրյակին, ստացան Սուրբ Հաղորդություն։

***

ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 10-ԻՆ, ԿԻՐԱԿԻ, Մայր Տաճարում պատարագեց և քարոզեց հոգեշնորհ Տ. Գրիգոր արեղա Եպիսկոպոսը, ընտրան ունենալով «Արարէք ձեզ գանձս անպակաս յերկրի, ուր ոչ զոր մերձենայ և ոչ ցեց ապականէ»։

Սուրբ պատարագին ներկա էին մեծ թվով սփյուռքահայ ուխտավորներ։

***

ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 17-ԻՆ, ԿԱՉՎԵՐԱՑԻ ԿԻՐԱԿԻՆ, Մայր Տաճարում եպիսկոպոսական հանդիսավոր սուրբ պատարագ մատուցեց Հոգևոր Ճեմարանի վերատեսուչ գերաշնորհ Տ. Հայկազուն արքեպիսկոպոս Աբրահամյանը և քարոզեց «Այլ ինձ քաւ լիցի պարծել, բայց միայն ի խաչն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, որով ինձ աշխարհ ի խաչ ելեալ է, և ես՝ աշխարհի» (Գաղատ. Զ 14)։

Երեկոյան, ավանդական հանդիսությամբ, տեղի ունեցավ Խաչվերացի անդաստան թափորը, հանդիսադրությամբ Մայր Աթոռի լուսարարապետ գերաշնորհ Տ. Սահակ արքեպիսկոպոս Տեր-Հովհաննիսյանի։

***

ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 17-ԻՆ, ԿԱՉՎԵՐԱՑԻ ԿԻՐԱԿԻՆ, Երևանի Ս. Զորավոր եկեղեցում պատարագեց և քարոզեց հոգեշնորհ Տ. Ներսես արեղա Պողոսյանը «Սա է զէն յաղթութեան ընդդէմ աներևութի թշնամւոյն» ընտրանով։

***

ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 18-ԻՆ ԵՐԿՈՒՇԱԲԹԻ, «յիշատակ մեռելոց»։ Մայր Տաճարում պատարագեց հոգեշնորհ Տ. Եղիշե արեղա Գարաջյանը։

Հավարտ սուրբ պատարագի կատարվեց «Հոգեհանգիստ վասն համօրէն ննջեցելոց»։

***

ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 19-ԻՆ, ԵՐԵՔՇԱԲԹԻ, Վեհափառ Հայրապետը, մոտ մեկ ամիս Կիլիկիայում հանգստանալուց հետո, վերադարձավ Մայր Աթոռ, ընկերակցությամբ հոգեշնորհ Տ. Հուսիկ վարդապետ Սանթուրյանի։



ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ ՀՈԳԵՎՈՐ ՃԵՄԱՐԱՆԻ ՎԵՐԱԲԱՑՈՒՄԸ

Սեպտեմբերի 11-ին, երկուշաբթի օր, առավոտյան ժամը 10-ին, տեղի ունեցավ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Հոգևոր Ճեմարանի 1961—1962 ուսումնական տարվա հանդիսավոր վերաբացումը։

Հանդիսության նախագահում էր Գերագույն Հոգևոր Խորհրդի ատենապետ և Մայր Աթոռի լուսարարապետ գերաշնորհ Տ. Սահակ արքեպիսկոպոս Տեր-Հովհաննիսյանը։

Հանդիսությունն սկսվեց «Աշակերտք Քրիստոսի» շարականով։ Ճեմարանի ավագ վերակացու արժանաշնորհ Տ. Հովհաննես քահանա Մարուքյանը ընթերցեց Ավետարանից Սերմնացանի առակը (Մատթ. ԺԳ 4—9)։ Այնուհետև Հոգևոր Ճեմարանի երգչախումբը, ղեկավարությամբ հոգեշնորհ Տ. Մեսրոպ արեղա Պալյանի, կատարեց Թարգմանչաց շարականը՝ «Որք զարդարեցին»։

Հոգևոր Ճեմարանի վերատեսուչ գերաշնորհ Տ. Հայկազուն արքեպիսկոպոս Աբրահամյանը, նոր ուսումնական տարվա սկզբնավորության բարեպատեհ առիթով, ողջույնի և բարի գալստյան հետևյալ շերմ խոսքերն ուղղեց Ճեմարանի դասախոսական կազմին և ուսանողության.

«Սեպտեմբեր...

Թերևս ամենեն ավելի սիրելի ամիսն է սեպտեմբերը մեր ընդարձակ Հայրենիքին մեջ։ Այս օրերուն միլիոնավոր ծնողներ, իրենց զավակներուն ձեռքերեն բռնած, զանոնք կառաջնորդեն դեպի լույսի վառարանները, «հրաշակերտ տաճարները», ինչպես կսիրեր ըսել մեծ մանկավարժ Ռեթեոս Պերպերյան նման առիթներով։

Մեր երիտասարդներն ու պատանիները ավելի կենսուրախ են, խանդավառ ու խոստումնալից, ապագայի վառ հույսերով առլցուն, ուսումնական նոր տարվա սեմին վրա։

Շաբաթ մը ուշացումով կբանանք Հոգևոր Ճեմարանը։ Այս ուշացումը կարդարանա անով, որ, ինչպես կտեսնեք, այս ուսումնական տարվան նախօրյակին, Հոգևոր Ճեմարանի շենքը ամբողջությամբ վերանորոգվեցավ։ Այս հանդիսավոր առիթով խորին շնորհակալություն կհայտնեմ Վեհափառ Հայրապետին այն շերմ սիրույն և գուրգուրանքին համար, որոնցմով շրջապատած է միշտ Ճեմարանը։

Ցավ է մեզ համար, ի բացակայության Վեհափառ Հայրապետին, վերաբանալ իր շատ սիրած կրթական այս հաստատության ուսումնական նոր տարին, բայց վստահ ենք, որ Նորին Ս. Օծությունը, իր հանգստի վայրին մեջ իսկ, հոգիով մեզ հետ է այս պահուս։

Այսօր, այս արևոտ առավոտուն, կբանանք մեր դպրոցը, դնելով մեր հույսը Աստուծո վրա։ Հավատքով կդնենք մեր այր մաճին վրա, Վեհափառ Հայրապետի օրհնությամբ, առանց ետև նայելու, և կաղոթենք, որ Աստված աճեցնե և արդյունավորե «ընդ միոյ երեսուն, ընդ միոյ վաթսուն, ընդ միոյ հարիւր»։

ՌԱՖԱՅԵԼ ՍԱՆՑԻՈՅԻ «ՍՈՒՐԲ ԸՆՏԱՆԻՔԸ»

Կիպրոսից, պր. Վանիրամ Ուրուճյանից, Մայր Աթոռում նվեր ստացվեց «Սուրբ ընտանիքը» նկարը: Նկարը հավանաբար ժէ դարում կատարված հայող վերարտադրությունն է ժԵ—ԺԶ դարերի վերածնունդի հանճարեղ նկարի: Ռաֆայել Սանցիոյի (1483—1520) «Սուրբ ընտանիքը» նկարի:

ՀԱՅ ԳՐՈՂՆԵՐԻ
ՄՈՒԶԵՈՒՄԻ
ԳՐԱԴԱՐԱՆ
ԱԿՊԴԵՐԻՐ

ԽԱՉԻՑ ԷՋՔԸ

Երևանի Ս. Սարգիս եկեղեցում պահված նկարների շարքում նայանարերվեց մեծարժեք այս նկարը, որը, մասնագետ նկարիչների կարծիքով, պատկանում է իտալացի հռչակավոր նկարիչ Գարավաջոյի վրձինին: Նկարը այժմ գտնվում է Մայր Աթոռում:

Միքել Անջելո Ամերիկի կամ Մերիսի Գարավաջոն (1579—1610) իտալական նկարչության մեծագույն ռեալիստ վարպետներից մեկն է համարվում, ծնված Իտալիայի Գարավաջիո-քաղաքում:



Դ դասարանի ուսանող Ժիրայր Դալվաքյանը, հանուն Ճեմարանի ուսանող իր ընկերների, երախտագիտական հետևյալ խոսքերն ասաց.

«Ներից հավաքվել ենք նվիրական այս հարկի տակ, շատ հանդիսավոր մի օրվա խոհերով։ Ճեմարանի ուսանողներիս համար մասնավոր ուրախության և բերկրանքի մի կվարթ լուսարաց է այսօր։

Ամառվա արձակուրդի օրերին, երբ մենք հանգստանում էինք, այնուամենայնիվ մեր մատաղ հոգիները կարոտով տենչում էին այսօրվան և մենք անհամբեր սպասում էինք նվիրական այս ժամին՝ վերադառնալու համար մեր դասագրքերին և գրասեղաններին։

Ցավ է մեզ համար այս պահուս, որ մեր սիրելի Ուսուցչապետը և Վեհափառ Հայրը ներկա չէ մեր մեջ։ Բայց շուտով Նորին Ս. Օծությունը կվերադառնա իր պաշտոնի գլուխը և մեզ, Հոգևոր Ճեմարանի ուսանողներիս, կտեսնի լցված մեր գրասեղանների առաջ, գլուխները խոնարհած դասագրքերի վրա։ Դրանով Վեհափառ Հայրապետը Է՛լ ավելի կուրախանա։

Բախտավոր ենք և երախտապարտ միաժամանակ, որ խնկարույր այս մթնոլորտի մեջ, ուր միայն Բարին, Գեղեցիկը և Վսեմն են թագավորում, մենք, որպես ուխտի զավակներ Հայաստանյայց Առաքելական Ս. Եկեղեցու, դաստիարակվում ենք հայեցի և քրիստոնեական ոգով, կազմակերպվում ենք իմայական և բարոյական, հայոց պատմության ոգով, հայ մշակույթի սիրով և հայ ժողովրդի մեծ տեսիլքներով։

Ուսումնական նոր տարվա այս լուսաբացին, ի դիմաց Հոգևոր Ճեմարանի բովանդակ ուսանողության, ծնրագիր հայցում եմ Աստուծո ողորմությունը, Վեհափառ Հայրապետի օրհնությունը և Ձեր բոլորի աղոթքները Հոգևոր Ճեմարանի վրա։

Գերապատիվ Տ. Սահակ արքեպիսկոպոսը, հանուն Վեհափառ Հայրապետի և Գերագույն Հոգևոր Խորհրդի, շնորհավորում է Ճեմարանի վերարացումը, բարեմաղթություններ անելով Հոգևոր Ճեմարանի ուսանողության Է՛լ ավելի բարձր առաջընթացի համար։

Խմբովին երգված Տերունական աղոթքից հետո, Հոգևոր Ճեմարանի 1961—1962 ուսումնական տարվա վերարացման նվիրված հանդիսությունը վերջանում է նախագահ սրբազան հոր «Պահպանիչ»-ով։

Այնուհետև Ճեմարանի գեղեցիկ և նոր տեսչարանում տեղի է ունենում մանկավարժական ժողով վերատեսուչ սրբազան հոր նախագահության տակ։

Սեպտեմբերի 12-ին, երեքշաբթի առավոտ, ուրախ և ցնծագին հնչում է Հոգևոր Ճեմարանի ուսումնական նոր տարվա առաջին զանգը և սկսվում են կանոնավոր դասավանդությունները։



ԶՐՈՍԱՐՇԱՎ ԴԵՊԻ ԵՐԵՎԱՆ ԳԱԳԱԹԸ

Օգոստոսի 17-ին, հինգշաբթի, վաղ առավոտյան, Հոգևոր Ճեմարանի ուսանողությունը, գլխավորությամբ վերատեսուչ գերաշնորհ Տ. Հայկազուն արքեպիսկոպոս Արրահամյանի, բարձրացավ Արագածի գագաթը։ Արշավին մասնակցում էին նաև Մայր Աթոռի միաբաններ հոգեշնորհ Տ. Գրիգոր, Տ. Մեսրոպ, Տ. Ներսես, Տ. Եղիշե աբեղաները և մի քանի դասախոսներ։

Առավոտյան ժամը 5-ն է։ Զրոսարշավի նախապատրաստական բոլոր աշխատանքները ավարտվել են և խումբը պատրաստ է մեկնելու։ Մայր Տաճարում աղոթելուց հետո, տեղավորվում ենք ավտոմեքենաների մեջ և ընկնում ճանապարհ։ Ուրախ ենք բոլորս, բարձր է մեր տրամադրությունը։

Առավոտյան զով եղանակին, երբ հայրենական դաշտերի վրա նոր է սկսվում աշխատանքը, մենք կտրում-անցնում ենք Օշական, Աշտարակ, Ագարակ գյուղերը և ուղղություն ենք վերցնում դեպի Բյուրական, ուր գտնվում է մեր նշանավոր աստղադիտարանը։

Ճանապարհին, մինչև Բյուրական, կատարում ենք առավոտյան ժամերգությունը։

Ժամը 6-ին, թեթև հանգստից հետո, հրաժեշտ ենք առնում Բյուրականից։ Ավտոմեքենան այնուհետև բարձրանում է միշտ սարն ի վեր։ դեպի Արագած։ Մեր նայվածքի առաջ սփռվում է Արարատյան դաշտը, որի ֆոնի վրա՝ Արարատը իր ամբողջ վեհության մեջ։ Օդը հագեցած է լեռնային ծաղիկների անուշ բուրմունքով։ Երգում ենք ժողովրդական, հայրենասիրական երգեր և չենք զգում, թե ինչպես է անցնում ժամանակը։

Ժամը 7-ին արդեն գտնվում ենք ծովի մակերևույթից 3 250 մետր բարձրության վրա, Արագածի լճի ափին։

Նախաճաշելուց և հանգստանալուց հետո, սկսվում է հետիոտն, դժվար վերելքը դեպի քառագագաթ Արագածի հարավային կատարը։ Լճից մինչև հարավային գագաթը մեզ մնում էր 8 կիլոմետր ճանապարհ, մոտ 850 մետր բարձրությամբ։ Վերելքը այնքան էլ հեշտ չէ, քայլում ենք արահետներով, թրջում ժայռերի վրայով և առաջանում դեպի մեր նպատակակետը։

Լճից Արագածի բարձունքը նվաճում ենք մոտ երկու և կես ժամում։

Ժամը 10.30-ին արշավախումբը արդեն Արագածի հարավային գագաթի վրա է, 4 095 մետր բարձրության վրա։ Երկնամերձ այս կատարից, մեր աչքերի առաջ բացվել է Հայրենի աշխարհի չքնաղ համայնապատկերը։

Դիտում ենք հիասքանչ տեսարանը։ Զորս գագաթների կենտրոնում լայնաբերան խառնարանն է, ահռելի անդունդի խորքում։ Այնտեղ կա տակավին ամբարված ձյուն։ Հեռվում, ձորի կենտրոնում երևացող երիզը Քասախ գետն է, որը ծնունդ է առնում Արագածի խառնարանից։ Երբեմնի գործող խառնարանը, իր գույների պեսպիսությամբ, հմայիչ տեսարան է պարզում։ Գագաթի լանջերի վրա քարացել-մնացել են բազմերանգ ապարներ, ծիածանի բոլոր գույներով։ Ներքևից լսվում է ջրի հաճելի գլգլոցը։ Կատարները ծածկված են շերտ-շերտ հսկայական ճաքճքած քարերով։ Ներքևում Արարատյան դաշտն է իր անչափելի տարածությամբ, իսկ Մասիսը՝ իր սպիտակափառ գագաթով։ Նման է ափսեի մեջ դրված ահագնածավալ մի ընծայի։ Եվ այս երկու հսկաները՝ Արագածն ու Արարատը, լուռ նայում են միմյանց ու խոկում, և կարծես մեկը մյուսին պատմում խորհուրդը իր հավերժության։

Գագաթին, քարակույտերի վրա նստած, հափշտակված, հիացկոտ, դիտում ենք բնությունը բնության այդ կատարից։ Պահը հմայիչ է և սուրբ։ Այս պահին է, որ մեր ամբողջ ժողովրդի պատմությունը, իր բոլոր դրվագներով, շարժապատկերի նկարի նման,՝ գալիս-անցնում է մեր մտքի հորիզոնից։ Մեր հուզմունքները դրսևորելու համար, արտա-

ՀՈՒՆԳԱՐԻ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ՄԻ ԽՈՒՄԲ ՊՈՒՆԱՆՈՂՆԵՐ ԱՐԱՐԱՏԻ ՀԱՐԱՎԱՅԻՆ ԿԱՅՏԱՐԻՆ

ՀՈՒՆԳԱՐԻ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ՄԻ ԽՈՒՄԲ ՊՈՒՆԱՆՈՂՆԵՐ ԼՈՒՍԱՎՈՐՅԱՆ ԱՍՏՂԻ ՏԱԿ, ԱՐԱՐԱՏԻ ԿԱՅՏԱՐԻՆ;

սանում ենք Հովհաննես Թումանյանի «Լուսավորչի կանթեղը»։ Ջմայլելի այս բանաստեղծությունը, մանավանդ այստեղ, Արագածի կատարին, հնչում է այնքան ճշմարիտ, այնքան հուզիչ և թելադրիչ։ Մեր հոգու աչքերով, իրավ որ տեսանք անմար կանթեղը Ս. Լուսավորչի։

Ավելի քան մի ժամ մնալուց հետո Արագածի կատարին, Լուսավորչի աստղի տակ, վերադարձանք, մի անգամ ևս հեռու հորիզոնները դիտելուց հետո։

Վերադարձը շատ հեշտ եղավ. երկու և կես ժամից մեր նվաճած բարձունքը մեկ ու կես ժամից տեղի տվեց։

Լճի ափին արդեն վառվում էր կրակը։ Քիչ հետո խորոված պատրաստ էր։ Բոլորս միասին մեծ ախորժակով վայելեցինք Ասուծո բարիքները։

Ավելի քան 4—5 ժամ մնացինք լճի ափին, հանգստացանք, Ճեմարանի ուսանողները լողացին և խաղեր կազմակերպեցին։

Արագածի գեղածիծաղ և վճիտ լիճը ունի շուրջ 7 քառակուսի կիլոմետր մակերևույթ. առավելագույն խորությունը 15 մետր։ Կանաչազարդ լեռների գրկում տարածվող այս լիճը, որպես կապույտ աչք, իր վճիտ հայելու մեջ ցոլացնում է երկնքի անհունությունը։

Երեկոյան ժամը 7-ին, հրաժեշտ առինք Արագածից. անմոռանալի տպավորություններով։

Խաղաղ երեկոն իջել էր արդեն Արարատյան դաշտի վրա և հոգնած մշակները վերադառնում էին տուն հանգստանալու, երբ իջանք սարն ի վար։

Գոհունակությամբ և լի սրտերով վերադարձանք Մայր Աթոռ։

Երջանիկ ենք, որովհետև հավատում ենք, թե Լուսավորչի կանթեղի լույսը մի անգամ ևս բոցավառվեց մեր հոգիների մեջ։

ՆԵՐՍԵՍ ԱՐԵՂԱ ՊՈՂՈՍՅԱՆ

ՍՓՅՈՒՌՔՈՒՄ

ԱՊՐԻԼՅԱՆ ՄԵԾ ԵՂԵՌՆԻ ՆԱՀԱՏԱԿՆԵՐԻ ՀՈՒՇԱՐՁԱՆԻ ԲԱՑՈՒՄԸ ԲՈՒԵՆՈՍ-ԱՅՐԵՍՈՒՄ

Ապրիլյան մեծ եղեռնի 46-րդ տարեդարձի առիթով, ապրիլի 23-ին, Բուենոս-Այրեսում, համադգային հանդիսությամբ, «ի հերկայության ազգային մարմիններու, մամուլի ներկայացուցիչներուն և կոթողը իրականացնող բարերարներուն՝ պր. Պողոս և օրիորդ Սիրանուշ Արզումանյան հարազատներուն», կատարվել է մեծ եղեռնի նահատակների հուշարձանի խորանի սրբադրումն ու օծումը։

Հանդիսությանց նախագահել է Հարավային Ամերիկայի հայոց Կաթողիկոսական պատվիրակ գերաշնորհ Տ. Բարդեն Էպիսկոպոս Ապատյանը, որը պատարագել է և բարոգել, ոգեկոչելով խնկելի հիշատակը ապրիլյան նահատակների։

Այնուհետև տեղի են ունեցել Հոգեհանգիստ և նահատակաց հիշատակի օր։

Բուենոս-Այրեսի հայոց Կենտրոնական վարչության խորհրդի փոխ-նախագահ պր. Գեորգ Սարաֆյանը հանդես է եկել հուզիչ ճառով, ինչպես նշում է Ապրիլյան հուշարձանի մամուլի դիվանի պաշտոնական հաղորդագրությունը։ Բանախոսը «անդրադարձավ հայության ապրած սարսափներուն, կոթողի նշանակության և նվիրատուներու ժեստի գեղեցկության։ Հաղարավոր բազմություն խոր թախիծով և տամկացած աչքերով հետեւեցավ բացօդյա սրբազան արարողություններուն, որոնք պատկերասփյուռով նույն երեկոյան ներկայացվեցան Արժանտինի ամբողջ ժողովուրդին։

Ապա հաղորդագրության մեջ ասվում է. «Երկուշաբթի, 24 ապրիլ, Բուենոս-Այրեսի ամբողջ հայությունը, շատ աննշան բացառությամբ, բանթող ընելով մասնակցեցավ հրապարակային երեք արտահայտություններու։

Մայրաքաղաքի հայկական բոլոր եկեղեցիներուն, ժողովարաններուն մեջ տեղի ունեցան Հոգեհանգստյան պաշտամունքներ։ Բացառիկ շուքով Հոգեհանգիստ կատարվեցավ Ս. Գրիգոր Լուսավորիչ Մայր Եկեղեցիի մեջ կառուցված Հուշարձանին առջև, ուր դարձյալ հապարավորներ արտասվալի աչքերով հետեւեցան արարողություններուն, որոնք կրկին նույն երեկոյան ձայնասփիորվեցան ամբողջ երկրին մեջ։

Կրոնական արարողություններեն հետո ժողովուրդը ամեն կողմերե ուղղվեցավ դեպի Արժանտինի ազգային մեծ հերոս զորավար Սան Մարտինի հրապարակ, ուր Հայ Մարմնամարզական Ընդհանուր Միության և Մխիթարյան վարժարանի սկաուտները ծաղկեպսակ մը զետեղեցին աղատարար զորավարին արձանին վրա։

Խորապես տպավորիչ էր պահը, երբ դիվորականներու պատվո ջոկատը, փողի դալարուն և սարսռազդեցիկ հնչյուններով, ասպնջական վեհանձն Արժանտինի մեծարանքի արտահայտությունը բերավ անոնց, որոնք աղատության, մարդկային արժանապատվության համար Գողգոթաներուն ամենեն տաժանելին բարձրացան։

Կրոնական դասուն ներկայացուցիչներով շրջապատված Ապատյան սրբազանին «Հոգւոցս»-ով և ներկաներուն մասնակցությամբ երգված «Հայր մեր»-ով փակվեցավ սույն հուզիչ արարողությունը։

Նույն օրը ժամը 18-ին «Հայ Կեդրոն»-ի մեջ տեղի ունեցավ սգահանդեսը, ուր խո-

ԱԿԱԴԵ

սեցան հայ մամուլի ներկայացուցիչներ ու Կաթողիկոսական պատվիրակ սրբազան հայրը։ Բոլոր խոսողներն ալ օրվան խորհուրդին համապատասխան հոգվով և համահայկական եղբայրության զգացումով արտահայտվեցան։

Հանդեսի գեղարվեստական բաժնին իրենց մասնակցությունը բերին տիկին Հ.

ղաց և սիրելի հարազատներուն. դում մեկ անգամ ևս կնավորեցնեմ անոնց անմահ հիշատակը և արդար կերպով կարժանանամ ամբողջ արժանտինահայության Երախտագիտության։ Դարեր յարուցակ. հայ մարդիկ կուգան և կանցնին ձեր սրտի և հոգիի ներքը հանդիսացող այդ կորոյի առջևեն, և միտ կվերհիշեն ապրիլյան մեր սուրբ նահատակ-



ԱՊՐԻԼՅԱՆ ԵՂԵՌՆԻ ՆԱՀԱՏԱԿՆԵՐԻ ՀՈՒՇԱՐԱՆԸ ԲՈՒԵՆՈՍ-ԱՅՐԵՍԻ ՀԱՅՈՑ Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԻՉ ԿԵՂԵՑՈՒ ՐԱԿՈՒՄ

Թերզյան՝ արտասանություն, ակոմիտաս երգչախումբը և երգչուհի տիկին Վիկտորյա Սևանը։

Վեհափառ Հայրապետը, օգոստոս 17 թվակիր իր կոնդակով, օրհնելով նվիրատուների ազնիվ, ազգանվեր ժեստը, գրում է. «...Ազգին պարգևելով այդ նվիրական հուշարձանը ի հիշատակ ձեր նահատակ ծնողներ և հայ ժողովուրդի դժբախտ անցյալը, և իրենց հայացքը դարձնելով դեպի վերածնած ու վերաշինված մեր նոր Մայր Հայրենիք, կմխիթարվին հոգեպես և փառք կուտան մեր նոր կայինն։

Բյո՜ւր հարգանք, խո՜նկ ու աղո՜թք ապրիլյան մեր նահատակների խնկելի և սուրբ հիշատակին։

ՔԵՆՏԲԵՐԻԻ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԵՎ ՀԱՄԱՅՆ ԱՆԳԼԻՈ ԵՊԻՍԿՈՊՈՍԱՊԵՏ ԵՎ ՄԻՏՐՈՊՈԼԻՏ ԴՈԿՏՈՐ ԱՐԹՈՒՐ ՌԵՄԶԻՆ ԳԱՀԱԿԱԼՈՒԹՅՈՒՆԸ ՔԵՆՏԲԵՐԻԻ ՄԵՋ

Երեքշաբթի, 1961 հունիս 27-ին, հետմիջօրեի ժամը 2.30-ին, Քենտրբերիի աթոռանիստ Մայր Տաճարին մեջ, անգի ունեցավ համայն Անգլիո Եպիսկոպոսապետ և Միտրոպոլիտ դոկտ. Արթուր Մայքլ Ռեմզիի գահակալության հաղիսավոր արարողությունը, ի ներկայության քրիստոնյա բարձրաստիճան հոգևորականներու, պետական բարձր անձնավորությանց և բազմահազար հավատացյալներու։

Բացի Անգլիկան Եկեղեցվո ներքին թեմական եպիսկոպոսներեն, թվով ավելի քան հիսուն, փութացած էին նաև Երուսաղեմի արքեպիսկոպոսը, Նյու-Յորքի, Բոստոնի, Հորդանանի և Սուդանի եպիսկոպոսները։ Կոստանդնուպոլսո Տիեզերական Պատրիարքությունը կներկայացներ Թիվատիրի միտրոպոլիտը, Աղեքսանդրիո Հույն Պատրիարքությունը՝ Կարկեդոնի եպիսկոպոսը, Ռումանիո Եկեղեցին՝ Մոլդավիո արքեպիսկոպոսը, Մոսկվայի Պատրիարքությունը՝ Բոգոյսկի արքեպիսկոպոսը, Հունաստանի ուղղափառ Եկեղեցին՝ Հոդոսի եպիսկոպոսը։ Անտիոքի Պատրիարքությունն ու Բուլգարիոս Եկեղեցին ևս ունեին իրենց պաշտոնական ներկայացուցիչները։

Հանուն Ամենայն Հայոց Կաթողիկոս Նորին Ս. Օծություն Տ. Տ. Վազգեն Ա-ի, Հայաստանյայց Առաքելական Եկեղեցին կներկայացներ Անգլիո Հայոց Հայրապետական պատվիրակ գերաշնորհ Տ. Պսակ եպիսկոպոս Թումայանը, որ եպիսկոպոսական զգեստավորումով ներկա եղավ օրվան արարողության, ընկերակցությամբ հոգեշնորհ Տ. Զավեն վարդապետ Արղումանյանի։

Առավոտյան ժամը 11.30-ին, հրավիրյալները հատուկ շոգեկառքով մը մեկնեցան Լոնդոնեն դեպի Քենտրբերի և հետմիջօրեի ժամը 1.30-ին առաջնորդվեցան տեղվույն աթոռանիստ Մայր Տաճարը։ Ուրախություն էր տեսնել տարիզերական խումբը եկեղեցականներու, եկած տարբեր ազգություններեն, տարբեր եկեղեցիներեն և տարբեր հարանվանություններեն և հավաքված Քրիստոսի Եկեղեցվո միության մեջ. բոլորն ալ հրճվանքով հանդիսավոր այս օրվան մեջ անդամ մը ևս պիտի հաստատեին Քրիստոնյա Եկեղեցվո միության կարիքը, մասամբ ցրված և մեծ մասամբ կորսված իր անդամներուն միջև։ 1205-են ի վեր 750 տարվան պատմություն ունեցող Գահին վրա եկած էր բազմելու Քենտրբերիի 100-րդ գահակալը, 56-ամյա Արքեպիսկոպոս Արթուր Մայքլ Ռեմզի, իր պաշտոնի միտրոպոլիտական իրավունքներով և իշխանությամբ։

Հունիսի 29-ին Քենտրբերիի Արքեպիսկոպոսին և իր տիկնոջ կողմե ընդունելություն տարբվեցավ ի պատիվ հրավիրյալ օտար Եկեղեցականներուն, անգլիկան թեմական եպիսկոպոսներուն և պետական անձանց։ Հետմիջօրեին, Լամբեթի ընդարձակ պարտեզներուն մեջ, ներկաներ պատվվեցան թեյով, իսկ երեկոյան ալ հյուրասրահին մեջ՝ ընթրիքով։ Պատվասիրության ընթացքին դոկտ. Մայքլ Ռեմզի խոսք առնելով շնորհակալություն հայտնեց ներկա օտար Եկեղեցիներու ներկայացուցիչներուն։ Ապա անդրադարձավ իր նախորդին՝ դոկտ. Ֆիշերի կատարած ձեռներեց գործունեության և մաղթեց, որ միության քայլը, որ առնված էր անոր կատարած վերջին այցելություններով, դառնա հուսալից և արդյունավոր։

Այս հյուրասիրության ընթացքին, հետաքրքրական էր տեսնել ներկայությունը Լիվերպուլի հռոմեական կաթոլիկ եպիսկոպոսին։ Պատվասիրողներուն մեջ, հանուն Նորին Ս. Օծություն Տ. Տ. Վազգեն Ամենայն Հայոց Կաթողիկոսին, ներկա էր գերաշնորհ Տ. Պսակ եպիսկոպոս, որուն կընկերանար Տ. Զավեն վարդապետ։

ՁԱՎԷՆ ՎԱՐԴԱՊԵՏ ԱՐՋՈՒՄԱՆՅԱՆ

ՍՈՒՐԲ ԳՐՔԻ ԱՆԳԼԻԵՐԵՆ ՆՈՐԱԳՈՒՅՆ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅԱՆ ԱՌԻԹՈՎ

(«THE NEW ENGLISH BIBLE—NEW-TESTAMENT»)

1961 թվականի մարտ 15-ի երեկոյան ժամը 6-ին, Լոնդոնի Ուեստմինիստերի աբրայարանին մեջ մասնավոր պաշտամունք և հանդիսություն տեղի ունեցավ անգլիերեն Ս. Գրքի «Արտոնյալ թարգմանության» հրատարակության 350-րդ տարեդարձին առթիվ։

Հոբելյանական այս հանդիսությունը կզուգադիպեր սակայն Ս. Գրքի նոր Կտակարանի բաժնին անգլիերեն նորագույն թարգմանության հրատարակության, որ տասներեք տարիներու անխոնջ աշխատանքի մը հետք, նախորդ օրը, մարտ 14-ին, հրապարակ ելած էր «THE NEW ENGLISH BIBLE, N. T.» խորագրով։ Եկեղեցական պաշտամունքին կնախագահեր Քենտրբերիի Արքեպիսկոպոս դոկտ. Ջեոֆֆրի Ֆիշեր, որ շրջապատված էր զանազան հարանվանություններ ներկայացնող հոգևորականներե և մանավանդ թարգմանիչներեն, որոնք իրենց աշխատանքի բաժինը բերած էին անգլիերեն նոր Կտակարանի նորագույն թարգմանության գործին։ Արարողության ավարտին, թարգմանչական գործին կեղրոնական հանձնախումբի նախագահ, Ուեստմինիստերի եպիսկոպոս դոկտ. Ալվին Վիլյամսը ներկայացուց տասներեք տարվան աշխատանքի պտուղը, անկե մեկական օրինակ հանձնելով թարգմանիչներուն և աշխատակիցներուն, որուն ի պատասխան Քենտրբերիի Արքեպիսկոպոսը հայտարարեց. «Թարգմանի՛չ եղբայրներ, փա՜ռք և գոհությո՜ւն ամենակալին Աստուծո այն աշխատանքին համար, զոր կատարեցիք թարգմանելով Իր խոսքը։ Այժմ կընդունինք այս գիրքը և կհանձնենք եկեղեցվո աստվածային դատաստանի ծառայության։

Մեր նպատակը չէ երբեք այս սեղմ տողերով գնահատել կատարված թարգմանչական աշխատանքը, մտնել փորձելով սուրբգրական բնագրային քննադատության կալվածեն ներս, կամ փնտռել, թե որքան հարազատությամբ պահված է նոր Կտակարանի սկզբնական բնագրին իմաստն ու բառերուն ետին գտնվող հայտնյալ խորհուրդը օրքան անաղարտ մնացած. ոչ ալ

պիտի ուզենք կարծիք հայտնել արդեն իսկ գնահատված արդիական և այժմեական անգլիերեն լեզվի մասին, որով թարգմանված է ներկա աշխատությունը։ Փափագելի է այսուհանդերձ արձագանքել պատմական կարևոր դեպքի մը, որ 350 տարվան հետքեն մը եւ թ կենդանացնե զգենք մը և հաղորդակցության միջոց մը, որ իր հստակությամբ և որոշակի արտահայտությամբ կրցած է նվաճել լավագույն թարգմանություն մը», ինչպես կորակի Վիլյամ Բարքլեյ։

«Անգլիերեն նոր Սուրբ Գրքի» նախաբանեն և ներածականեն կհասկնանք, թե կատարված գործը որքան անհրաժեշտություն մրն էր Մեծն Բրիտանիոյ եկեղեցիներուն համար և թե ինչ նախանձախնդրությամբ և բծախնդիր քննությամբ աշխատանք տարված է զայն ի դլուխ հանելու համար։ Անգլիոյ քրիստոնյա զանգվածին համար 1661-ի «Արտոնյալ թարգմանություն»-ը նկատված է միշտ բուն Ս. Գիրքը, սկիզբ առած 1603-ին, Ջեյմս թագավորի օրով։ Վերծանումը այս թարգմանության, «Վերանայված թարգմանություն», կատարված է 1881-ին, որմեն ետք վավերական նոր թարգմանություն տեղի ունեցած չէր։ Այս նորագույն թարգմանությունը հետևաբար կհաջորդե 1661-ի թարգմանության։

«Նոր Կտակարանի այս թարգմանությունը,— կկարդանք ներածականի մեջ,— որուն պիտի հաջորդի թարգմանությունը Հին Կտակարանի և պարականոն գրքերու, ձեռնարկ մրն է, իրեն առարկա ունենալով հունարեն բնագրի անգլիերեն հարապատ թարգմանություն մը, որ ըլլա ընթացիկ և ժամանակակից, մատուցված անգլիերեն լեզվով Ս. Գրքին ծանոթ և անծանոթ ընթերցողներուն։ ...Մեր պարտականությունը կարևոր տարբերությամբ մը կներկայանա մեզի յուրաքանչյուր 1881-ի վերծանողներու մտահոգության... այսօր իրենց գործածած լեզուն որոշապես կներկայանա որպես հնամենի և որպես նվազ հասկնալի լեզու... Ներկա գործը վերծանում մը չէ երբեք 1661-ի թարգմանության, այլ հարապատ և նոր թարգմանություն մը, որուն մեջ տեղ գտած են ժամանակակից և այժմեական իմաստ ունեցող խոսքեր և արտաներ, որոնք արտահայտած են հունարենին ճշգրիտ իմաստը։ Ներկա թարգմանիչները չանցած են հունարեն կառուցվածքներ և խոսքեր փոխարինել արդի անգլիերենով։

Նոր Կտակարանը հրատարակված է Օքսֆորդ և Քեյմբրիջ համալսարաններու հրատարակչական տան կողմե, հովանավորությամբ և մասնակցությամբ Մեծն Բրիտանիոյ անգլիական բոլոր եկեղեցիներու, բացի Հռոմեական Կաթոլիկ եկեղեցիներու Հրատարակության հաջորդող օրերու ընթացքին գնահատական ջերմ արձագանքներ ելնեցան զանազան թերթերու մեջ, թե «առաջին առիթն է այս, երբ եկեղեցվո առաջնորդներ հավաքարար կկատարեն Ս. Գրքի նոր թարգմանությունը առանց հարանվանական և վարդապետական խորության»։

Յորքի արքեպիսկոպոս դոկտ. Ռեմպի, որ նշանակված է որպես Արքեպիսկոպոս Քենտրբրիի, հայտարարեց. «Վստահ եմ, որ Ս. Գրքի թարգմանությունը պիտի օգնե անոնց, որոնք զայն կգործածեն, ավելի լավ հասկնալու համար Աստուծո խոսքը և զգալու Անոր պատգամին ուժը։ Կհավատամ, որ այս նոր թարգմանությունը պիտի ծառայե բարձրացնելու թիվը Ս. Գրքի ընթերցողներուն։ Կակնկալեմ տեսնել անոր գործածությունը եկեղեցիներու և տուներու մեջ»։ Քենտրբերիի Արքեպիսկոպոս դոկտ. Ֆիշեր ևս ըսած է, թե «Արտոնյալ թարգմանություն»-ը եղած է թարգմանության գերագույն նվաճումներեն մին և միշտ պիտի մնա որպես լավագույն նմուշը անգլիերեն լեզվի ուժի և մեծության։ Բայց որովհետև,— կշարունակե ան,— անգլիերենն լեզուն եղած է միշտ կենդանի և աճող լեզու մը հաղորդակցության համար, և նաև որովհետև աննկատելի կերպով փոփոխությանց ենթարկված է վերջին տարիներուն, Ս. Գրքի նոր թարգմանության կարիքը կզգացվեր»։ Նորին Սրբազնությունը կհավատա, թե թարգմանիչները դիմակալած են անհավատալիորեն դժվար պարտականություն մը և հաղթականորեն զայն ի դլուխ հանած։ Վերջապես կնկատվի, որ Ս. Գրքին կարևորությունը չէ կայացած սկզբնապես իր դրական կոթող մը ըլլալուն մեջ. այլ որպես հավատքի և իրական կյանքի գերագույն ուղեցույց, եղած է ապրյուրը քրիստոնյա աստվածաբանության, որոնց համար որպես անհրաժեշտություն կհետևի «հասկնալի» Ս. Գրքի մը ներկայացումը։ «Ս. Գրքի ձայնը չէ, որ մեղ կհետաքրքրե, այլ իմաստը։

Ըսինք որ տասներեք տարվան պատրաստության շրջան մը բոլորած է ներկա թարգմանությունը։ Համաշխարհային երկրորդ պատերազմի օրերուն Օքսֆորդ և Քեյմբրիջ համալսարաններու բանասերներուն կողմե ծրագրվեցավ 1661-ի թարգմանության վերծանումը կատարել. շուտով ոակայն նկատվեցավ, որ կարիքը կկայանար ավելի նորագույն թարգմանություն մը ունենալուն մեջ, քան թե կրկին վերծանում մը։ 1946-ին, հետևաբար, Սկոտիոյ եպիսկոպոսական եկեղեցիի ընդհանուր ժողովը այս իմաստով

առաջարկ մը բերավ, ուղղված Մեծն Բրիտանիոյ եկեղեցիներուն. մտահոգության գրավոր առարկան այս առաջարկին մեջ այն եղած է, թե եկեղեցվո դործը կկաղա Ս. Գրքի անդործածելի լեզվին պատճառավ։

Հետեւանք տրվելով եղած առաջարկին, եկեղեցիներ համախորհուրդ հատկացուցին իրենց ներկայացուցիչները՝ հարցը քննելու և լուծման մասին խորհրդակցելու համար։ 1947-ին տեղի ունեցավ առաջին նիստը Բարգմանչական աշխատանքի դործադիր հանձնախումբին։ Հանձնախումբը բաղկացած է Անգլիական եկեղեցվո, Սկովտիական Եպիսկոպոսական եկեղեցվո, Ժողովական, Մկրտչական, Երիցական եկեղեցիներու, ինչպես նաև Կալլեսի երկրի՝ Ուելսի և Իռլանդայի եկեղեցիներու ներկայացուցիչներն։ Իրենց մասնակցությունը բերած են նաև Անգլիական և Սկովտիական Ս. Գրոց ընկերությունները։

Հանձնախումբը նշանակած է Բարգմանչական երեք աշխատանքի մարմիններ, մին նոր Կտակարանի, մյուսը Հին Կտակարանի, և երրորդը Պարականոն գրքերու։ Անդամներեն բոլորն ալ կներկայանան միջազգային չափանիշով սուրբգրական բանասերներ և համալսարանական դասախոսներ։ Նշանակված է նաև մարմին մը գրական խորհրդատուներու, քննարկելու համար պատրաստված Բարգմանությունները ոճային և լեզվական կալվածքն ներս։

Վերջին հինսամյակին Ս. Գրոց բնագրային քննադատությունը նոր լույս սփռեց հնագույն հույն բնագիրներու ճշգրիտ իմաստին վրա։ Ներկա Բարգմանիչները նկատի առին այս կարևոր նվաճումը և իրենց նոր ու հարազատ Բարգմանության մեջ գործածեցին կարգ մը ասություններ կամ առումներ արդի անգլիերենով, պահելով հանդերձ հունարենին իմաստը կարելի հարազատությամբ։ Հանձնախումբը 57 նիստեր ունեցած է յուրաքանչյուրը 3 օր տեղությամբ։ Առաջին նիստը տեղի ունեցած է 18 դեկտեմբեր 1948-ին, իսկ վերջինը՝ 18 դեկտեմբեր 1958-ին։ Յուրաքանչյուր անդամ նախ պատրաստած է Բարգմանության իր բաժինը և մատուցած մյուս անդամներուն առ ի քննություն։ Ապա հանձնախումբը միասնաբար քննության առարկա դարձուցած է զայն համար առ համար և նախադասություն առ նախադասություն ու ճշգրտագույն անգլիերենով ձևի բերած։ Խնդրո առարկա հատվածները իրենց լրումին հասած են Բարգմանիչներու և գրական-լեզվական քննիչներու համաձայնությամբ։ Հունարեն բնագրեն զատ նկատի առնված են Ս. Գրքի նորագույն բոլոր քննական հրատարակությունները և այլ բանասիրական աշխատություններ, ձեռագիրներու տարբերակներ, սկսյալ ծանոթ հնագույն ձեռագիրներեն և մաղաղաթյա պատառիկներեն։

«Հասկնալի» և «հստակ» լեզվով կատարված Բարգմանության արագ ակնարկի մը ընդմեջեն կարելի է նկատել հայտնի օրինակներ, որոնք կարդարացնեն հիշյալ որակումները։

Հովհաննու Ավետարանը կբացվի հետեւյալ համարով. «Երբ ամեն բան սկիզբ առավ. Բանը արդեն գոյություն ուներ»։

Թեև կառարկվի ոմանց կողմեն, որ այս ձևով Սենդոց գրքի արձագանքը կաղոտի և խորհուրդը կնվազի։

Սակայն շարունակենք. «Բանը ընակեցավ Աստուծո հետ, և Աստված ինչ որ էր Բանն ալ նույնն էր։ Բանը, հետեւաբար, Աստուծո հետ էր սկիզբեն, և Անոր միջոցավ ամեն ինչ գոյացավ· ոչ մեկ բան առանց Անոր գոյացավ։ Ամեն գոյացած բան կյանքի կոչվեցավ իր կյանքով, և այդ կյանքը մարդոց լույսն էր»։

Կարդ մը հատվածներ հասկնալի կդառնան առաջին անգամ ըլլալով, կըսե պրոֆ. Զադվիք։ Այսպես, Հովհաննու Ավետարանի ԺԶ գլխի 10-րդ համարը նախկին Բարգմանության մեջ կկարդանք. «Մխիթարիչը պիտի հանդիմանե աշխարհը արդարության համար, որովհետև ես կերթամ առ Հայր և դուք դիս չեք տեսներ այլեսս»։

Նորագույն Բարգմանության մեջ համարը հետեւյալ ձևով կտրվի. «Մխիթարիչը պիտի հանդիմանե զանոնք—աշխարհը—թե իրավունքը իմ կողմս է, ցույց տալով, որ ես կերթամ առ Հայր անմիջապես երբ կբաժնվիմ ձեզմեն»։

Հատկանշական Բարգմանություն մըն է նաև Մատթեոս ավետարանչի «Երանի»-ներուն ընդհանուր ոճը և մասնավորաբար Ե գլխուն 3-րդ համարը։ Նախկին Բարգմանության մեջ կկարդանք. «Երանի հոգիով աղքատներուն, որովհետև անոնց կպատկանի Երկնքի Թագավորությունը»։

Նորագույն Բարգմանության մեջ կկարդանք. «Որքան երանելի են անոնք, որոնք դիտեն, թե աղքատ են»։

Հոս դաղափարին հստակությունը կուգա տրված վիճակի մը՝ աղքատության գիտակցության իրողությունեն, որ կհամապատասխանե «հոգիով աղքատ» բացատրությանն։ Թեև հունարեն բնագրին մեջ գործածված է τῷ πνεύματι «հոգիով» բառը, սակայն նորագույն Բարգմանությունը չանցած է հնագույն իմաստը տալ բառին, այնպես ինչպես ան կգործածվեր։

Ղուկասու Ավետարանի ԺԱ գլխի 47—48 համարները հետեւյալ ձևով Բարգմանված

են. «Աւաղ, դուք կկառուցանեք այն մարգարէներուն դերեզմանները, զորս ձեր հայրերը սպաննեցին, և այս ձեւով կվկայեք, որ դուք համաձայն եք ձեր հայրերուն կատարած արարքին. անոնք ոճիրը գործեցին և դուք ալ դերեզմանները կհայթայթեք»։

Բ Կորնթացվոց Գ գլխի 15—18 համարներու թարգմանության առիթով, հստակություններ և միտք բանին տալու նպատակով, ավելորդ բառեր գործածված են և այս ձեւով լուսաբանված է ելից ԼԴ 35-ի հին կտակարանային մեջբերումը, բաղդատարար նախորդ թարգմանությանց. «Սակայն մինչև այս օրս, ամեն անգամ որ Մովսեսի օրենքը կկարդացվի, քող մը կիջնի դայն լսողներու միտքին վրա. թեև, ինչպես Ս. Գիրքը կըսե Մովսեսի մասին, «ամեն անգամ որ ան Տիրոջ դայնա, քողը կվերնա։ Արդ, Տերը, որուն մասին այս հատվածը կխոսի, Հոգին է. և հոն, ուր Տիրոջ Հոգին կա, հոն ազատություն կա։ Եվ որովհետև մեզի համար մեր դեմքերուն առջև քող չկա, բոլորս կցոլացնենք Տիրոջ փառքը նման հայելիի ընդմեջեն, այս ձեւով Իր նմանության բերված կըլլանք փառքն մինչև փառք. այսպես է Տիրոջ, Հոգիին ազդեցությունը»։

Ղուկասու Ա 46—55 համարները թարգմանված են այսպես. «Եվ Մարիամ ըսավ. «Խոսե, ով անձս, Տիրոջ մեծության մասին. ցնծա և ուրախացիր իմ Փրկիչ Աստուծով. ինչպիսի սիրով Ան նայեցավ իմ ազախնի խոնարհության վրա։ Որովհետև այս օրեն սկսյալ պիտի օրհնեն զիս բոլոր սերունդները. ինչ սքանչելի կերպով Ան, հզոր Տերը, բնակեցավ իմ հետս։ Սուրբ է Իր անունը. Իր ողորմությունը կուգա սերունդն սերունդ դեպի անոնց, որոնք երկյուղած են Իրեն հանդեպ. Իր Աչով կատարված գործերը կհայտնեն Իր ուժը. Ան հեռացուց մտքով և սրտով ամբարտավան մարդիկը, կասեցուց իրենց պահերուն վրա աշխարհիկ ուժերը, և խոնարհները բարձրացուց։ Անոթիները դոհացուց բարիքով և հարուստները դատարկացուց։ Ան պաշտպան հանդիսացավ Իր ծառային Իսրայելի, հաստատ պահելով Իր խոստումը մեր նախահայրերուն. Ան չէ մոռցած ողորմություն ցուցնել Աբրահամի և անոր զավակներու զավակներուն, հավիտյանս հավիտենից»։

Հետաքրքրական է, թեև սակայն ոչ սրդարանալի, չափի և կշիռքի, ժամանակի և եղանակի անդլիականի վերածումը։ Այսպես, Մարկոսի ԺԴ 5-ի «ծումի դրծածված անուշահոտությունը կարելի էր ծախել «երեսուն ոսկիիս», փոխան «երեք հարյուր դահեկանի»։ «Քանքարները» համապատասխան առակին մեջ վերածված են «ոսկիով լի պարկ»-երու։ Չար ծառային «տասը հազարս՝ բյուր քանքարի պարտքը վերածված է «միլիոններու հասնող» պարտքի։ Գիշեր վան չորրորդ ժամը վերածված է «առաւոտյան չորսեն վեցի միջև»։

Ներկայացման ձևին մեջ նորություն են ենթագրիագիրներն ու գլխաբաժանումները, որոնք նպատակ ունին դյուրություն ընծայելու Ս. Գրոց ուսանողին մասնավորապես և հասարակ ընթերցողին ընդհանրապես։ Համարթիվերը կդտնվին ձախ էջի. ձախ լուսանցքին և աջ էջի աջ լուսանցքին վրա։ Կարելի է ըսել, թե խորքին մեջ գործը չի ներկայանար հանդիսավոր ճոխությամբ կամ երկյուղալից խորհրդավորությամբ, քան իր անմիջականությամբ և դեմհանդիմանականությամբ։ Ընդհանուր գնահատանքը ուղղված է թարգմանության դործնական հանգամանքին, անոր լավագույնս, օգտակարագույն և դյուրագույն ձևով կարդացվելու առավելության քան թե ոճի վսեմության և աստվածային պատգամների խորհրդավոր արտահայտության։ Անոր օգտակարության արձագանքը պիտի լսվի ավելի քան քան առ հարյուր ոչ քրիստոնյա անդլիացի դանդվածի սրտեն։

Հ. Ճ. ՍԻՐԻՒՆԻ

ՕՐՄԱՆՅԱՆ ԵՎ ԻՐ ԺԱՄԱՆԱԿԸ*

Հիմա, սովյալներու տեղ, ցարդին գոհերը կային, որբերու և այրիներու հսկա բանակ մը, որ Պոլսեն ճար կսպասեր։ Ավելի ահավոր էին հիմա կարիքները և միջոցները ավելի դուլդն։ Պետք էր կազմակերպել նպաստի գործ մը լայն չափերու մեջ, և այդտեղ ևս արգելքները քիչ չէին։

Եվ սակայն այդ գործը գլուխ ելավ։ Մարմին առավ Նպաստից հանձնաժողովը։

Նպաստի գործը փառքի տիտղոս մը կսեպեն իրեն համար Օրմանյան։ Ան հպարտ է, որ իր պատրիարքության տարիներուն ոչ մեկ ճիգ խնայած չէ օգնության հասնելու համար կարոտյալներուն, մանավանդ գավառի կարոտության։ Իր մեծագույն հաջողություններեն մեկը կհամարե նախ տեղի տված չըլլալ պետական խուլընդոտներու՝ հանրային գործին դիմելու առեն։ Հետո, հպարտ է, որ կրցավ շարժման մեջ դնել հանրային խղճմտանքը՝ հաց հասցնելու համար գավառ։

Վայրկյաններ կան ժողովուրդներու կյանքին մեջ, երբ ազգը մեկ զանգված կդառնա։ Հոգեկան պատնեշները կքանդվին դասերու միջև. «Աչքե հեռու, սրտե հեռու» խոսքը պահ մը իր ուժը կկորսնցնե, և գավառի ցավերը կերթան արձագանք գտնել ամենուրեք։ Այդպես եղավ ցարդերեն հետո ալ, երբ հայկական գավառը կգալարվեր կարիքներու ճանկին մեջ, օջախը մարած, մառանը դատարկ, փողոցները որբերով լեցուն։

Այդ պահուն էր, որ Օրմանյան կստիպվեր դիմել կուշտ մարդոց խղճմտանքին։

Նպաստի գործը կարելի չէր գլուխ հանել սակայն տեղական միջոցներով, ինչպես որ կարելի չէր եղած Սովելոց հանձնաժողովի ատեն ալ։ Հարկ եղավ դիմել ոչ միայն Թուրքիո, այլև արտասահմանի հայության ալ կարեկցությանը, և արդարև ամեն տեղ օգնություն հասավ։ Օրմանյանի տված հաշիվներեն կերևա, որ Պոլիսն ու ունևոր գավառները չեն կրցած լայն մասնակցություն բերել։ Եվրոպայի, Ամերիկայի և մյուս շրջանների հայ գաղութներն ալ մեծ գումարներով չէ որ կերևան նպաստի ցուցակներուն մեջ։ Փոխարեն՝ Արևելյան Հայաստանի հայությունը ավելի առատաձեռն է եղած։

Օրմանյան պարծանքով կհիշե, թե կրցած է այդ կերպով 82 447 ոսկի հավաքել, գումար, որ գերազանցած է նախընթաց որևէ հանգանակություն, մեջն ըլլալով և Սովելոց հանձնաժողովինը, ավելի քան տասնամյակ մը առաջ։

Օրմանյանի պատրիարքության շրջանին հավաքված սույն 82 447 ոսկիեն 12 տարվան ընթացքին ծախսված է 79 389 ոսկի, որով սնդուկի մեջ պատրաստ կմնար, հրաժարման օրը, 3049 ոսկի։ Ծախսված այս գումարեն գավառի կարիքներուն հատկացված է մեծագույն մասը, այսինքն 72 989 ոսկի։

Արդարև, գավառի կարոտյալներուն իբր նպաստ բաշխված է 27 858 ոսկի (Վանի կարոտյալներուն՝ 5980, Մուշի, 3843, Բաղեշի՝ 1476, Զեյթունի՝ 1253, և այլն)։

Ջանագան կուսակալությանց մեջ բացված են 36 որբանոցներ, որոնցմե 11-ը՝ Կիլիկիո, 7-ը՝ Վանի, 5-ը՝ Բաղեշի և 13-ը՝ ուրիշ կուսակալությանց մեջ, և սոնց համար ծախսված է 30 048 ոսկի (Մուշի որբանոցնե-

* Շարունակված «Էջմիածին» ամսագրի 1961 թվականի № № Ե-ից, Զ-ից և Է-ից։

ռուն՝ 3372, Մարաշի՝ 2318, Զեյթունի՝ 1648, Եդեսիոյ՝ 1559, Սեբաստիոյ՝ 1545, Սալնապատի՝ 1403, Վարագի՝ 1218, Դիարբեքիրի՝ 1116, Արաբկիրի՝ 1106, Գլակի՝ 1001, և այլն)։

Գավառական գպրոցներու համար հատկացված է 10 189 ոսկի, որմէ 1390՝ Զեյթունի, 1002՝ Սղերդի, 603՝ Բաբերդի, 546՝ Ալաշկերտի, 537՝ Ցարսանչաքի, 495՝ Մարաշի, 445՝ Բալուի, 345՝ Մալաթիոյ, և այլն։

Այս ծախքերեն զատ, 2820 ոսկի հատկացված է գավառի զանազան առաջնորդարաններուն, 1112՝ աքսորի և բանտի մէջ գտնվողներուն և 962՝ զանազան կարոտությանց։

Ինչպես այս թիվերեն կերևա, շատ քիչ գումար ծախսված է Պոլսո կարիքներուն։ Դուլզն ենք եղած նույնպես ծախսերու համար տրամադրված գումարները։

Նպաստի գործին համար իր կատարած աշխատանքով Օրմանյան կպարծի նաև այլուր. «Հանրային խեղճության հանդեպ կարեկից և նպաստող և հոգացող բլլալուս յուսավոր փաստ մրն է նպաստից գործը, որ տասներկու տարիներու մէջ ութսուն և երեք հազար սամանյան ոսկվո գումարի հանգեցավ, և որով կարոտներ և որբեր, գպրոցներ և վիճակներ լիովին օգտվեցան, գրեթե բոլորովին իմ անձնական նախաձեռնությամբ»[114]։

Եվ սակայն պետք է նշել, թե գումարները, որ հավաքվեցան և ծախսվեցան գավառի կարոտությանց համար, բավական չէին կարիքին առջև։ Հայ ժողովուրդը շատ ավելի կրնար տալ, քան ինչ որ տվավ տասներկու այդ տարիներուն մէջ։ Հայ հարուստները, որոնք Ազգին կողորմին բարեբար կոչվիլու համար, և հանդիսավոր առիթներ կորսան, որպեսզի իրենց քսակը բանան և անմահանան, նվազ առատաձեռն եղան, երբ զրկված էին փառավորվելու հնարավորություններեն, երբ աշխարհ պիտի չիմանար լրիվ իրենց բարեբարությունը։

Բայց եթե գումի գործը Օրմանյանի պատրիարքության տարիներուն, համեստ եղավ և կարելի է ըսել նույնիսկ ճղճիմ, իր ծավալով, բաղդատմամբ ծով կարիքներուն, որոնց ճիրաններուն մէջ կտառապեր մանավանդ գավառի հայությունը, փոխարեն՝ անստգյուտ եղավ իր մատակարարությունը։ Արդարև, իր գործունեության ոչ մեկ մարզեն այնքան ճերմակերես դուրս չեկավ Օրմանյան, որքան նպաստի գործեն, և իր անձիրի հաշվետվությամբ կարկամեցուց բոլոր խծբծանքները, ինչպես պիտի տեսնենք հետո։

9. ԱՐՄԱՇԻ ՀՈՒՆՔԸ

Թե կարգ մը խավեր հաշտ աչքով չէին դիտեր հոդևորականներու երիտասարդ սերունդը, որ կհասուններ Արմաշի դպրեվանքին մէջ՝ կերևի շնական հրճվանքին, զոր ունեցած էին Բարթողիմեոս և Նուրյան, որոնք Իզմիրլյանի աքսորեն հետո պահ մը վարեցին Ազգը, մեկը իբրև տեղապահ, և մյուսը իբրև Ազգային վարչության ատենապետ, չքացած կարծելով Արմաշը, որ իրենց աչքին փուշն էր։ Անոնք բացեիրաց կրսեին, թե դեմ են, որ դպրեվանք մը պահվի վարդապետներ հասցնելու համար. ի՞նչ հարկ այդքան ծախքերու, կրսեին, երբ վարդապետներ կրնան պատրաստվիլ փոքրավոր մնալով քանի մը տարի եպիսկոպոսներու մոտ։ Եվ անոնք վճռեցին Արմաշի դպրեվանքը փակել։

Կսկիծը իրենց սրտին մէջ, Օրմանյան և Դուրյան սրտի կսկիծով հեռացան հետևաբար Արմաշեն, Զուվեն վարդապետին հանձնելով վանքը։

Դավադիր ջիբին հրճվանքը կարճ տևեց սակայն։ Օրմանյան պատրիարք պիտի ընտրվեր շուտով և հիմնիվայր պիտի շրջեին բոլոր դավերը։

Դժնդակ այդ վայրկյանին ակնարկելով, Օրմանյան կրսե. «Կարեվեր հարված մրն էր, զոր Ցամիլյան տեղապահ ու Նուրյան ատենապետ 1896 հոկտեմբերին ինձի պատճառեցին, երբ հայտարարեցին Դպրեվանքի «Հոգւոց»-ը ըսել, սակայն բախտս այնպես բերավ, որ երեք շաբաթ ետքը ինձի վիճակեցավ իրենց տարօրինակ հայտարարության «Հոգւոց»-ն ըսել։ Դպրեվանքը վերակենդանացնելու առիթը կստանայի պատրիարքական ընտրությամբ, և հնար չէր, որ նոր պաշտոնիս կարևորագույն գործը չհամարեի Դպրեվանքի հարատևության աշխատանքը, և բարեկարգության և զարգացման միջոցները պատրաստել»[115]։

Հաղիվ նստած Պատրիարքական Աթոռին վրա, Օրմանյանի առաջին հոգերեն մեկն եղավ վերակենդանացնել Արմաշը, և այս-

---

114 «Հոգւոց և խոսք», էջ 27։

115 Անդ, էջ 271։

պիսով հնարավորություն տալ անոր, որպեսզի կարենա զույգ մը տասնյակ տարիներ ևս շարունակել գործը, որուն հիմքը ինքն էր դրեր։

Օրմանյան Ճեմարանեն մեկնած ատեն բաց մը կթողուր եաին։ Մեկը չկար, որ փոխարէներ զայն։ Արմաշի պարագան նույնը չէր։ Դպրեվանքեն բաժնված պահուն Դուրյան մը մնացեր էր տեղը, որուն գործակցած էր ամբողջ վեց տարի, և զոր լրիվ կճանչնար։

Խառնվածքով ու նկարագրով, պատրաստությամբ ու նախասիրություններով բոլորովին տարբեր մարդիկ էին Օրմանյան ու Դուրյան։ Իրենց գործակցության վեց տարիներու ընթացքին ունեցեր էին նաև փոքր թյուրիմացություններ։ Բայց հիմա, որ Պոլսո Պատրիարքության կոչվելով բոլորովին կհեռանար իր սիրած Դպրեվանքեն, Օրմանյան անշուշտ Դուրյանի միայն կրնար վստահիլ զայն։

Օրմանյան, արդարև, աչքը եաև չմեկնեցավ Արմաշեն։ Դուրյան իր տեղը պիտի մնար իբրև վերատեսուչ։ Փոքր սփոփանք չէր այդ դաստիարակի մը համար, զոր իր սիրական բեմեն կառանգեն, նետելու համար խորթ ասպարեզի մը մեջ։ Պատրիարքությունը այդ խորթ ասպարեզն էր։ Եվ մյուս սփոփանքը, որ կմնար իրեն, այն պարագան էր, որ իբրև Կոստանդնուպոլսո պատրիարք, վանահայրն ինքն էր Արմաշի և կրնար միշտ իր հոգածության տակ պահել զայն։

«Դուրյանի գլխավոր ասպարեզը պիտի ըլլար Դպրեվանքի ներքինն և ուսումնականը,— կըսե Օրմանյան,— իսկ արտաքինն ու նյութականը, այսինքն պաշտպանությունն ու դրամականը ինձի կմնար հոգալ, ճարել և ժամանակին հասցնել։ Դպրեվանքի նախնական կազմակերպության ատեն վանահայրությունը Կոստանդնուպոլսո պատրիարքներուն վերապահվեցավ, այլ պարզ անվանական էր այդ կոչումը՝ Դպրեվանք Պատրիարքության Կոստանդնուպոլսո դրությունը արդարացնելու համար։ Ես նույնպես չէի կրնար ըլլալ, քանի որ կազմիչն ու վարիչը եղած էի, և նոր պաշտոնով նախնական դիրքս ավելի ևս կընդարձակվեր։ Այս դրության համեմատ գործի ձեռնարկվեցավ, և այսպես ալ շարունակեց պատրիարքությանս երկոտասանամյա տեղության ժամանակը»[116]։

Ութը տարի, 1896-են մինչև 1904, Դուրյան առանձին վարեց Դպրեվանքը։ Օրմանյանի հետ 13 վարդապետներ պատրաստեր էին։ 14 նորեր ինք առանձին հասցուց իր շրջանին։

Դուրյանի մեկնելեն հետո, Արմաշի հասցուցած սերունդեն երեքը հաջորդաբար վարեցին Դպրեվանքը. Թորգոմ՝ 1904—1907. Բարգեն՝ 1907—1909. որուն ալ հաջորդեց Մեսրոպ Նարոյան և վարեց 1909-են մինչև տարադրություն։

Օրմանյան հպարտ է ոչ միայն սերունդին համար, որ հասունցավ ուղղակի իր շունչին տակ, այլ նաև անոնց համար, զորս Արմաշ տվավ Ազգին իր հաջորդներուն օրով և որոնք պիտի երթային կյանք տալ գավառի թափուր թեմերուն, առանց համահնչ երազելու Ոսփորի գեղածիծաղ ափերուն վրա։

Օրմանյան, երբ 1907-ին հետադարձ ակնարկ մը կնետեր Արմաշի հասցուցած բերքին վրա, կդրեր հպարտությամբ. «Դպրեվանքի աշակերտներուն ունեցած օգտակարությունն ակներև կհայտնվի այնու, որ գավառական պաշտոններու հանձնառու կամ հարմարավոր եկեղեցականներ չգտնվելուն պատճառով անդատին 1879 տարիին Կենդրոնական վարչությունը պարտավոր եղավ անոնց հանձնել գավառական պաշտոնները, չնայելով իսկ, թե տակավին նորահասներ են, և եթե դպրեվանքցիներն չլինեին, գավառական պաշտոններ բոլորովին անխնամ մնացած պիտի ըլլային։ Այսօր ալ (1907 ապրիլ) բազմաթիվ վիճակներու առաջնորդները կամ տեղապահներն անոնցմե են. Խարբերդ, Կարին, Ադանա, Շապին, Բիւրեճիք, Բայազիտ, Ամասիա, Արարկիր, Քրդի և Մարաշ դպրեվանքցիներով կհովվին։ Իզմիր, Իզմիդ և Ադանա օգնականներ կան։ Տրապիզոն, Մուշ, Ռոդոստո, Սղերդ, Ջանիկ, Երզնկա, Ակն, Գասթամունի, Բանդրմա դպրեվանքցի առաջնորդներ ունեցան. Արմաշու դպրեվանքը, Սսո դպրանոցը, Պատրիարքարանի կրոնական դիվանը դպրեվանքցիներով կդառնան, և մայրաքաղաքիս եկեղեցիներեն քանիներուն քարոզիչներն անոնցմե են»[117]։

Արմաշ թարմ հոսանք մը կբերեր Հայ եկեղեցիեն ներս։ Ճիշտ է, որ իր հասցուցած սերունդը երբ վանքեն կմտներ աշխարհ, անփորձ էր դեռ դուրսի կյանքին։ Դեռ չէր ճանչնար լրիվ ժողովուրդը, զոր հովվելու կուգար։ Ադեկ՝ առաջին օրերու իր փութկոտությունը։ Եվ ադեկ 1ան որոշ քննադատություններ և ակնարկություններ մամուլի էջերին։

[116] տեսէք և խոսքս, էջ 272։

[117] Սաղմոնիա արքեպիսկոպոս. «Դպրեվանքը», «Ամենուն տարեցույցը», Կոստանդնուպոլիս, 1908, էջ 28։

Աղոնց ակնարկելով է, որ կգրե Օրմանյան. «Ինչ որ ավելի դպրեվանքցիներուն դեմ գրվեցավ կամ լսվեցավ, մասամբ ինքնահավան մեծամասնության, և մասամբ ալ լայնամիտ վարդապետության գաղափարներուն կպատկանին։ Երկու կետերն ալ ավելի երիտասարդական հավակնության, քան թե մոլի ու մոլար ուղղության հետևանք են, որը աճեցուն տարիներու և փորձառու տագնապներու ներքև իրենց չափավորության կվերածվին, և տեսականին մեջ զգացված առավելության գիտակցությունը, գործնականին մեջ տեսնված նվազությամբ կբարեխառնվի շուտով։ Բնության ընթացքովն իսկ առաջին հասակի խստերախ աշխույժը վերջին տարիներու խոհուն հանդարտության կփոխվի, և դայդ յուրաքանչյուր անհատ իր անձին փորձովն իսկ գիտե։ Դպրեվանքի սաներն ալ պետք է այժմեն այդ ստուգության համոզվին, և եթե առավելագույն ուսման պարծանքը կուզեն արդարացնել, պետք է առավելագույն խոհականության արժանիքն ալ կցորդեն։ Ասով կարդարացնեն իրենց դաստիարակ հաստատությունը, ասով կապահովեն իրենց կոչման արդյունավետությունը»[118]։

Օրմանյան հպարտ է հետևաբար դերին համար, զոր ունեցավ Արմաշ. «Ուրախ եմ, որ Դպրեվանքը գովելի և պայծառ հիշատակ մը թողուց յուր ետևեն, աշխատասեր ու զարգացած ու ոգևորյալ պաշտոնյաներ նվիրեց Ազգին, քարոզչական ճյուղին մեջ հմտաբար և պզտգուտ ուղղություն մը ոկզբնավորեց, և մինչև այսօր Դպրեվանքը և դպրեվանքցիներ գովեստով կհիշվին ամենուն կողմե։ Աշխատությունը քաղցր է, երբոր արդյունավետությամբ կպսակվի. ա՛յս է իմ ալ մխիթարությունը, և մինչև աստիճան մը նաև իմ պարծանքը»[119]։

Եվ Օրմանյան նույնիսկ իրավունք կուտա իրեն՝ Արմաշի իր տարիները նկատելու ամենեն պտղաբերներն իր կյանքին. «Կենացս մեծագույն և արդյունավորագույն գործը սեպած եմ Դպրեվանքի աշխատությունս. իբր զի կրցած եմ եկեղեցվո և Ազգի համար օգտակար անհատներ պատրաստել, որոնք խոսուն փաստեր են տարված աշխատությանց»[120]։

Շահեկան է դիտել տալ, թե Արմաշի վանահայրությունը կամ տեսչությունը տեսակ մը նախադուռ եղած է նվիրապետական բարձրագույն Աթոռներու հասնելու, սկսած անցյալ դարեն։ Ստեփանոս Աղավնի երկիցս ընդհատած է վանահայրության պաշտոնը Պոլսո պատրիարքությունը վարելու համար 1831—1839 և 1840—1841. Մատթեոս Ջուհաճյան, փոխարեն, պատրիարքությունեն հրաժարելե ետքն էր, որ Արմաշի վանահայր եղավ 1853-ին. Ստեփանոս Սաղաքյան Արմաշի վանահայրությունեն եկավ պատրիարքական տեղապահի պաշտոնը վարելու համար Պոլսո մեջ 1863-ին. Խորեն Աշրգյան վանահայր էր, երբ Պոլսո պատրիարք ընտրվեցավ 1888-ին. Օրմանյան ևս Արմաշի փոխ-վանահայրությունեն ուղղակի Պոլսո պատրիարքության անցավ 1896-ին։ Եղիշե Դուրյան, որ 1909—1910 Պոլսո պատրիարքությունը վարեց, և 1921—1930 Երուսաղեմինը, նույնպես Արմաշի փոխ-վանահայր և վերատեսուչ եղեք էր 1896—1904։ Զավեն Տեր Եղիայան, Մեսրոպ Նարոյան և Գարեգին Խաչատուրյան, որոնք նույնպես վերատեսուչ կամ տեսուչ եղեր էին Արմաշի մեջ, հետագային Պոլսո պատրիարք եղան, իսկ Թորգոմ Գուշակյան Դուրյանի հաջորդեց Երուսաղեմի Աթոռի վրա, և Բարգեն Կյուլեսերյան Աթոռակից կաթողիկոս եղավ Կիլիկիո։

Դպրեվանքը վաղուց է չկա, ինչպես չկա Արմաշ գյուղը, ինչպես չկան բոլոր այն վանքերը, որոնց խուցերուն մեջ հայ միտքը երբեմն լույս կքամեր ու բոլոր այն գյուղերը, որոնց մեջ հայ ավանդությունները դեռ կպլպլային։

Չկա և Զարխափանը, որուն կվազեր հայ ժողովուրդը հրաշք աղերսելու Աստվածածնի ու Խաչի տոներուն։

Բայց կա ինքը հայ ժողովուրդը, միշտ լույսի ծարավ, միշտ իր ստեղծագործ ճիգին մեջ։

10. ՕՐՄԱՆՅԱՆ ԵՎ ՀԱՅ ԳԱՂՈՒԹՆԵՐԸ

Մինչև Օրմանյանի ժամանակները, արտասահմանի բոլոր հայ կաղութները Պոլսո Պատրիարքության կապված էին և Պոլիսն էր, որ կհոգար անոնց հոգևոր կարիքները. Մայր Աթոռ Ս. Էջմիածնի գիտությամբ և հավանությամբ։ Պահ մը եղավ, որ Պոլսո Պատրիարքության համար դժվար եղավ անոնց պատասխանատվությունն ստանձնել։

Օրմանյան, խոսելով հայ գաղութներու կազմության մասին Եվրոպայի և Ամերիկայի զանազան քաղաքներուն մեջ, կըսե. «Պարագա մը ևս հիշենք, որ յուր պարզության մեջ ժամանակին հանգամանքը և վար-

118 «Ամենուն տարեցույցը», էջ 29։

119 «Խոհք և խոսք», էջ 160։

120 Անդ, էջ 271։

չության հոգին լավ կպատկերացնեն։ Բավական ժամանակ ի վեր հայ առևտրականներ սկսած էին հաստատվել Եվրոպայի զանազան կեդրոնները, Մանչեստր, Փարիզ, Մարսիլիա, Անվերս, նաև Հյուսիսային Ամերիկո քաղաքները, որոնք ընդհանրապես տաճկահայեր էին և անոնց հոգևոր պետքերը Կոստանդնուպոլսո պատրիարքին կողմե կհոգացվեին, և արտասահմանի գաղութներ Կոստանդնուպոլսո թեմեր կնկատվեին, որոնց մեջ հայ մնայուն մատուռներե ետքը հայ եկեղեցիներ ալ սկսած էին շինվիլ, ինչպես Անգլիո Մանչեստր, Ամերիկո Ուստր և Գաղղիո Փարիզ, և ուրիշ քաղաքներ»[121]։

Օրմանյան կըսե, թե Պոլսո Պատրիարքությունը դժվար կացության սկսավ մատնվիլ այն օրեն, երբ արտասահմանի հայության ծոցին մեջ սկսավ ծավալ գտնել հայ հեղափոխական շարժումը և սկսան լույս տեսնել հայերեն թերթեր, որոնք ուժ կուտային այդ շարժման, վրդովման մատնելով Սուլթանը և ստիպելով զայն, որ միջոցներ խորհի առաջը առնելու համար հայոց կողմե փորձվող ձրագիրներուն։ Պատրիարքարանի դիրքը ավելի ևս սկսավ դժվարանալ, երբ պտուղ չտվին Համիդի փորձերը հորդորներով և խոստումներով սիրաշահելու գրգռված արտասահմանը, և երբ ձեռնունայն ետ դարձան զանոնք խրատելու համար արտասահման ղրկված պատվիրակները, ձախողություն, որ պատճառ կդառնար Համիդը ստիպելու, որ այս անգամ ալ հայոց Պատրիարքարանը ճնշե։

«Նոր Վարչության գործի գլուխ անցած սահենը,— կգրե Օրմանյան,— այդ կացությունը բուռն և սաստիկ աստիճանի հասած էր։ Արքունիքը, քաշալիրված Վարչության խոհական ընթացքեն՝ սկսավ անկե պահանջել, որ կուսակցական կեդրոնները խափանե, գործիչները շահի կամ զսպե, մեկ խոսքով անհետ ընե Ազգին մեջ մուծված և արտասահմանե եկած շարժումի հոգին։ Օրմանյան գործին անհնարությանը գիտակ՝ ջանաց իրմե հեռացնել այդպիսի հանձնառություն մը, թեպետ Տատյան ատենապետ մինչև աստիճան մը միտյալ էր հանձնառու ըլլալ»[122]։

Օրմանյան կակնարկե Տատյան Հարություն փաշայի փորձերուն հասկացողության դետին մը գտնելու Համիդի և Հայ հեղափոխականներու միջև, փորձեր, որոնք, ինչպես հայտնի է, ձախողանքով վերջացան։

Բայց այնուամենայնիվ անհրաժեշտ էր ապագա անախորժություններ կանխել։ Ուրիշ հնար չկար, բայց եթե Ամերիկայի և Եվրոպայի թեմերեն հրաժարիլ։

«Օրմանյան միանգամ ընդմիշտ գործը վրայեն նետելու և պատասխանատվությենե զերծ մնալու համար սկսավ պատասխանել, թե ինքն Թուրքիո պատրիարք ըլլալով՝ արտասահմանի վրա ներգործելու և ազդելու միջոցներ չուներ։ Ըստ այսմ ալ կանխած ն Խրիմյան Կաթողիկոսի հաղորդած էր, թե որչափ ալ մինչև վերջին ատեններ Եվրոպիո և Ամերիկո նոր գաղութներու հոգերը Կոստանդնուպոլսո Աթոռեն նայված էր, սակայն պատահական և առժամյա եղած էր, երբ գործը կարևորություն ալ չուներ։ Բայց քանի որ գաղութները աճած են, և Եվրոպա ու Ամերիկա առանձինն առաջնորդություններ ըլլալու կարևորությունն ստացած են, այլևս Մայր Աթոռո կպատկանի անոնց հոգը ստանձնել, զի յուր Աթոռին իրավասություններ Թուրքիո երկիրներով սահմանափակված է, և անկե դուրս չի կրնար օրինավորապես իրավունք գործածել»[123]։

Ամենայն Հայոց Կաթողիկոսը ըմբռնեց փափուկ գիրքը, զոր Պոլսո Պատրիարքությունը ուներ, և իսկույն տվավ իր հավանությունը։

«Խրիմյան Կաթողիկոս անհակառակ հաճեցավ այդ առաջարկության և իսկույն Եվրոպիո և Ամերիկո առաջնորդությունները նվիրագործեց, և Օրմանյան այլևս ազատ մնաց Եվրոպիո և Ամերիկո գործերուն և շարժումներուն և կուսակցությանց վրա հակակշիռ գործածել կամ պատասխանատվություն ունենալե, և այս եղավ մինչև վերջ յուր պատասխանն ու չքմեղանքը որևէ առաջարկի կամ մեղադրանքի մասին, որ արքունյաց կողմեն իրեն կհաղորդվեր»[124]։

Օրմանյան կավելցնե, թե «Խրիմյան Կաթողիկոս իրեն եղած առաջարկը ընդարձակելով Ռումանիո և Պուլկարիո վիճակներուն ալ ուղղակի յուր իրավասության ներքև անցնելու սկսավ, որոնք հին ատեններեն Կոստանդնուպոլսո կապված էին, և Կոստանդնուպոլսո 45 վիճակներուն մեջ կհաշվվեին»[125]։

Խրիմյան Կաթողիկոսի այս փորձին սակայն դժվար էր գոհացում տալ։

Օրմանյան կըսե, թե Սուշավայի թեմը, որ նույնպես երբեմն ենթակա էր եղած Կոստանդնուպոլսո, «դյուրավ թողվեցավ Եվրոպայի նորահաստատ առաջնորդության, ինչ որ հնար չէր ընել Պուլկարիո համար, և զայն

121 «Ազգապատում», Գ, էջ 5102։

122 Անդ, էջ 5103։

123 Անդ։

124 Անդ, էջ 5104։

125 Անդ։

Թուրքիայի դաշնակ, իբր դի ոսմանյան դիրիշխանության ներքև կմնար, և Կոստանդնուպոլսո Աթոռին անկախ ձեռք քաշելը քաղաքագիտական նշանակություն կառներ։ Ուստի ըստ այսմ լուր տրվեցավ Մայր Աթոռս, և նա ալ ներկայացված տեսությունը հարգելով Պուլկարիայի ձեռք քաշեց[126]։

Տարբեր էր սակայն Ռումանիոյ պարագան։ Օրմանյանի պատրիարքության օրերուն ան վաղուց է կախում չուներ օսմանյան պետությենեն և տրամաբանական էր, որ Մայր Աթոռի իրավասության անցներ ան։ Բայց այստեղ ալ ուրիշ արգելք մը մնչտեղ կուդար. ոսմանեն կառավարությունը ինքը կմերժեր հավանիլ, որ Ռումանիոյ հայերը էջմիածնի հոգևոր իրավասության տակ անցնին։

«Ռումանիոյ մասին լուր առնվեցավ,— կրսե Օրմանյան,— թե տեղական կառավարությունը չէր ուզած ճանչնալ էջմիածնի հղված փոխանորդը, ուստի հարկ եղավ Կոստանդնուպոլսո դեսպանատան հետ բանակցության մտնել և բացատրել, թե ինչպես Ռումանիոյ անկախ պետություն հռչակվելովը և Թուրքիայի զատվելուէ Ռումանիոյ հայերը ազգակի էջմիածնի իրավասության տակ գտնված կնկատվին։ Դեսպանը հարկ սեպեց լուր նախարարության դիմել և տրված բացատրությունները հաղորդել, սակայն ոսմանական կառավարությունը չուզեց ընդունիլ էջմիածնի իրավասությունը, ռուսական միջամտության առիթ նկատելով, և պատասխանեց, թե կսիրե հին կապերն ու սովորությունները պահել իրեն հպատակ հայոց համար, ըստ այսմ ալ Մայր Աթոռս ծանուցվեցավ և Ռումանիա կապված մնաց Կոստանդնուպոլսո Աթոռին»[127]։

Այնպես որ «Եվրոպիոյ առաջնորդությունը մնացին Անգղիա, Գաղղիա, Բելգիա, Հելվետիա, ուր հայ գաղութներ կային, և պատահարար եթե ուրիշ տերությանց մեջ ալ հայեր գտնվին։ Առաջնորդանիստ ճանչցվեցավ Փարիզ. իսկ Ամերիկո համար ուստր առաջնորդանիստ, և Միացյալ Նահանգաց հյուսիսային երկիրները իրեն սահման իրավասության, և պատահարար Հարավային Ամերիկո հանրապետություններն ալ»[128]։

Օրմանյան մղձավանջ մը կազատեր այս կերպով։

11. ՕՐՄԱՆՅԱՆ ԵՎ ՄԱՅՐ ԱԹՈՌԸ

Օրմանյան, որևէ մեկեն ավելի դիտակ պատմական գերին, զոր ունեցած էր Հայ եկեղեցին իր գոյության տասնվեց դարերու ընթացքին, և որևէ մեկեն ավելի համոզված Ամենայն Հայոց Կաթողիկոսության հեղինակությունը ամուր պահելու անհրաժեշտության, «բանի և գործով», ինչպես կրսեն, ջատագով հանդիսացած է պահպանելու Մայր Աթոռի հմայքը, ինչ պաշտոնի և ինչ դիրքի վրա ալ որ գտնված է։ Ու փոխարեն՝ զայն թշնամի կգտնենք բոլոր այն փորձերուն, որոնք եղած են այդ հեղինակությունն ու հմայքը նվազեցնելու, ինչ առթիվ և ինչ անունով ալ կատարված ըլլա այդ փորձը։

Օրմանյան իր կապը սկսեր էր էջմիածնի հետ Մակար կաթողիկոսի օրով, որմե ընդուներ էր իր եպիսկոպոսական ձեռնադրությունը և որուն հրավերովն ու ստիպումովն էր, որ Ճեմարանի մեջ ուսուցչության պաշտոն վարեր էր տարի մը։ Պետք է ըսել, որ իր ճանչցած հոգևորականներուն մեջ քիչեր միայն այնքան առարկա դարձած են իր անխառն գնահատության, որքան Մակար կաթողիկոսը։ Օրմանյան բացեիրաց կուփստոսա այն ընդդիմության համար, զոր ցույց տվին ոսմանք Մակարի կաթողիկոսության առթիվ, միմիայն անոր համար, որ երկրորդ ընտրելի ըլլալով հանդերձ, ան էր վավերացված ցարեն և այս կերպով իրեն թե անտեսվեր էր Ազգին բաղձանքը, որ Մելքիսեդեկ Մուրադյանն էր հռչակած առաջին թեկնածու։ Օրմանյան կրսե, թե Մելքիսեդեկը առաջին թեկնածու տրվեցավ, որպեսզի Մակարն ընտրվի, որովհետև պարզ էր բոլորին համար, թե ցարը երբեք պիտի չվավերացներ Մելքիսեդեկը իր թշնամական հակումներուն պատճառով դեպի ցարի կառավարությունը։ Հետագային, Մակար կաթողիկոսի ընտրոշումն ըրած ատեն, Օրմանյան պիտի դրեր «Խոհք և խոսք»-ին մեջ, թե «գրեթե ոչ ոքն պատկառանք չեմ զգացած իմ ներսս, թեպետ հարգանք և սեր ունեցած եմ յուրաքանչյուրին արդյունավետության և արժանյաց. Մակար թերևս միակն էր, որ պատկառանք ազդած է վրաս»[129]։

Օրմանյան, որ առաջին իսկ օրեն ամենեն ջերմ ջատագովներեն մեկն էր եղած էջ-

126 «Ազգապատում», Գ, էջ 5164։

127 Անդ։

128 Անդ, էջ 5105։

129 «Խոհք և խոսք», էջ 424։

միածնի վերին հեղինակության, իր նվիրման մեջ երբեք չթերացավ իր պատրիարքության տարիներուն ալ և ամեն առթիվ ջանադիր եղավ էջմիածնի հմայքն ու հեղինակությունը բարձր բռնելու և այդ բանին ստիպելու և ուրիշներու Իր պատրիարքության գրեթե ամբողջ տեղողության, Խրիմյանն էր Կաթողիկոսական Գահուն վրա, և Օրմանյան, հակառակ Խրիմյանի գործունեության ու մեթոդներուն հանդեպ իր ունեցած բոլոր վերապահումներուն,— որոնց դեռ պիտի անդրադառնանք,— ամենեն ամուր հենարաններեն մեկը եղավ Ամենայն Հայոց Կաթուղիկոսին, համերաշխ գործակցություն մը ունենալով անոր հետ և անոր կողքին կենալով դժվար պահերու։

Այդ պահերեն մեկը 1903—1904 տարիներն էին, երբ եկեղեցապատկան կալվածներու գրավման հարց մը ծագեցավ Կովկասի մեջ։

Ցարաշուք այն փորձեն հետո, զոր ցարական վարչաձևը՝ ըրեր էր Մակար կաթողիկոսի օրով Կովկասի հայ վարժարանները լքացնելու համար, ցարական կառավարության 1903-ի ձեռնարկը հայ եկեղեցապատկան կալվածները խլելու՝ ամենեն դժնդակ հարվածն էր, զոր կուգար կրել հայ ժողովուրդի Կովկաս բնակող հատվածը։

Այդ հարվածը չէր կրնար անտարբեր թողուլ հայ ժողովուրդը, ուր ալ գտնվեր ան։ Հայ եկեղեցվո կալվածները դրավել կնշանակեր ապրելու հնարավորությունեն զրկել հայ եկեղեցիներն ու հայ դպրոցները, որոնք ուրիշ ապավեն չունեին շնչելու համար, քան այն եկամուտները, զորս հայ չերմեռանդությունը ապահոված էր իրենց։

Ցարիզմին ամենեն ահավոր պահերեն մեկն էր այդ, և այդ պահը շատ ճիշտ բնութագրված է. «Ցարական կառավարությունը 20-րդ դարի սկզբին ավելի ուժեղացրեց ազգային ճնշումների և հալածանքների իր քաղաքականությունը։ Նա նոր արշավանք սկսեց անդրկովկասյան ժողովուրդների և մասնավորապես հայ ժողովրդի դեմ։ Կովկասի կառավարչապետ իշխան Կոլիցինը փակեց հայկական դպրոցների և պարբերականների մի մասը, արգելեց կուլտուր-կրթական և բարեգործական ընկերությունների գործունեությունը, ուժեղացրեց գրաքննությունն և այլն։ Ցար Նիկոլա 2-րդը 1903 թվականի հունիսի 12-ին ստորագրեց մի օրենք, որի համաձայն պետք է բռնագրավվեին և պետականացվեին Հայկական եկեղեցու գույքն ու կալվածները։ Այս օրենքը, ըստ էության, ուղղված էր հայ ժողովրդի դեմ։ Եկեղեցական կալվածների հաշվին պահվում էին որոշ թվով դպրոցներ։ Բռնագրավել այդ կալվածները, նշանակում էր նշված դպրոցները զրկել իրենց նյութական բազայից, փակել և այսպիսով նոր հարված հասցնել հայ ժողովրդի դպրոցական-կրթական գործին»[130]։

Ցարի կառավարության այդ քայլը չէր կրնար չվրդովել հայ ժողովուրդը։

«1903 թվականի հունիս 12-ի օրենքը առաջ բերեց մեծ դժգոհություն և զայրույթ։ Ամենուրեք որոշում ընդունեցին դիմադրել ցարական կառավարությանը։ Ի պատասխան վերջինիս կողմից գործադրվող բռնի միջոցների՝ կազմակերպվեցին մասսայական ցույցեր։ Ոստիկանության և վրդովված մասսաների միջև տեղի ունեցան դինված ընդհարումներ։ Հակացարական ազգային շարժման մեջ ընդգրկվեց ամբողջ Կովկասի հայ բնակչությունը»[131]։

Հայ եկեղեցապատկան կալվածներու գրավումը 1903-ին Կովկասի մեջ, Օրմանյանի համար ևս առիթ մը եղավ տեր կանգնելու Հայ Եկեղեցվո իրավունքներուն։

Եթե ստիպված էր զուսպ ըլլալ Համիդի հանդեպ իր վարած քաղաքականության մեջ և թնճուկներ ստեղծելե զգուշանալ հայ ժողովուրդի շահերը պաշտպանած ատեն, պարագան բոլորովին տարբեր էր հիմա, որովհետև Համիդը չդրդռելու իր մտավախությունը եթե կկաշկանդեր դինք հախուռն ըլլալե, միևնույն մտավախությունը չուներ ցարին հանդեպ դատախազ ներկայացած ատեն Հայ Եկեղեցվո շահերուն համար։

1903 թվականի հուլիսին Պոլիս ևս լուր ստացված ըլլալով, թե ցարական կառավարությունը արդեն լույս ընծայած է «բարձրագույն հրաման մը Հայ Լուսավորչական Եկեղեցվո կալվածները գրավելու մասին», Օրմանյան հուլիս 16-ին կհարցներ էջմիածին, «թե ստո՞ւգ է արդյոք լրագիրներու մեջ տեսնված գրավման լուրը, թելադրելով միանգամայն պատշաճ դիմադրությունն ընել, նկատելով, որ նոր օրենքը թե՛ Եկեղեցվո իրավանց եղծիչ էր և թե՛ Եկեղեցվո պաշտոնյաներուն անարգական»[132]։

Խրիմյան, որ առաջին վայրկյանի շվարումեն և տատանումներե հետո, զանազան տեղերե ստացած սրտապնդիչ արտահայտությանց վրա վճռած էր դիմադրել ցարական կառավարության, և մեկ կողմե օգոստոս 4-ին պաշտոնական կոնդակով մը Սինոդին

---

130 «Հայ ժողովրդի պատմություն», երկրորդ մաս. Երևան, 1957 թ., էջ 195—196։

131 Անդ։

132 «Ակդապատում», Գ, էջ 5159։

կՀրամայեր օրենքը հրատարակության չտալ և պետք եղած հին վավերագրերը պատրաստել, և մյուս կողմե երեք օր հետո նույն ուղղությամբ ընդարձակ պատասխան մը կգրեր Պոլսո պատրիարքին, նոր վավերագրերու պատճեններն ալ կցելով և հաղորդելով, թե համագումար ժողովի մը հրավիրած է բոլոր թեմական առաջնորդներն ու վանահայրերը։

Օրմանյան կանխած էր սակայն հոգևորականությունը շարժման մեջ դնել։

«Տաճկահայոց բողոքին պաշտոնականություն և ծանրակշռություն տալու համար, օգոստոս 5-ին Կոստանդնուպոլիս գտնվող եպիսկոպոսները ժողովի գումարել ներկայությամբ 12 անդամոց, որք էին ինքն Օրմանյան, Մեսրոպ Սուքիասյան, Բարթողիմեոս Ջամիշյան, Գրիգորիս Հովհաննեսյան, Վահրամ Մանկունի, Տիմոթեոս Սափրիշյան, Եզնիկ Ապահունի, Հմայակ Դիմաքսյան, Մկրտիչ Վեհապետյան, Գևորգ Երեցյան, Ներսես Ասլանյան և Գարրիել Ճնահիրճյան եպիսկոպոսներ։ Լոկ եպիսկոպոսներով ժողով գումարելու ձևը նախադասվեցավ, դի գործը ընդհանուր Հայ Եկեղեցվո և ուղղակի Մայր Աթոռո հետ կապ ուներ, և դի Սահմանադրական վարչության Կրոնական և Քաղաքական ժողովներուն նշանակությունը հվաղ էր ռուսական կառավարության աչքին»[133]։

Ներկա բոլոր եպիսկոպոսները միաձայն եղան իրենց բողոքի ձայնը միացնելու Կովկասի մեջ ծայր տված վրդովման։

Պատասխան մը սակայն կուշանար, և մյուս կողմե ցարական իշխանությունները կշարունակեին իրենց հալածանքն ու բռնությունները։

«Կոստանդնուպոլիս գտնվող եպիսկոպոսներ ռուսաց կայսեր մատուցած ուղերձին պատասխանը ուշանալու և հետզհետե բռնության և բռնադատության լուրեր հասնելուն վրա, նոյեմբեր 12-ին երկրորդ ուղերձ մըն ալ կՀղեին կայսերու։ «... Ուրիշ շատ փաստերով կՀանան եպիսկոպոսներ կայսեր խղճին և հավատքին վրա աղդել, որ գադարին օրենքին գործադրությունը և գործադրության բռնությունները, զորս համառուակի բայց համարձակ կՊարկենք»[134]։

Մյուս կողմե «Կիլիկիո կաթողիկոսն և Երուսաղեմի պատրիարքն ալ կայսեր հասցեին մեյ-մեկ ուղերձ հասուցած էին պատրիարքին, զորս Օրմանյան գաղդիերենի թարգմանելով կՀղեն հասցեին»[135]։

Պլեվեն կսպաննվեր 1904-ի վերջերուն, իսկ քիչ հետո Գոլիցինը ետ կկանչվեր Կովկասեն։

«Օրմանյան 1905 հունվար 2-ին նոր դիմում մը ըրավ Ռուսիո կայսեր, առիթ առնելով Վանա վանքերուն Կովկասի մեջ ունեցած հասույթներուն ալ դրավվիլը, և կրկնելով ընդհանրապես նոր օրենքին դադարման մասին կանխավ եղած դիմումները։ Կայսերական արքունյաց նախարարը 12-ին կպատասխաներ և բոլոր գրությանց ներքին գործոց նախարարին քննության հանձնված բլյալը կծանուցաներ»[136]։

1905 օգոստոսին ցարը այլևս տեղի կուտար ամբողջ հայության միասնական կամքի առջև։

«Ցարական կառավարությունը սկզբում կարողացավ ճնշել հայ ժողովրդի շարժումը և կենսագործել 1903 թվականի հունիսի 12-ի օրենքը։ Սակայն, հետագայում, արագորեն աճող համառուսական ռևոլյուցիոն շարժման ազդեցության տակ, նա ստիպված եղավ դիջել։ 1904 թվականին Գոլիցինը հետ կանչվեց իր պաշտոնից, իսկ 1905 թվականի օգոստոսին Նիկոլայ 2-րդը վերացրեց 1903 թվականի հունիսի 12-ի օրենքը»[137]։

Օրմանյան դոհ է, որ «այս բարեհաջող վերջավորության մեջ, եթե Մայր Աթոռո և բովանդակ ռուսահայոց ընդդիմությունը յուր գլխավոր դերն ունեցավ, եթե քաղաքական ու դինվորական դեպքերն ալ ազդեցություն գործեցին, տաճկահայ Պատրիարքության և եպիսկոպոսության բարձրացուցած ձայնն ալ իրեն նշանակություն ունեցավ և հայության ազդուապես սատարեց։ Եվրոպիո և Ամերիկայի հայ գաղթականություններն ալ լուռ չէին մնացած, սակայն անոնց գլուխը նվիրապետական կերպարան չէր գտնվեր, և ազդեցություններին ալ նույն զորությունը չէր կրնար ունենալ ռուսական կառավարության վրա»[138]։

Ինչպես բսինք, հակառակ իր բոլոր վերապահումներուն Խրիմյանի կաթողիկոսության մասին, և այն մանավանդ պատ ընությագրին, որով Խրիմյանը կներկայացնե երբ դայն կհանձնե պատմության, Օրմանյան պատրիարք հետագային ալ չէ թերացած իր ակնածանքին մեջ դեպի կաթողիկոսը և զրավիգ եղած է անոր ամեն անգամ, որ առիթ ներկայացած է և չէ դլացած անոր իր խորհուրդները՝ Ազգին և Եկեղեցիին համար բացառիկ կարևորություն ունեցող վայրկյաններու մեջ։

133 «Ազգապատում», Գ, էջ 5161։

134 Անդ, էջ 5172։

135 Անդ։

136 Անդ, էջ 5174—5175։

137 «Հայ ժողովրդի պատմություն», էջ 196։

138 «Անուր և խոսք», էջ 232։

12. ՕՐՄԱՆՅԱՆ ԿԻԼԻԿԻՈ ԿԱԹՈՂԻԿՈՍԱԿԱՆ ԱԹՈՌԻՆ ՀԱՆԴԵՊ

Կիլիկիո Աթոռին խնդիրը Օրմանյանի հիմնական մտահոգություններեն մեկն է եղած իր պատրիարքության շրջանին։ Երբ ան պաշտոնի կանցներ 1896 թվականին, երկու տարիե ի վեր թափուր էր արդեն Սսո Աթոռը Մկրտիչ Քեչֆսիզյան կաթողիկոսի մահվամբ, որ տեղի ունեցեր էր 1894 նոյեմբեր 8-ին, վերջ տալով 26 տարիներու անփառունակ կաթողիկոսության մը, որ սև էջ մը ձգելու կոչված էր Մեծի Տանն Կիլիկիո տարեգրությանց մեջ։ Քեչֆսիզյան, համբավված իր ընչաքաղցությամբ, և հարստության տիրանալու համար իր կատարած զարտուղի ձեռնարկներով, հանձնառու եղած էր մինչև իսկ մատնության, ինչպես եղան ազգային Պատրիարքարանի դեմ կառավարության մատուցած պաշտոնական հիշատակագիրները, թե անոր պահանջները նպատակ ունին Ռուսիո ազդեցության ծառայել, Թուրքիո Կիլիկյան Աթոռը Ռուսիո Կաթողիկոսության հպատակեցնելով։ ... Բախտ չունեցավ սակայն Աթոռին վրա, զի հարստությունն ալ չկրցավ վայելել և վայելցնել, Աթոռն ալ դժբախտ եղավ իրեն ներքև անխնամ լքվելով և անբնակ ամայանալով. իսկ Կիլիկիո ժողովուրդը իր անկյալ վիճակին մեջ մնաց և ավելի ևս սուզեցավ»[139]։

Քեչֆսիզյանի հաջորդին ընտրությունը տեղի ունեցավ 1895 հունիս 7-ին, և Պոլսո խառն ժողովին կողմե պատրաստված եռանուն ցանկի մը վրայեն Սսո տեղական ժողովը ընտրեց Գրիգորիս Ալեքսէյան եպիսկոպոսը, ծանոթ իր հրապարակագրական գործունեության և իր լույս ընծայած «Թրոչնիկ» պարբերականով, և միևնույն ատեն ճանչցված իբրև գործունյա և ձեռներեց եկեղեցական։ Ան վարած էր Երզնկայի, Բարեբերդի, Մուշի և Վանա առաջնորդությունները։ «բայց միանգամայն բուռն և հախուռն ըլլալով և կասկածներու ենթարկվելով, տեղափոխությանց պարտավորված էր, քննությանց ներքև ինկած, կասկածելի նկատված»[140] Թուրք կառավարության աչքին, որ նույնիսկ չէր վավերացուցած իր ընտրությունը իբր Կրոնական ժողովի անդամ։

Մինչ «Թռչնիկ» եպիսկոպոս կաթողիկոս կընտրվեր, Սսի եպիսկոպոսներեն երեքը գայթակղած, որ Աթոռի եպիսկոպոսներեն չէ նոր կաթողիկոսը, ապօրեն կհռչակեին կատարված ընտրությունը և հանուն Կիլիկիո թեմականներու բողոք կմատուցանեին կառավարության, և առանց նույնիսկ սպասելու իրենց բողոքի արդյունքին, հուլիս 18-ին իրենց մեջեն Հովհաննես Գազանճյանը կընտրեին ու կօծեին կաթողիկոս գաղտագողի կերպով։

Կառավարությունը, ինչպես կսպասվեր, մերժեց Ալեքսէյանը վավերացնել իբրև կաթողիկոս, մյուս կողմե չճանչցավ նաև Գազանճյանը, ու Կիլիկիո Աթոռը մնաց այնպես տագնապի մը մեջ, որ ամբողջ ութը տարի պիտի տևեր, հոգ մը ևս բարդելով Ազգին գլխուն։

Երբ Օրմանյան կուգար պաշտոնի գլուխ, թափուր էր ուրեմն Կիլիկիո Աթոռը, որովհետև կարելի չէր եղած ստանալ Ալեքսէյանի ընտրության վավերացումը կառավարությենեն։

Մինչ այս մինչ այն Ալեքսէյան իր հոգին ավանդեց 1899 օգոստոս 15/27-ին Սկյուտարի մեջ, ուր քարոզիչ էր։ Ստիպողական կդառնար նոր գահակալ մը տալ Կիլիկիո Աթոռին։ Բարդություն մը միջամտեց սակայն։ Կառավարությունը պահանջեց սրբագրությենե անցնել ընտրելիներու ցանկը, ինչպես սովոր էր ընել հունաց պատրիարքներուն ընտրության ատեն։ Երկար և բուռն ընդդիմություններե հետո Ազգային վարչությունը ստիպվեցավ ի վերջո զիջիլ, Աթոռը ավելի երկար թափուր չթողլու մտահոգությամբ, և Կիլիկիո ընտրողական ժողովը, 1901 նոյեմբեր 29-ին գումարված, խառն ժողովի կողմե պատրաստված ցանկի մը վրայեն,— ուրկե կառավարությունը զեղչած էր վեց ընտրելիներեն երեքին անունները, որոնցմե մեկը պատրիարքն էր և երկուքն ալ Կրոնական ժողովի ատենապետները,— Կիլիկիո կաթողիկոս ընտրեց Երուսաղեմի Աթոռին Պոլսո փոխանորդ Գեորգ եպիսկոպոս Երեցյանը։

Հոս կսպասեր արդեն ուրիշ անակնկալ մը։ Նորընտիր կաթողիկոսը, իր գանազան հայտարարություններով պահ մը այն համոզումը գոյացնել տալե հետո, թե պիտի ընդունի կաթողիկոսությունը, 1901 դեկտեմբեր 13-ին հանկարծ կներկայացներ իր հրաժարականը, Կիլիկիո Աթոռը դնելե հետո նոր տագնապի մը և Ազգը նոր հոգի մը առնե։

Ինչ ալ ըլլային Երեցյանի հրաժարականը դրդող շարժառիթները, Ոսփորի ափերեն բաժնվիլ չուզելու տենչ, թե Պոլսո մեջ Օրմանյանի մրցակից մնալու փափագ, այդ հրաժարականը, կրսե Օրմանյան, ոչ բախտ և ոչ հաջողություն եղավ իրեն համար, անձնդյուրության գակատյալ ըլլալու գաղափարը հաստատել տվավ յուր վրա, յուր պիտակ պատճառաբանությունները խստիվ քննադատվեցան, և այն օրեն սկսավ վայե-

[139] «Ազգապատում» Դ, էջ 5013։

[140] Անդ. էջ 5052։

յած հարդն ու վարկն ալ նվազիլ, և անձնական պատիվն ալ մթագնելու երես բռնեց»[141]։

Եվ մինչդեռ ազգային իշխանությունները կխորհեին տագնապին դարման մը գտնելու միջոցներուն մասին, կառավարությունը այս անգամ ինք կստեղծեր ավելի դժնդակ կնճիռ մը՝ Կիլիկիո Աթոռը կանչատեր Կոստանդնուպոլսո Պատրիարքութենեն։ Օրմանյան, որ կառավարության առաջին միջամտության ի վերջո ստիպված էր տեղի տալ, այս անգամ սակայն անհողդողդ մնաց։

Հիմա թողունք, որ ինքը պատմե. «Այդ միջոցին էր, որ չենք դիտեր ինչ դիտմամբ և որո՛ւն գրգռությամբ, կառավարության կողմեն Կիլիկիո Աթոռը Կոստանդնուպոլսո Պատրիարքութենեն անչատելու և նոր ու ինքնուրույն հասարակության վերածելու գաղափարը ծագեցավ, և առանց Կոստանդնուպոլսո Պատրիարքարանին հաղորդելու, ուղղակի Կիլիկիո տեղապահ Բեքմեզճյան Կիրակոս եպիսկոպոսի հրահանգ տրվեցավ նոր ընտրություն կատարել, և Ադանայի կուսակալ Բահրի փաշա ստացած հրամանը գործադրել ձեռնարկեց, որչափ ալ դեպ առ իս համակիր և զգացումով նպաստավոր էր, մանավանդ, թե յուր պաշտոնի անցնելու համար երախտաճանաչ ալ էր։ Որչափ ալ Բեքմեզճյանի և կիլիկեցվոց և հատկապես ադանացվոց հրահանգներ հասուցինք յուրովի ընտրություն չձեռնարկել, բայց նեղ ժամուն ուժգին միջոց մը գործածելու համար 1902 հուլիսի 20/2 օգոստոսին հրաժարագիրս հասուցի նախարարության և գործե քաշվելու դիրքը ստանձնեցի։ Թեև բանակցությանց կոչվեցա, բայց միշտ պնդեցի, թե բովանդակ օսմանյան հայության պատրիարք ընտրված ըլլալով՝ ինքզինքս ազատ կզգամ, երբոր անոր մեկ մասը ինձ կխլվի, և միայն մնացյալ մասին պատրիարք մնալու կպարտավորվիմ։ Այդ կետին վրա ամուր պնդելս յուր արդյունքն ունեցավ, և կայսրն ալ կառավարական ձեռնարկին ձախող ըլլալը ղգաց, և օգոստոս 18/31-ին հատկապես պալատ հրավիրել տալով՝ պաշտոնապես հաղորդել տվավ, թե Աթոռներու հարաբերությունները ըստ առաջնույն շարունակել հրամայած է, որով ես այլևս հրաժարականս պնդելու պատճառ չունեիր»[142]։

Կմնար նոր ընտրության ձեռնարկել։ Ընտրելիներու վեցանուն ցանկի մը վրայեն, որոնցմե 3-ը կառավարությունը ջնջած էր և 4-ը ինքը հրաժարած, իսկ 5-ը, Մովսես Եպիսկոպոս Կյումրյուքճյան հատենի ժողովի հանձնարարած էր զինքը չընտրել, Երուսաղեմի լուսարարապետ Սահակ եպիսկոպոս Խապայան 62 քվեներու միաձայնությամբ կաթողիկոս հռչակվեցավ «ի մեծ խնդություն և մխիթարություն բոլոր կիլիկեցիներու, ասենք նաև բոլոր հայերու, զի բովանդակ հայության սեռյալ մտահոգություն դարձած էր Կիլիկիո Աթոռին խնդիրը և Կիլիկիո ժողովուրդին կացությունը»[143]։

Խապայանի ընտրությունը իբրև Կիլիկիո կաթողիկոս՝ Օրմանյանը գոհ չթողուց։ Նորընտիր կաթողիկոսը, կաթողիկոս ընտրված և սակայն հրաժարած Գևորգ Երեցյանի հետ միասին, մաս կկազմեին այն համբավավոր երրյակին, որուն երրորդ անդամը՝ Ղևոնդ Մաքսուտյան՝ Երուսաղեմի դժբախտ հարցը ստեղծողն էր, իր գործառնությանց հաշիվը կրցած չըլլալով տալ, և սկսած ըլլալով դիմել ամեն միջոցի՝ անոնց քննությենեն խուսափելու համար։ Ավելին. Խապայան, զեղծումներու մեղսակից չըլլալով հանդերձ, ոչ միայն չէր լքեր իր վաղեմի դասակիցը, այլ պաշտպան կկանգներ անոր, ինչ որ ցույց տվավ կաթողիկոսության կոչվելուն հաջորդ օրեն, մանավանդ երբ արքունիք ներկայանալու առթիվ 1904-ին Պոլիս գալուն, կփորձեր անոր ի նպաստ մթնոլորտ ստեղծել մայրաքաղաքին մեջ։

Այդ օրեն կսկսի խրամատը երկու բարձրաստիճան հոգևորականներուն միջև, և իրենց փոխադարձ հակակրությունը, որ մոտ 15 տարի տևեց, այսինքն մինչև Օրմանյանի մահը, թեև շարունակվեցավ նաև ազգի հետո, հետմահու լույս տեսած Օրմանյանի դրքերուն մեջ ալ։

Այդ է պատճառներեն մեկը, որ սերտ գործակցություն չունեցան Պոլսո պատրիարքն ու Կիլիկիո կաթողիկոսը։

Բայց կար ուրիշ պատճառ ալ։

Իրավասությանց առթիվ վեճերը անպակաս են եղած միևնույն պետության սահմաններուն մեջ գտնվող նվիրապետական Աթոռներու միջև, մանավանդ ինչ կվերաբերի անոնց փոխադարձ հարաբերությանց վարչական խնդիրներու մեջ։ Պարագան ավելի կնճռոտ կդառնար Կիլիկիո Կաթողիկոսության և Կոստանդնուպոլսո Պատրիարքության հարաբերությանց առթիվ, որովհետև իրարու հետ գործ պիտի ունենային պատրիարք մը, որ ավելի լայն իրավասություններով օժտված էր պիտության հետ իր կապերուն մեջ, և կաթողիկոս մը, որ թեև նվիրապետական ավելի բարձր աստիճանի վրա, բայց այնուամենայնիվ Պոլսո պատրիարքին գերադասը չէր և ուղղակի կապ չուներ արքունիքին ու անոր կառավարության հետ։

Հիշելու առթիվ շահագրգռություն, զոր Օրմանյան ցույց կուտար դեպի Կիլիկիո

141 «Ազգապատում», Գ. էջ 5135.

142 «Հոգի և խոսք», էջ 199.

143 «Ազգապատում», Գ. էջ 5139.

Աթոռը, չենք կրնար լուռ անցնիլ դեպքի մը վրայեն, որուն հայտնությունը շատ ուշ միայն ըրավ Օրմանյան, այսինքն հետմահու։ Արդարև զայն կիմանանք «Խոհք և խոսքք»-են։

Միշտ այն օրերուն, երբ ցարական վարչաձևը կփորձեր ճզմել օտար տարրերը և զանոնք զրկել իրենց ազգային գիտակցությենեն, դժնդակ շրջան մը կապրեին Կովկասի հայերը, թիրախ դարձած ըլլալով ցարական հյածանքներուն։ Ցարական քաղաքականությունը կձգտեր ամեն բանե առաջ հայ դպրոցները չքացնել, և այդ նպատակին հասնելու համար պետք էր զանոնք ցամքեցնել իրենց հիմքեն, պետք էր գրավել եկեղեցական կալվածները։ Չէր սպասեր սակայն ընդդիմության, զոր ցույց պիտի տային հայերը իր այս փորձին, և առաջին հերթին էջմիածինը։ Ագնե թշնամությունը, որ իր վրա հրավիրեց Մայր Աթոռը։

Խրիմյան շփոթած էր այս կացության առջև։ Կզգար, որ տակավին կվտանգվեր էջմիածնի գոյությունն իսկ, և որ անհավանական չէին ավելի դժնդակ օրեր, ուր գուցե Մայր Աթոռը զրկվեր իր հոգևոր իրավասությենեն։

Ամենայն Հայոց Կաթողիկոսը, այդ սև օրերը կանխելու համար, պետք էր այժմեն պաշտպանվեր Օրմանյան լավագույն անձն էր, որ կրնար աջակցիլ իրեն իր խորհուրդներովը։

Օրմանյան չէր կրնար չմտահոգվիլ և ինքը։ Ցարը կրնար արդարև էջմիածինը զրկել իր իրավունքներեն։ Ո՞վ էր, որ այն ատեն պիտի կարենար տեր կանգնիլ Հայ Եկեղեցիին։ Օրմանյան միակ ելք մը հնարավոր կգտներ։ Բայց թողունք, որ ինքը պատմե.

«Այդ ժխորին ժամանակ Խրիմյան կաթողիկոս յուր հոգետեսությունն անդրադույն ևս հառաջացնելով, սկսած էր կասկածիլ, որ մի՛ գուցե ռուսական կառավարությունն յուր հակահայկական շարժումը մինչև ծայրը մղելով Հայոց Կաթողիկոսությունը ջնջելու և Մայր Աթոռը տապալելու հանի։ Ուստի Հայ Եկեղեցվո ապագայն խորհելով ինե խորհուրդ կհարցներ, թե ինչ նախազգուշություն հնար էր ձեռք առնել, որպեսզի օր մը Հայ Ուղղափառ Եկեղեցին անգլուխ և անտերունչ ըլլալու փտանգեն ազատ մնա։ Այդ հարցումին ես գրավոր պատասխանեցի. հիշեցնելով Կիրակոս Վիրապեցիին մինչև Մովսես Տաթևացի էջմիածնի մեջ գործածված միջոցը։ Խնդիրի նյութ չեմ ուզեր ընել, թե որչափ օրինական և կանոնական էր լիազույն իշխանությամբ և օծմամբ ճոխացյալ աթոռակիցներ ունենալ Մայր Աթոռո աթոռակալին քովը։ Միայն հայտարարեցի, թե այն ժամանակ դժվարին և գրեթե անհնարին նկատված ըլլալով, կաթողիկոսին մահվանեն ետքը կանոնական ընտրություն կատարել, գործնականապես օգտակար եղած էր կաթողիկոսին կենդանության ատեն աթոռակից ընտրել և օծելը, որով և ոչ վայրկյան մը Աթոռը թափուր մնացած չէր ըլլար, և աթոռակիցը անմիջապես աթոռակալ կդառնար։ Նույն միջոցը ի դեպ էր այժմս ալ գործածել, և որպեսզի աթոռակիցը ռուսական ազդեցության ներքև չգտնվի, և գործածվելիք միջոցը աչքառու նորություն չդառնա, դյուրագույն ձև ցուցուցի Կիլիկիո Կաթողիկոսության աթոռակալը Մայր Աթոռո աթոռակից հռչակել, որպեսզի եթե երբեք էջմիածնի կաթողիկոսը բռնության ենթարկվի, կամ մահվանեն ետքը նոր ընտրության արգելքմամբ Աթոռը թափուր մնա, Հայ եկեղեցին իր գլուխն ու կաթողիկոսը ունենա Ռուսաստանի սահմաններեն դուրս, որ կրնայ յուր իշխանությունը ռուսահայոց վրա տարածել, ինչպես այժմ Ռուսաստանե տաճկահայոց վրա կտարածվի։ Իմ այդ առաջարկը մեռյալ տառ մնաց, զի մեր բանակցությանց վրա շատ չանցավ, և եկեղեցական ստացությանց միջադեպը հաչող կերպով փակվեցավ»[144]։

Բարեբախտաբար տագնապը երկար չտևվեց, ու հարկ չտեսնվեցավ դիմել Օրմանյանի թելադրած բացառիկ միջոցին, որ ի վիճակի էր իր կարգին տարբեր բարդություններու տեղի տալ, Թուրքիո հովանիին տակ բերելով հայ ժողովուրդի հոգևոր կեդրոնը։

13. ԵՐՈՒՍԱՂԵՄՆ ՈՒ ԻՐ «ՊԱՆԱՄԱ»-Ն

Խորագիրը թող ձեզ չշփոթեցնե։ Հատվածը չի վերաբերիր Երուսաղեմի Առաքելական Աթոռին հետ Օրմանյանի ունեցած կապերուն առհասարակ։ Անոր պատրիարքության տասը տարիներուն բնականոն հարաբերություններ էին երկու Աթոռներու կապերը, ու բնականոն ալ կմնային, եթե հանկարծ չպայթեր այն հռչակավոր գայթակղությունը, որ հայ ազգային տարեդարձյանը մեջ կհիշվի «Ղևոնդյան խնդիր» անունով, և որուն նվիրված է իրականին մեջ ներկա հատվածը։

Եթե մասնավոր տեղ տվինք այս էջերուն մեջ այդ հարցին, անոր համար էր, որ ան մասնակի խնդիր մը չէր Օրմանյանի շրջանի ազգային իրադարձությանց մեջ։ Ավելին. թերևս ոչ մեկ խնդիր այնքան չէ հուզած

144 «Խոհք և խոսքք», էջ 222—223.

ազգային կյանքը նախորդ սերունդին օրով, որքան այդ մասնակի հարցը, իր հարուցած փոթորիկներով և իր հետևանքներով։

Մեր դարու առաջին քառորդի ազգային տարեգրությանց մեջ չեք գտներ որևէ հարց, որ այնքան կիրք ու մելան սպառել տված ըլլա, որքան Երուսաղեմի խնդիրը, որ ծանոթ է նաև «Ղեռնդյան խնդիր» անունով։ Իր հիմքին մեջ այդ խնդիրը ուրիշ բան չէր, բայց եթե հարցը կարգ մը զեղծումներու, որոնք կվերագրվեին Երուսաղեմի ելմտական տեսուչ Ղեռնդ վարդապետ Մաքսուտյանին, և որոնց քննությունը դուռ բացավ անվերջանալի վեճերու Երուսաղեմի թե Պոլսո մեջ, ստեղծելով շարքը անթիվ գայթակղությանց, որոնք ամոթալի էջեր ձգեցին երկու Պատրիարքարաններու տարեգրությանց մեջ և զորս հիշելն անգամ գարշանք կպատճառե մարդուս։

Այդ խնդիրն էր նախ, որ քանի մը տասնյակ տարի վրդովեց կյանքը Երուսաղեմի վանքին ներս, տեղի տվավ վեճերու և կընճիռներու, Հարությունն պատրիարքի ծերությունը խոռվեց դավերու, գայթակղությանց աղմուկին մեջ, կազմալուծեց կյանքն ու գործունեությունը դարավոր վանքին և Ազգը պաղեցուց անկե։

Նույն այդ խնդիրն էր, որ երկու տասնյակ տարիներ իրմով զբաղեցուց Պոլսո ազգային իշխանությունները նաև, «Հուրրիեթ»-են առաջ և «Հուրրիեթ»-են հետո, ստեղծեց այնքան հոգեր և վատնեց այնքան ճիգեր, վեճերու առիթ դառնալով ազգային մարմիններու ծոցին մեջ։

Ասկե զատ, կիրքեր գրգռեց ան ազգային շրջանակներե դուրս ալ, երկուքի բաժնեց հանրային կարծիքը, ու մամուլին մեջ ևս ստեղծեց երկու թևեր, փորձության ենթարկելով, ավա՜ղ, հայ խմբագիրներե ոմանց նկարագիրը։

Եվ վերջապես ան դեր խաղաց Օրմանյանի կյանքին մեջ ալ, ոչ միայն 5—6 տարի անընդհատ վրդովելով անոր պատրիարքությունը, այլ դեր կատարելով նաև ամոթալի այն դեպքերուն ատեն, որոնց մեջ վերջ գտավ անոր պաշտոնը իբրև պատրիարք։

Իրականին մեջ, Երուսաղեմի վանքին հետ կապված այն շարաբաստիկ խնդիրը ելմտից տեսուչ Ղեռնդ վարդապետ Մաքսուտյանի վերագրված զեղծումներու հարցն էր լոկ, որ բնականոն պայմաններու մեջ պիտի կարենար իր արագ լուծումը գտնել։

Բայց հարցը առաջին իսկ վայրկյանեն կորսնցուց իր մասնակի բնույթը։ Ան դարձավ ազգային խնդիր։ Եվ ահա թե ինչու։

Ղեռնդ Մաքսուտյան իր ուսանողական տարիներեն սերտ կապերով կապված էր իր ընկերներեն մանավանդ երկուքին հետ, որոնք հետագային բարձրաստիճան հոգևորականներ պիտի դառնային,— Գեորգ Երեցյանը, որ Կիլիկիո կաթողիկոս պիտի ընտրվեր և պիտի մերժեր, և Սահակ Խապայանը, որ պիտի ընտրվեր ինքն ալ Կիլիկիո կաթողիկոս, քառորդ դարե ավելի մնալով Աթոռի վրա։ Արդ, Ղեռնդ Մաքսուտյան վայելեց իր երկու ընկերակիցներուն պաշտպանությունը ոչ միայն իր գործունեության ընթացքին, այլ գայթակղությունը բացվելե հետո ալ, ինչպես նաև ազգային իշխանության կողմե հետապնդված ատեն։

Ղեռնդ մինակ չէր վանքին մեջ։ Ան կգործեր համախոհներու և շահագրգռվածներու զորավոր խումբի մը հետ, որ հաճախ գերակշռություն ալ ուներ միաբանության մեջ և ամբողջ կմատներ հաշվեպահանջ միաբաններու բոլոր ճիգերը մեղադրանքները պարզելու համար։ Այս կերպով զեղծումներու հարցը կդարձներ անհատի մը պատկանելե և կվերածվեր ամբողջ խմբակի մը պատասխանատվության։

Գայթակղության ալիքը ամբողջ վանքին մեջ տարածված այսպես, իր մեջ կընկլուզեր ծերունի պատրիարքն ալ, այն Հարություն Վեհապետյանը, որուն երբեմնի պատրիարքությունը Պոլսո մեջ տիրական գիծերով մարդու մը համբավը շահեցուցեր էր իրեն և որ հիմա, արդեն զառամած, վերածված էր դժբախտ խաղալիքի մը, խամաճիկի մը պես անցնելով մեկ խմբակեն մյուսին, մինչև որ պաշտոնանկության ամոթն ալ ճաշակեր աչքերը փակելե առաջ։

Ղեռնդ առանձին չէր նաև Պոլսո մեջ։ Ան հաջողեր էր իր համակիրները ճարել ըլլա ազգային մարմիններու մեջ, ըլլա Պոլսո մամուլին, և եթե ոմանց աչքին հասարակ զեղծարար մըն էր, ուրիշներ անոր վրա կնայեին իբրև հալածանքներու դժբախտ զոհի մը։ Ղեռնդ իր հետ տարավ գաղտնիքը մեթոդներուն, որոնց շնորհիվ կրցած էր այդքան պաշտպաններ ճարել, հաջողելով ազգային խնդիր մը դարձնել իր հարցը։

Ի՞նչ էր ըրած սակայն Ղեռնդ Մաքսուտյան։ Երկար ատեն չգիտցվեցավ ոչինչ։ Երուսաղեմ կրցավ պարտկել իր ներսի աղտերը։ Իսկ Երուսաղեմի Պոլսո փոխանորդը, Գեորգ եպիսկոպոս Երեցյան, որ վաղեմի սրտակիցն էր Մաքսուտյանի, ամեն բան վարդագույն ցույց կուտար Պոլսո մեջ։ Այսպես շարունակվեցավ Օրմանյանի օրով ալ, որովհետև Ազգային երեսփոխանական ժողովը, որ միակ իրավասուն էր հսկողության տակ առնելու Երուսաղեմը, ստիպված էր ինքն իսկ ընդհատել իր գործունեությունը ու ծվարիլ մեկ կողմ։

Այդ կացութեան ակնարկելով է որ կգրէ Օրմանեան. «Շատոնց է որ կեդրոնը Երուսաղեմի հաշիվները ոչ տեսած և ոչ քննած էր, զի առ այս ձեռնհաս եղող Ընդհանուր ժողովին գործունեութիւնն ալ խափանված էր։ Մենք ալ հաշիվ պահանջելու նախաձեռնութիւնը չունեցանք, զի ոչ միայն Ընդհանուր ժողովի նիստերուն ընդհատումը կշարունակվեր, և կխիթայինք, որ այդ պարագային հիմնվելով մեր պահանջը մերժվեր։ այլև շատ ավելի կարևոր և տագնապալի խնդիրներ մեր ուշնուրուշը գրաված էին, և Երուսաղեմի փոխանորդ Երեցյան ալ սաղիմական գործոց կանոնավոր ընթացքին, ելևմտական կացութեան փայլուն վիճակին, և տարածված զրույցներուն անհիմն և կիրքի հետևանք ըլլալուն լիուլի վստահութիւն կներշնչեր։ Այսպես անցան իբր յոթը տարիներ՝ 1896-են մինչև 1903»[145]։

Զեղծումները նշմարվելե սկսյալ ամբողջ յոթը տարի սքողված մնացին այսպես։ 1903-ին էր միայն, որ անոնք եկան Պոլսո ազգային իշխանութեանց սեղանին վրա։ Վանքին մեջ տեղի ունեցած միջադեպ մը պատճառ դարձավ, որ պալարը բացվի։ Երկու վարդապետներու միջև բախում մը դրպրոցական իրավասութեանց շուրջ, զեղծումներու խնդիրը մեջտեղ հանեց, հաշվեպահանջ և հաշվեխույս երկու կողմեր ստեղծվեցան վանքին մեջ, ու հարցը բերվեցավ Պոլիս։ Այն ատեն էր, որ Պոլսո Պատրիարքարանը պահանջեց Երուսաղեմի պատրիարքեն Պոլիս ղրկել ելևմտից տեսուչ Ղևոնդ Մաքսուտյանը՝ հաշիվներուն հետ մեկտեղ, քննութիւն կատարելու համար։

Ղևոնդ Մաքսուտյան չուզեց ենթարկվիլ։ Ան ոչ միայն կրցած էր իրեն ենթարկել Հարութիւն պատրիարքը, այլ նաև իր կռնակն ուներ իր երկու վաղեմի սրտակիցները հանձինս Կիլիկիո կաթողիկոս Սահակ Բ Խապայանի և Պոլսո փոխանորդ Գևորգ Երեցյանի, ու չներկայացավ Պոլիս։ Պատրիարքարանը այն ատեն ստիպվեցավ դիվանապետ Բարթող Թելյանը քանիշ ղրկել Երուսաղեմ, ուրկե ան վերադարձավ աննպաստ տեղեկագրով մը։ Մաքսուտյան կմերժեր միշտ հաշիվները ներկայացնել, մինչև որ Հարութիւն պատրիարք կստիպվեր զայն հանել ելևմտից տեսչի պաշտոնեն, և Օրմանյան կհարկադրվեր զայն Պոլիս բերել տալ պիտական հրամանով։

Ազգային վարչութիւնը ձեռք կառներ այլևս պաշտոնապես Երուսաղեմի զեղծումներու խնդիրը, և անոր քննութիւնը կհանձներ հատուկ հանձնաժողովի մը։

Օրմանյան կզղջա, որ ուղղակի ինքը ձեռք չառավ Երուսաղեմի հաշիվներուն քննութիւնը, այլ հանձնել տվավ Քաղաքական ժողովի և Տնտեսական խորհուրդի երկերկու անդամներեն կազմված հանձնաժողովի մը, որուն մեջ ինք չմտավ իսկ։ Այս զանցառութիւնը կկարծե, թե ճակատագրական եղավ լարաբաստիկ այդ հարցին համար, որ չկրցավ շուտ մը լուծվիլ և թնճուկի ձև առավ, որովհետև հանձնաժողովին անդամները ի վիճակի չէին կտրուկ ըլլալու, և անոնց մեջ Ղևոնդ Մաքսուտյանի հետ սիրալիր վարվողներ իսկ եղան։ Այնպես որ տեղեկագիրը, զոր հանձնաժողովը բերավ վարչութեան, թերի էր, և պետք տեսնվեցավ Ղևոնդ վարդապետի ներկայացուցած հաշիվները տեղվույն վրա ստուգել։

Տեղվույն վրա առանձին ստուգում մը կատարեցին տնտեսական խորհուրդի անդամներեն Գևորգ Ասլանյան, Պատրիարքարանի մյուս դիվանապետին՝ Կարապետ Խաչատուրյանի հետ, առանց լիակատար տեղեկագիր մը բերելու։ Հաջորդ պատվիրակութիւնը, որ Կրոնական ժողովի դեր-ատենապետ Վահրամ եպիսկոպոս Մանկունին և Պատրիարքարանի գործակատար Արիս Ֆեսճյանն կբաղկանար և 1907-ին մեկնած էր Երուսաղեմ, «Մաքսուտյանի ընթացքը նշավակող և զեղծումները հաստատող լիուլի պաշարով ստվար տեղեկագիր մը կկազմեր»[146]։

Հաղիվ 1908-ի սկիզբն է, որ Ազգային վարչութիւնը լրջորեն ձեռք կառնե հարցը, բոլոր նոր ու հին տեղեկագիրները և վավերաթուղթերը, ամբաստանագիրներն ու պաշտպանողականները հանձնելով Քաղաքական ու Կրոնական ժողովներու ատենապետներեն և դեր-ատենապետներեն կազմված հանձնաժողովի մը՝ քաղդատելու, քաղելու և եզրակացնելու համար։

Բայց ճիշտ այն պահուն, երբ Ղևոնդ Մաքսուտյանի խնդիրը իր լուծումը պիտի պտներ վերջնապես, Շամիդ «Հուրրիեթ»-ը հռչակեց։ Օրմանյան տապալեցավ, ազգային իշխանութիւնները կազմալուծվեցան պահ մը, ու փոխարեն աշխուժացան Ղևոնդ Մաքսուտյանի վարձկանները։

Այդ արդեն ուրիշ գլխի նյութ է։

Ըսենք միայն, որ Օրմանյանի գործոն մասնակցութիւնը Երուսաղեմի խնդրին մեջ և մանավանդ անոր եռանդուն փորձերը զեղծումները ամեն գնով երևան հանելու, ճակատագրական պիտի ըլլային օր մը իրեն համար ալ։ Արդարև, 1908 հուլիս 16/29-ի ցույցին մեջ, որ Պատրիարքական Աթոռեն

[145] «Եռեռգ և խոսք», էջ 211։

[146] Անդ, էջ 226։

հեռացուց Օրմանյանը, Ղեոնդի վարձկան պաշտպաններն ալ իրենց դերն ունեցան, և իրեն դեմ մղված պայքարին մեջ գործուն մաս առին, Ազգային երեսփոխանական ժողովին թե մամուլին մեջ, Ղեոնդի կուսակիցները։

14. ՕՐՄԱՆՅԱՆ ԵՎ ՄՅՈՒՍ ԴԱՎԱՆԱՆՔՆԵՐԸ

Պոլսո հոգևոր պետերուն միջև փոխադարձ այցելություններ վաղուց է կային։ Անոնք սկիզբ առին Մատթեոս Զուխաճյան պատրիարքի օրով հոգևոր տերերու գահակալության առթիվ, երբոր շնորհավորական այցեր սկսան տալ անոնք իրարու։

Օրմանյանն եղավ, որ պաշտոնական ձևի վերածեց այցելությունները հոգևոր պետերու միջև։ Միշտ շնորհավորական այցելություններ էին անոնք և տեղի կունենային ամեն տարի Զատիկվան առթիվ, երբ առաջին անգամ Օրմանյան ինք կայցելեր Հունաց Պատրիարքին, որ հետո կփոխադարձեր անոր այցը։ Հայ կաթոլիկ պատրիարքը առաջին անգամ ինքն էր որ կուգար Հայոց Պատրիարքարան, և ապա կընդունուր հայոց պատրիարքին փոխադարձ այցը։ Բողոքականներու ազդապետը ես առաջ ինքն էր որ կուգար։

Օրմանյանի պատրիարքության տարիներուն ընականոն էին այսպես պաշտոնական հարաբերությունները մյուս երկու հարանվանությանց հետ, թեև այդ պաշտոնական հարաբերությունները պայմանագրական այցելություններեն անդին չէին անցնիր հաճախ։

Պետք է ըսել, որ ներքին պայքարները վաղուց է գաղրած էին հայ կաթոլիկ համայնքեն ներս։ Թեև առավելապես վարչաձևին բերումն էր այդ, որ որեէ վեճ թույլ չէր տար համայնքներու ծոցին մեջ։ Մյուս կողմե կաթոլիկ պրոպագանդան ալ մեղմացած էր, և բռնի լատինացման փորձեր ատեն մը չեղան։ Ասկե զատ հայ կաթոլիկ պատրիարքության ենթակա բոլոր եկեղեցիները իրենց հայ ծեսը կպահեին, թեև թթու կաթոլիկներու լայն խավ մը միշտ կար, որ կշարունակեր ինքզինք «կաթոլիկ միլլեթիս» նկատել, համառելով ձերբազատված մնալ հայ կոչումեն, և այդպես ալ կարձանագրվեր պետության տոմարներուն մեջ։ այդպես կարձանագրվեր նաև իրենց ազգությունը իրենց անձնաթուղթերուն մեջ (նուֆուս թեզքերեսի), ու ադով իրենք զիրենք ապահովված կկարծեին հալածանքներեն, որոնց ենթակա էր հարազատ հայը։ Պետք է ըսել, որ «կաթոլիկ միլլեթիս»-ին պատկանողները հրբեմն իրապես զերծ էին համիդյան վարչաձևին ինչ-ինչ սեղմումներեն, և կրնային, օրինակ, երկրին մեջ ավելի ազատ ճամբորդել։

Այս բոլորով հանդերձ հայ ավանդությանց հավատարիմ տարր մը միշտ կար կաթոլիկ հայ համայնքի ծոցին մեջ։ Այդ բանին մեջ Մխիթարյանները իրենց բարերար դերն ունեին, վենետիկցիներն ըլլան թե վիեննացիները։ Սերունդը, որ Մուրատ-Ռափայելյանեն կուգար, կկատարեր թթխմորի իր դերը։ Նույն դերը կկատարեին նաև Մխիթարյանց բացած վարժարանները Պոլսո մեջ թե դավառները, և թույլ չէին տար, որ հայ լեզուն բոլորովին չքանա հայ կաթոլիկ համայնքին ծոցեն։

Հայ բողոքականները իրենք զիրենք ավելի մոտ կզգային հայության, թեև, պետք է ըսել, որ անոնց թթուները ավելի ահավոր էին հաճախ։ Փոխարեն՝ մարդորսության փորձերը ավելի շատ անոնց կողմե կուգային հիմա։ Բողոքական միսիոներները կկատարեին այն միևնույն դերը, զոր երբեմն կատարած էին ունիտոռները, սա տարբերությամբ, որ բողոքականները կփորձեին «քրիստոնյա» դարձնել «հեթանոս» հայը, մինչ ունիտոռները աշխատած էին «հերետիկոս»-ները դարձնել «ուղղափառ»։ Բողոքական միսիոներներու խայծը առավելապես իրենց բացած կոլեջներն էին, ու մանավանդ իրենց սաները Ամերիկա՝ դրկելու խոստումները։ Միսիոներներու մեջ որքա՜ն զզվելիները կային, որոնք հայը կմեռցնեին հայուն մեջ։

Երբ Օրմանյանի պատրիարքության շրջանին մեղմացած էին դավանական վեճերը, պատճառը Համիդի դրաքնությունն էր մասամբ, որ առհասարակ վիճերն կզդուշանար, թեև մարդորսության փորձերը միշտ կշարունակեին ըլլա բողոքական միսիոներներու, ըլլա կաթոլիկ գործակալներու կողմե, որոնք վարժված էին շահագործելու հայկական թշվառությունը։

«Կարոտներու և որբերու համար կաթոլիկներեն ընձեռված նպաստները,— կգրե Օրմանյան,— իբր խայծ կծառայեին կրոնական որսորդություն տարածելու։ Ինչ որ առաջ քողարկյալ և վարպետ ձևով կգործվեր, հետզհետե սկսավ համարձակ ընդարձակվիլ և գրեթե պաշտոնապես հաց ցամքած ատեններին՝ փոխարեն պահանջեցին անոնց լույս հավատքը, և դրամ տված ատեններին եկեղեցին փոխել պայման դրին, և այնչափ ալ հառաջեցին, որ հավատացյալը այդ պայմանը չգործադրեն, սկսան նաև դա-

տաստանավ և բռնի հետս առնուլ տված ողորմութիւններնս»[147],

Կարծես արդարացնելու համար խլրդային այդ աշխատանքները, հանկարծ 1899 մարտին հրապարակ կելլեր գրքույկ մը, որ «Մեր սուրբ հարց դավանութիւնը» խորագիրը կկրեր, և որուն իբրև հեղինակ կներկայանար Մկրտիչ Աշճյան անուն կաթոլիկ վարդապետ մը, թեև Օրմանյան հավանական կգտնե, որ գրքույկը ներշնչված էր ուղղակի հայ կաթոլիկներու պատրիարք Ազարյանեն։ Գրքույկը, որ լույս տեսած էր իբրև թե սպրդելով գրաքննության ուշադրութենեն, միակ նպատակ ուներ ապացուցանել, թե Հայ Եկեղեցին սկիզբեն իսկ ենթակա եղած է պապին, և թե Լուսավորչեն սկսյալ մինչև Ներսես Լամբրոնացի, բոլորն ալ հռոմեադավան եղած են։

Օրմանյան չէր կրնար առանց պատասխանի թողուլ Հայ Եկեղեցվո մասին եղած այս վերագրումը այնպիսի պահու մը, երբ կիրքերը խաղաղած կկարծվեին ա՛լ։ Չէր բավեր սակայն քարոզներու մեջ ձաղկել այդ անտեղի հրատարակությունը, այլ պետք էր գրքին պատասխանել գրքով. իսկ այդ հնարավոր չէր գրաքննության այն օրվան պայմաններուն մեջ։ Միակ ելքը կոնդակով մը պատասխանելն էր, որովհետև կոնդակները գրաքննության ենթակա չէին։ Ու արդարև Օրմանյան իր պատասխանը լույս ընծայեց 1899 մայիսին կոնդակի մը ձևով, ուր գրեթե ամբողջ գիրք մը խտացած է և ուր նախապես կնշանակե ողորմության ձևի ներքև դավանակից որսալու անճահ ձեռնարկը, կբացատրե Պետրոս առաքյալի գերագահության պարագան, կհերքե Լուսավորչի Հռոմ երթալուն, Սեղբեստրոս պապեն ատիճան և շնորհ ընդունելուն և «Դաշանց թուղթ»-ին գրույցները, և կպարզե Հայ Եկեղեցվո հայրերեն բերված վկայությունները, որոնց վրա կհենուր Աշճյան վարդապետի տեսությունը։

Կոնդակի ձևով հրապարակ ելած այս պատասխանը այլապես Օրմանյանի միակ հրատարակությունն էր դավանական հարցերու մասին իր պատրիարքության ընթացքին։

15. ՕՐՄԱՆՅԱՆ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅԱՆ ՀԱՆԴԵՊ

Նախընթաց գլուխներու մեջ տեսանք, թե Օրմանյան հայկական շարժման հանդեպ որոշ խանդավառություն է ունեցած իր երիտասարդության։ Կարնո շարժումը, օրինակ, որ խմորվեցավ իր իսկ աչքերուն տակ, իր համակրությունն ալ ունեցած է հետը։ Եվ այդ պարագան, որ գաղտնիք չէ մնացած որոշ խավերու, հմայք մը ստեղծած է իրեն համար երիտասարդության աչքին։ Այդ հմայքին արձագանքն են Զոհրապի տողերը Օրմանյանի մասին, թե ան եպիսկոպոսներուն երիտասարդն է և երիտասարդներուն եպիսկոպոսը։

Օրմանյան Կարինեն դարձին ևս այդ հմայքը երկար ատեն պահած է իր վրա, և հետևաբար առանց զոհունակության չէ, որ ընդունած են հեղափոխական շրջանակները իր պատրիարք ընտրվիլը 1896-ին։

Եվ սակայն պարագաները ուրիշ Օրմանյան մը դրին Պատրիարքական Աթոռին վրա։ Այդ պարագաները թույլ պիտի չտային, որ ան շարունակե Իզմիրլյանի ավանդությունները Պատրիարքարանի մեջ և իր վրա պահե կուսակցականներու երբեմնի համակրությունը։ Արդարև, Օրմանյան կըսե, թե իր պաշտոնավարության շրջանին Համիդ ոչ նվազ դժվարություն պատճառած են իրեն կուսակցականները։ «Անոնք,— կգրե Օրմանյան,— զիս իրենց կամակից գիտնալով 1882-ի Կարնո դեպքերու հետևանոք, իմ պատրիարքական ընտրության չէին ընդդիմացած[148]։ Օրմանյան պատրիարք այլևս սակայն Կարնո առաջնորդը չէր, ինչպես 1896-ը նման էր երբեք 1882-ին։ Տասնչորս տարիները, որ սահած էին Կարինեն ի վեր, նոր պայմաններ ստեղծած էին հայ ժողովուրդին համար և խրամատը ավելի ևս լայնցուցած երկու հակոտնյա մտայնությանց միջև։ Պետք էր կամ Համիդի դեմ պայքարը շարունակել և կամ սիրաշահիլ Համիդը։ Այս ճամբաներեն մեկը պետք էր նախընտրել։

Նոր պատրիարքը վերջինն էր, որ նախընտրեց։

Օրմանյան, այս կերպով, ճակատ կստեղծեր սակայն իր դեմ ալ։

«Կուսակցական մարմիններեն,— կգրե ան,— շարունակ ստիպում կրեցի, կամ իրենց գաղափարներուն համակերպիլ ու ձեռնարկները քաջալերել և կամ պատրիարքությենե հրաժարիլ։ Զիս բռնադատելու համար երեսունի չափ սպառնական նամակներ տեղացուցած են վրաս, անդամ մը մահափորձ ալ բրած են հրազենով և ուսես վիրավորած, բայց ես հարկ չեմ տեսած ընթացքս փոփոխել, որչափ ալ կանուխեն ավելի համարձակ գաղափարներու ծառայած ըլլամ։ Ուրիշ է անհատական անձ մը ըլլալ, և ուրիշ է հանրության օգուտին պատասխանատվությունը կրելը»[149]։

147 «Ազգապատում», Գ. էջ 5105։

148 «Հայրենիք և խաղաղ», էջ 33։

149 Անդ, էջ 18։

Եվ արդեն Օրմանյանի դեմ պայքարը կսկսի, հետզհետե դառնալով ավելի բուռն և ավելի աններող։

Օրմանյան տեղյակ էր անշուշտ արտասահմանի մեջ իր դեմ գրվածներուն։ Գիտեր, որ ազատ երկրի մեջ նստող մը տարբեր կդատե ներսը, և պարզ քաղաքացի մը բոլորովին ուրիշ կերպով կմոտենա հարցերուն, քան պատասխանատվություն ստանձնող մարդը։ Ինքն անդամ, ինչպես կխոստովանի, տարբեր տեսություններ ունեցած էր հայ ժողովուրդը հուզող խնդիրներուն մասին Պատրիարքական Աթոռը չեկած։

Ճիշտ է, որ արտասահմանի քննադատությունները, թերթերու բեմեն, երբեմն սահմանը կանցնեին. անոնք կփոխվեին ուղղակի հայհոյանքի։ Օրմանյան կըսե, թե իր առաքելության գիտակ, բոլորովին պաղարյուն մտիկ կրներ այդ բոլորը. բայց չենք գիտեր, թե հոդեկան ի՞նչ խռովք զգաց ան, երբ կաղանդի մը փաթթոց մը նվեր ղրկեր էին իրեն Բուլղարիայեն. ավելի դառն թված պետք է ըլլա իրեն այդ, քան սպառնական նամակները, զորս անընդհատ կստանար, և ավելի դարհուրելի, քան այն գնդակը, զոր իր ուսին ստացավ Մայր Եկեղեցիի մեջ պատարագած ատեն։

Օրմանյան կըսե, թե բոլոր այդ թշնամական արտահայտությունները օգտագործած է ինք դիրում մը ավելի կորզելու համար Համիդեն, և թե հաջողած ալ է։

... Ավելի հետո, երբ այլևս դիրքի վրա չէր և Օրմանյան պատրիարքը պիտի ներկայացներ վաղվան մարդոց, ինքն ալ չէ խնայած իր բառերը ամեն անգամ, որ պետք զգացած էկուսակցականներու և անոնց գործունեության մասին խոսիլ։

Այստեղ արդեն Մաղաքիա Օրմանյան Կարնո երբեմնի առաջնորդը չէ. ան համոզված հակահեղափոխական մըն է ա՛լ։

16. ՕՐՄԱՆՅԱՆ ԵՎ ԵՎՐՈՊԱՆ

Այն օրեն ի վեր, որ հայ ժողովուրդը իր դատը կապեց Եվրոպայի կարեկցությանը, ահավոր տագնապներե անցավ ան։ Հույսերն ու հուսախաբությունները անընդհատ հաջորդեցին իրարու։ Կդինովնա ու կմոլորի ժողովուրդ մը, որ իր ճակատները հույսերու և երազներու կհանձնե, ու կշփարի և կայլթաքի ամեն մեկ հուսախաբության հետ։ Ցնորքներով տարվող ժողովուրդ մը ադեմի պահուն կսթափի միայն, և ժողովուրդ մը, որ սթափելե հետո կլեցվի դառնությամբ, կկորսնցնե այլևս իր հոգեկան խաղաղությունը. բայց երբեմն կընդվզի ալ։ Հայ ժողովուրդը ևս հուսաց և հուսախաբ եղավ, մոլորեցավ և սայթաքեցավ հաճախ։ Իր ուժերը դավաճանեցին իրեն, ինչպես դավաճաներ էին իր հույսերը։ Իսկ Եվրոպան խաբեց միշտ դայն։ Անոր հույսերն հրահրեց ու դայն լքեց ադեմի պահուն, անոր ընդվզումը տեսավ, բայց զոհը մինակը թողուց իր դահիճին հետ։ 1878-են մինչև 1896 շատ կարճ շրջան մըն է պատմության համար, բայց որքա՜ն ցնորք և որքա՜ն ադեմ այդ կարճ շրջանին մեջ, որքա՜ն ճիգ ու որքա՜ն արյուն։ Եվրոպան այդ բոլորը կտեսներ ու կմնար լուռ։ Քանի մը կեղծավոր ճառ խորհրդարաններու բեմեն, ու քանի մը դիր Բարձրագույն դռան, ու «քաղաքակիրթ» աշխարհը իր պարտքը լիուլի կատարած ըլլալ կկարծեր։

Համիդ որևէ մեկեն ավելի կճանչնար սակայն Եվրոպան։ Ան գիտեր հակամարտությունները, որոնք կրաժնեին Եվրոպան, և գիտեր նաև օգուտ քաղել անոնցմե։ Ավելին. ինքն ալ իր կարդին կարեր այդ հակամարտությունները, որովհետև կհավատար բաժնելով տիրելու ուժին։ Արևելյան խնդիրը Համիդի օրով ուրիշ բան չէր, բայց եթե Եվրոպայի փորձերը «հիվանդ մարդու» հոշոտելու և ավարը բաժնելու, ու Համիդի ճարտարությունը զանոնք գրգռելու իրարու դեմ, ու վտանգի պահուն դանոնք լռեցնելու պզտիկ գիջումներով։ Ականջը սրած, Համիդ կհետևեր Եվրոպայի ներքին վեճերուն, ստուգելու համար, թե ո՞րն է ուժեղը տվյալ պահուն, որպեսզի ինքն ալ պզտիկ մը շեղե իր քաղաքականությունը։ Եթե հովերը ավելի ուժեղ կուդային Բրիտանական կղզիներեն, մեծ եպարքոսի պաշտոնին կբերեր խսկույն Քյամիլ փաշան, որ ճանչցված էր իբրև անգլիացիներուն մարդը. երբոր Գերմանիան ամուր կկարծեր, Սայիդ փաշան կկանչեր Բարձրագույն դուռ։ Ու քանի՜-քանի՜ անգամ այս երկու փաշաները փոխնիփոխ հայորդած են իրարու իբր մեծ-վեզիր Համիդի իշխանության տարիներուն։ Վերջին տասնամյակին էր միայն, որ անոնք հանգիստ նստած էին իրենց ապարանքներուն մեջ, որովհետև Համիդ կկարծեր, թե առ այժմ անվնաս է Եվրոպան։ Հայկական խնդիրը ազատած էր անոր ճիրաններեն, իսկ մակեդոնական հարցը կաշխատեր շարթնցնել իր քունեն։

Օրմանյանի պատրիարքության շրջանին Եվրոպան անգամ մըն ալ մեկուսացած էր ուրեմն իր անփառունակ անտարբերության մեջ, ինչ կվերաբերեր Հայկական դատին։ Ականջը խցած իր տառապանքին մեջ գալարվող ժողովուրդի մը ճիչերուն, ան խցած էր և իր խղճմտանքը։ Ջարդերը, որոնք 1895-ին

և 1896-ին զգետներ էին ժողովուրդ մը իր վերելքի թափին մեջ, ծառայեր էին միայն Եվրոպայի շահերուն։ Անոնք պատրվակ էին Համիդեն ավելի դյուրին կորզելու իրենց պատարել եվ արդարև, ամեն մեկը բան մը կորզած, Համիդը ազատ ձգած էին իր բոլոր նախաձեռնությանց մեջ։

Եվ սակայն Օրմանյան ես քանիցս առիթը ունեցավ դեմ-հանդիպման գալու Եվրոպային։ Պահու մը, երբ Եվրոպան, թեև բաժնված երկու ճակատներու միջև, բայց Պոլսո մեջ համախումբ կներկայանար վեց մեծ պետությանց պիտակին ներքև, և այդ վեց մեծ պետությանց Պոլսո դեսպանները իրենց սարսափին տակ կպահեին Համիդը իրենց ամենօրյա միջամտություններով և կփորձեին շահագործել ամեն մեկ հարց, որ Թուրքիան կխոովեր ներսեն, հայոց պատրիարքը չէր կրնար պաշտոնական շփում չպահել անոնց հետ։ Որքան ալ գիտնար, թե ի՛նչ դառն հեգնություն կա պահված Եվրոպայի անուշ խոսքերուն ներքև, սակայն չէր կրնար արհամարհել զանոնք։

«Դեսպանատուներուն հետ հարաբերությունս կատարյալ և լավ էր,— կգրե Օրմանյան,— եվրոպական լրատու գործակալության հետ ալ շարունակ հաղորդակցության մեջ էի, պետական պաշտոնատանց ընթացքին ներքնապես տեղյակ էի, չէի կրնար ինքզինքս խաբել, և Ազգին մեջ շփոթ և տերության կողմե բռնություն հարուցանելով կարծել, թե Եվրոպա անմիջապես միջամտություն պիտի գործե հայոց պաշտպանության, ինչ որ կուսակցական մարմիններու երազն էր, և անոր վրա կհիմնվեր իրենց ծրագիրը»[150]։

Դեսպանատուներու հետ իր ունեցած կապին մասին խոսելով, Օրմանյան կգրե այլուր. «Արտաքին հարաբերությանց շրջանակին մեջ կմտնա նաև դեսպանատուներու հետ պահվելիքը, և հետևաբար զանց չէի կրնար ընել այդ կետն ալ, քանի որ անոնց տրամադրություններեն կախում ունեին պետական գործերը։ Վեց մեծ պետությանց դեսպաններուն հետ ալ մոտեն հարաբերություն պահած եմ, օսմանյան կառավարության հանդեպ անոնց պահած միտքին մոտեն տեղեկացած եմ, դաշնագիրներու գործադրության և քրիստոնեից պաշտպանության համար ունեցած տրամադրություններուն և հրահանգներուն ներքին ծանոթություն ունեցած եմ, և ըստ այնմ առաջնորդված եմ իմ պաշտոնական քայլերուն մեջ։ Առանց մանրամասնությանց մտնելու բավական ըլլա ավելցնել, թե գործունյա դեր մը գտած չեմ անոնց մոտ, իսկ ազգային շարժումներով անոնք ստիպելու միտքն ալ երազատեսություն սեպած եմ»[151]։

Հայկական խնդիրը իր նախորդներեն ոմանք արծարծեր էին, երբ տարբեր պայմաններ կային։ Վարժապետյանի փորձերուն Եվրոպան պատասխաներ էր, սակայն քմծիծաղով մը, հայ ժողովուրդի երեսին նետելով թուղթի կտոր մը միայն։ Իզմիրլյան ավելի դժբախտ էր եղեր. ան բոլորովին անտարբեր գտած էր Եվրոպան արյան հեղեղներուն առջև, զորս անոր իսկ տված հույսերն ստեղծեր էին։ Վեհապետյան և Աշրքյան Հայկական հարցին երբեք մոտեցած չէին և հետևաբար առիթ ունեցած չէին Եվրոպան ճաշակել Օրմանյան իշխանության կուգար երբ այդ Եվրոպան, ամուր կղպած իր խղճմտանքը. Համիդին կդարպասեր, հերթը դիջած Գերմանիո Վիլհելմ կայսեր. որ Թուրքիան իր ափին մեջ կուզեր ունենալ, ավելի հեռուն ձգտելե առաջ։ Օրմանյան միամտություն կկարծեր այդ օրերուն որևէ փորձ Եվրոպայի խղճմտանքը արթնցնելու. Անգլիո նավատորմը միշտ պիտի չկարենար Արարատը բարձրանալ, իսկ Գերմանը միշտ պիտի չուզեր պոմերանացի գինվոր մը անդամ զոհել, եթե դիտնար իսկ, թե ժողովուրդ մը պիտի փրկե. Օրմանյան գիտեր, որ երբ իրենց պետության սեփական շահն է խնդրո առարկա, միևնույն մարդը կդառնան Բիզմարկն ու Գլադստոնը։ Ի՞նչ կարժեր Հայկական դատը, երբ Անգլիո Կիպրոսը պետք էր, ու Գերմանիոն՝ Բաղդադի երկաթուղագիծը. իսկ ի՞նչ շահ ունեին Հայաստանեն։

Օրմանյան կրսե սակայն, թե ցույց տված Եվրոպային, որ հույսը կտրած է իրմե. սիրալիր կապեր միշտ պահեց Եվրոպայի հետ. հարգանքի պայմանագրական ձևակերպությանց մեջ երբեք չթերացավ. նույնիսկ փորձեց Վիլհելմ կայսեր ներկայանալ, երբ ան Պոլիս էր եկած Համիդին այցի, ու մեղքը իրը չէ, եթե ձախողեցավ այդ ունկնդրությունը։

Եվ մյուս կողմե Օրմանյան կուզեր, որ հայ ցավերը արձագանք գտնեն դուրսը։ Առիթ չէր փախցներ դեսպանատանց ականջը հասցնելու դժնդակ փաստեր, զորս այլապես պիտի չգիտնար Եվրոպան։ Մենք մոտեն գիտենք, որ ան երբեմն Պիեռ Քիյառին ձեռքը կհասցներ գավառեն ստացված սրտաճմլիկ լուրերը, որպեսզի անոնք լույս տեսնեն «Պրո Արմենիա»-ի մեջ. անոնք կստացվեին հաճախ Թարգեն վարդապետի մոջոցավ, որ իրրև թե զանոնք գաղտնի կվերցներ Պատրիարքարանեն. հետագային միայն պարզվեցավ, որ Օրմանյան ուղղակի ինքն էր, որ կուտար զանոնք։

150. «Հիշեր. և խոսք», էջ 78.

151. Նույն, էջ 81.

Սկեպտիկ էր ան դեպի Եվրոպան, բայց անիմաստ կգտներ զայն արհամարհել։ Իր պատրիարքության ամբողջ շրջանին խուլ մնաց սակայն Եվրոպան։ Ան արհամարհեց հայ ժողովուրդն ու իր դատը։ Ան շարունակեց խնամել «հիվանդ մարդը»։

17. ԼԱՀԵՅԻ ՀԵՌԱԳԻՐԸ

Դեպքերեն մեկը, որ իր պատրիարքության դուգադիպեցավ և որուն առթիվ Օրմանյան անախորժությանց պիտի հնթարկվեր պատրիարքութենեն իյնալե հետո, Լահեյի խորհրդաժողովն էր, որ տեղի ունեցավ 1899-ին Ռուսիո ցարին նախաձեռնությամբ, իբրև թե խաղաղությունը ամրապնդելու համար աշխարհի ժողովուրդներուն միջև։

Ինչպես բոլոր միջազգային նման դեպքերու, այս առթիվ ալ ցնորքներով տարված էին հայերը, կարծելով, թե իրենց խնդրով ալ պիտի զբաղին պետությունները Լահեյի մեջ, կամ թե նկատի պիտի առնեն զայն, եթե պաշտոնապես ներկայացվի իրենց հարցը։

Եվ ինչպես բոլոր նման առիթներու, այս անդամ ալ կասկածներով պաշարված էր Սուլթան Համիդը, վախնալով, որ Լահեյի մեջ Հայկական հարցը նկատի կառնվի, հոգ մը ևս ստեղծելով իրեն։

Այս պայմաններուն մեջ է, որ ծագում կառնե այն դժբախտ խնդիրը, որ հայ տարեգրությանց ալ անցավ «Լահեյի հեռագիրը» խորագրին ներքև։

Սկիզբը որևէ կնճռոտություն չկար. Լահեյի մեջ վիճաբանության նյութ պիտի չդառնային պետությանց ներքին գործերը։

«Ռուսաց կայսրը գեղեցիկ խորհուրդ մը հղացավ,— կգրե Օրմանյան,— պատերազմներու աղետը խափանել, և այս նպատակով բոլոր պետությանց դիմեց և համահաճություն կազմեց դեսպանախորհուրդ մը կատարել, որուն տեղ որոշվեցավ Հոլանդիո կամ Ստորին Նահանգաց թագավորանիստ Լահեյ մայրաքաղաքը։ Դեսպանախորհուրդը միակ նյութ պիտի ունենար,— պատերազմները խափանելու միջոցներուն վրա խորհիլ և խորհրդակցիլ, առաջարկներ կազմել և որոշում կայացնելու դյուրություն ընծայել. բացարձակ կերպով պայմանավորված էր յուրաքանչյուր պետության ներքին գործերը կամ մասնավոր խնդիրները ոչ առաջարկի և ոչ վիճաբանության նյութ ընել։ Գրեթե աշխարհի բոլոր պետությունները ներկայացուցիչներ հղեցին, օսմանյան պետությունն ալ մասնակցեցավ հատկապես շեշտելով, որ իր ներքին գործերը խնդիրի նյութ պիտի չըլլան»[152]։

Հետո սակայն արտասահմանի հայերը ուզեցին Լահեյեն օգտվիլ՝ հայկական ցավերը պատմելու համար Եվրոպային։ Համիդ, այլայլմե եղած, սկսավ իր զայրույթը Թուրքիո հայերեն առնել՝ նոր խստություններ կիրարկելով անոնց դեմ և ավելի ծանր սպառնալիքներ ընելով։

«Այդ պարագաները հրատարակված և հրապարակված ըլլալով միատեղ,— կգրե Օրմանյան,— հայ կուսակցական կեդրոններ որոշեցին Հայկական խնդիրը դեսպանախորհուրդին առչև հանել և նպաստավոր որոշում և լուծում ստանալ, և այս դիտմամբ պարբաստություններ և շարժումներ սկսան կազմակերպել Եվրոպիո և Ամերիկո զանազան քաղաքաց մեջ։ Լուրերը Կոստանդնուպոլիս ալ հասան և 1899 ապրիլ 14-ին կառավարության կողմե հատուկ ազդարարություն եղավ պատրիարքին՝ զգուշանալ և ժողովուրդը զգուշացնել։ Պատրիարքը, դործերուն ընթացքին և եղելությանց և տեղեկությանց հետևող՝ վստահեցուց, թե մեր մեջ այդպիսի շարժումներ տեղի չեն ունենար, միայն, թե արտասահմանի մեջ եղածներուն երաշխավոր չի կրնար ըլլալ, քանի որ իր իրավասությենեն դուրս կդտնվին։ Կառավարությունը այս բացատրությանց վրա նորեն հայոց մասին գործածված բացառիկ խստությունները ծանրացուց, նպատակ ունենալով արտաքիններուն հետ հարաբերությունները արգիլել, միանգամայն ավելի սաստիկ միջոցներու սպառնալիքներ ալ ավելցնել»[153]։

Համիդի կատաղությունը ավելի ևս գրգռվեցավ, երբ լուր ստացավ, թե Մինաս Չերազ հանձն առած է Լահեյ ներկայանալ՝ հայկական բողոքները ներկայացնելու համար դեսպանախորհուրդին։

Եվ ահա դժնդակ վայրկյանը հասավ Օրմանյանի համար. պետք էր հնարք մը դտնել և մեղմել Համիդի կատաղությունը։

«Չերազի Լահեյ եկած ըլլալուն լուրը հասավ։ Կոստանդնուպոլսո մեջ ալ խոսքեր տարածվեցան, որոնք դործեր կարծվելով, խստություններ սաստկացնելու պատճառ նկատվեցան։ ...Որոշման մը հանգելու, քայլ մը առնելու հարկը անհրաժեշտ դարձավ, բայց ոչ հնար էր տաճկահայոց կացությունը հայտնել, և ոչ ալ պաշտոնապես ստել։ ... Օրմանյան բռնադատված էր որևէ հայտարարություն մը ընելով կայսերական ցասումը շիջուցանել, ինչպես ստիպված էր որևէ հա-

[152] «Ազգապատում», Գ, էջ 5110։

[153] Անդ։

կառակ հայտարարություն չընել, որ ոչ միայն կացության իսկությունը ուրացած չըլլար, այլև ինքն իրեն շարունակյալ գանգատներուն և նույն օրեր իսկ ուղղած բողոքներու հակառակ չըլլար»[154]։

Օրմանյանի համար այլևս հնարավոր չէր խուսափիլ։ Ան ինքզինքը ստիպված կարծեց հեռագրել գեսպանախորհուրդին, թե Պատրիարքարանը պաշտոնական հանգամանք չի ճանչնար իրեն դիմողներուն վրայ։

«Իսկույն խորհրդակցության մտավ Քաղաքական ժողովո անդամներեն և անդամ չեղողներեն ոմանց հետ,— կգրե Օրմանյան, — և փոխադարձ հավանությամբ գաղղիերեն հեռագիր մը խմբագրվեցավ, որուն իմաստն էր, թե պաշտոնական կերպարան չենք ճանչնար այն անձանց վրա, որոնք լրագիրներու գրածին համեմատ գեսպանախորհուրդիդ կդիմեն Հայ Ազգին անունով, և անոնց գիմելն ալ չենք ճանչնար»[155]։

Օրմանյան այս բոլորը պատմելով կուզե վճռապես ըսել, թե իրեն համար անհնար էր այդ հեռագիրը չուղղել, և թե ան որևէ վնաս չէ բերած հայ ժողովուրդին և իր դատին։

Օրմանյան կավելցնե, թե մայիս 12-ին տված իր հեռագիրը Ազգային վարչության մայիս 14-ի հերթական նիստին «հաղորդվեցավ և լիագույն հավանությամբ ընդունվեցավ, թեպետ ատենագրության չանցավ, ինչպես սովորություն էր այդպիսի փափուկ խնդիրները և հարաբերական դարձվածները ատենագրության չանցունել և հրապարակ չհանել»[156]։

Ահա այս է Լահեյի հեռագրին ամբողջ պատմությունը, որ ահագին փոթորիկ պիտի ստեղծեր, Օրմանյանի անկումեն հետո։

18. ՕՐՄԱՆՅԱՆ ԻՄ ՀՈՒՇԵՐՈՒՍ ՄԵՋ

Օրմանյանի անունը հուշերուս խառնված է դեռ Ադափազարեն։

Արմաշ մեր քիթին տակն էր, ու հոն ինչ որ ըլլար, լուրը Ադափազար կվազեր կուգար։ Երբ խելքս սկսավ հասնիլ, Օրմանյան այլևս հոն չէր. պատրիարք ըլլալու գացեր էր Պոլիս։ Բայց դեռ Արմաշ կմնար անոր անունը, ու երբեմն մեզի ալ կուգար։ Արմաշի դպրոցը սորված ադափազարցի տղաքը որքան են պատմած մեզի Արմաշեն, Դուրյանեն ու Օրմանյանեն, այնտեղի վարդապետներեն և անոնց վեճերեն, թե ո՞րն է լավը, Դուրյա՞նը, թե Օրմանյանը։ Ու մեզ թված են, թե վարդապետներեն ո՞րն է Օրմանյանի համախոհ և որո՞նք են Դուրյանիները։

Հետո Օրմանյանի անունը հուշերուս մեջ պրպտած ատեն, Ստեփանոսինեն ալ կհառնե հանկարծ մեկտեղ։ Իզմիթի ողբացյալ առաջնորդը շատ ախորժ չէր զդար Օրմանյանեն, ինչպես առհասարակ նոր ուսմանց հետամուտ հայ հոգևորականներեն։ Ամբողջ Իզմիթի թեմը, Ադափազարն ալ մեկտեղ, գոց դիտեր Ստեփանոս արքեպիսկոպոս Հովսեփյանի սրամիտ ակնարկությունները դեպքերու և դեմքերու մասին, հեգնությունները, խայթոցները, զորս կցրվեր աջ ու ձախ։ Օրմանյանի համար ան կըսեր հաճախ. «Ստամբուլի մեր պատրիարքը խոյաման (վիթխարի) մարդ է. հաթթա (նույնիսկ) ֆրանսրզեա (ֆրանսերեն) ալ դիտեր։

Բախտը շուտով ինձ պիտի տար վիթխարի այդ պատրիարքը աչքովս տեսնելու պատեհությունը։

Երբ 1901-ին մայրս մեզ Պոլիս փախցուց, ըրավ չըրավ իր երեք տղաքը նստյան դպրոցը դրավ։ Ամեն օր Ղալաթիայեն մինչև Թաքսիմ կուգայինք քալելով, բայց ի՞նչ էր որ այդքան ճամբան գավառեն նոր Պոլիս եկած տղեկին համար։ Պարթևյանին դասարանն էի, ուր Բերայի բոլոր թաղերուն խայտաբղետ լաճերը տարի մը կանցնեն, վերի կարգերուն համար մաղվելն առաջ, երբ օր մըն ալ լուր ելավ հանկարծ, թե պատրիարքը դպրոց պիտի այցելե։ Եվ արդարև քիչ հետո աղմուկ մը ծավալեցավ դպրոցին մեջ, վարժապետները իրար անցան, ու տղաքը խելոքիկ մը նստան իրենց տեղերը։ Շատ չանցած մեր դասարանեն ներս մտավ վիթխարի պատրիարքը, որուն տեսակ մը անձկությամբ կսպասեին քովիս տղաքը, ու մեկիկ-մեկիկ մեզ պագնել տվավ իր ձեռքը։ Փառավոր մարդ չէր մեր Ստեփանոս սրբազանին պես, ոչ ալ վիթխարի, ինչպես զայն երևակայեր էի, նույնիսկ տգեղ էր կարելի է ըսել. բայց հանկարծ մտերմացավ տղոց հետ. մեկուն խրատ մը կուղղեր, մյուսին կատակ մը, և ամեն կատակե հետո կծիծաղեր կուշտ ու կուու։ Եվ վերջապես կարգը եկավ շաքարին. ամեն մեկս մեր բաժինն ստացանք թուղթե տոպրակներու մեջ։

Օ՜, այդ օրը մտքես երբեք չելավ. վաթսուն տարի հետո դեռ զայն կհիշեմ այսօրվան պես...։

Եվ անկե հետո հաճախ կընդունեինք Օրմանյանի այցը նստյան վարժարան. փողոց մը անդին էր տունը, ու կօգտվեր ամեն ա-

[154] «Ազգապահպան». Գ. էջ 5110։

[155] Անդ, էջ 5111։

[156] Անդ, էջ 5113։

ոիթե, որպեսզի մեր դպրոցը դա. Եսայանի հանդեպ բացառիկ շահագրգռություն ուներ, որովհետև հոն կուսանեին իր քեռորդիները՝ Պողոսիկը նախ, որ դպրոցակից էր ինձի, և Արաքսին ու Սիրարփին, դեռ փոքր աղջնակներ։ Սիրարփին, հետագային, պատիվ պիտի բերեր իր ժողովուրդին։ Համբավավոր հայագետ և բյուզանդագետ Սիրարփի Տեր Ներսեսյանն է ան։

Օրմանյան դպրոցական մեր հանդեսներուն ալ կուգար. անձկությամբ կսպասեինք մենք իրեն, ոչ թե անշուշտ իր ճառին համար, որ պետք է իմաստուն եղած ըլլար և որ սակայն այն ատեն դեռ չէր խոսեր մեզի, ինչպես կխոսեին, օրինակ, Հմայակ եպիսկոպոսի խոսածները սարեն-ձորեն, այլ շաքարին համար, զոր պիտի ճաշակեինք քիչ հետո...։

Հետո, օր մըն ալ փոխադրվեցանք Օրմանյանի բնակած թաղը։ Ջծիծաղի՛ք, բարի մարդիկ, որ այս տողերը կկարդաք հիմա։ Ատեն մը կար, երբ մարդ հպարտ կզգար ինքզինք մեծ անուններով, որոնց մոտը բնակած էր։ Քանինե՞ր պարծենցած են մեծ-մեծ մարդոցմով, որոնք եկած են իրենց թաղեն կամ գյուղեն։ Ջե՞ք տեսած վանեցիներ կամ մշեցիներ, որոնց բերնեն շողիք կվազե, երբ ձեզ կթվեն իրենցմե եկած մեծ մարդիկը։ Ակնեցիին փքանալը չե՞ք տեսած Ակնա տված դեմքերը քեզ համբած ատեն։ Սա մեթ հարևան պզտիկ Պարտիզակն անգամ որքա՞ն կսոնքար իր տված վարդապետներն ու վարժապետները հաշվելու պահուն։ Ադափազարցիներս, մենք, ավա՞ղ, մեկը չունեինք ցույց տալու. դդում ու հավկիթ արտադրած ըլլալուն համար պատմության չանցնիր քաղաք մը։ Ուրեմն շատ մի՛ տեսնեք, եթե ես ալ քիչ մը պարծենամ թաղովը, ուր բնակեցանք Պոլսո մեջ։

Այդ թաղը Ֆերիդիեն էր։

Անվանի էին Պոլսո թաղերը։ Ամեն մեկը իր փառքի տիտղոսն ուներ. մեկը կպարծենար իր այս կամ այն հիշատակարանովը, ուրիշ մը իր այս կամ այն բերքովը։

Ֆերիդիեի փառքը իր մտավորականներն էին։

Բերայի թաղերեն ամենեն հայկականն էր Ֆերիդիեն մեր տղայության ժամանակ։ Հայ էր մեծ մասամբ իր բնակչությունը, և այդ բնակչության մեջ զգալի թիվ մը կկազմեին մտավորականները։

Ան կսկսեր Ըթը փողոցեն, հոն, ուր կբնակեր ինքը Օրմանյան, ու կերկննար մինչև Ենիշեհիր ու Դոլար-դերե, դեպի խոնարհ մարդոց թաղերը։

Ո՞վ չկար Ֆերիդիե թաղին մեջ. լեփ-լեցուն ուսուցիչներ նախ, մեջն ըլլալով Պերայի հայ վարժարաններու տնօրեն Գրիգոր Մարգարյանը. շատ մը քահանաներ, համբավավոր Տ. Հովհաննես Մկրյանը անոնց գլուխը. գրողներ ու խմբագիրներ, սկսյալ Բյուզանդ Քեչյանեն մինչև «նորափետուր վառյակները»։ դեռ չենք թվեր հայ բժիշկները, որոնք մոտն էին թաղին, դեղագործները, ատամնաբույժները...։

Օրը քանի մը անգամ կանցնեի Ըթը փողոցի առջևեն. և չէր պատահեր օր մը, որ չհանդիպեի Օրմանյանին, երբ կառքեն կիջներ կամ կառք կնստեր։ Ա՜հ, խեղճ ձիերը, երբ կփոխադրեին մարմնեղ այդ երեք անձերը, Օրմանյանը նախ, բարապան Կարապետ աղան և զանգվածեղ կառապան Քառլոն, ուրկե՞ գիտնային, որ ամեն օր կփոխադրեին այնքան ծանր հոգեր ալ, որոնք ծանր էին, երբ առտուն կմեկնեին տունեն ու ծանր ալ կդառնային հաճախ տուն։

Այդ օրերուն ես արդեն կեդրոնական վարժարանն էի։ Ինչո՞ւ, չես գիտեր, բաներ մը կըլլա պատանին, երբ ավելի բարձր դպրոց մը կերթա, ու քանի մը գիրք ավելի կկարդա։ Ա՛լ կսկսի մարդու չհավնիլ, ամեն բանի չհավատալ, վերեն նայիլ շատ բաներուն վրա։ Օրմանյան առաջին տարիներու հմայքը չուներ հիմա մեր աչքին, և այլևս համով չէր դար մեզ իր բաշխած շաքարը։ Իր քարոզներն անգամ չէին հրապուրեր մեզ, թեև մեր դասարանի պատուհաններեն կտեսնեինք, որ ժողովուրդը խուռն բազմությամբ եկեղեցի կվազե Օրմանյանի քարոզած օրերը։

Դպրոցականի վերջին հիշատակս Օրմանյանեն՝ արդեն անուշ չէ։ Կեդրոնականի դրասեղաններուն վրա էի դեռ, երբ ոստիկանության ճանկն ինկաւ խեղճ մայրս գլուխը հազար քարի կզարներ բանտեն ազատելու համար զիս։ Օր մըն ալ կհաջողի Օրմանյանին ներկայանալ, երբ Ղալաթիո եկեղեցին եկած էր ան Արևագալի ժամերգության։ Օրմանյան շատ պաղ կընդունի հեք կինը, ու կըսե ավելի քան պաղարյուն.

— Ինչ ընենք. գլխուդ քար մը ինկեր է. պետք է որ տանիս...։

Կրնա՞ք երևակայել տառապանքը թշվառ հայ մոր մը, որ հայոց պատրիարքի մոտեն կբաժնվի հեկեկալով...։

Տարիներ հետո լսած եմ Արիս Ֆեսճյանեն, որ Պատրիարքարանի առաջին գործակատարն էր այդ օրերուն, թե Օրմանյան նույն օրն իսկ կանչած է զինքը ու զրկած ոստիկանության դուռ, ըսելով.

— Արի՛ս էֆենդի, բան մը կրնաս նե ըրե...։

1908-ի գարունն էր. դժվար էր «բան մը ընելը»...։

19. ՎԵՐՋԻՆ ՕՐԵՐԸ ԳՈՒՄԳԱՓՈՒԻ ՄԵՋ

Օրմանյան, տարվան սկիզբեն իսկ, տեսակ մը հոգի նախազգացում ունի 1908 թվականին համար։ Թերևս կզգա, որ կխարխլի արդեն Համիդի վարչակարգը։ Ու գիտե, որ վարչակարգերը իրենց հետ կառնեն ու պատմության գիրկը կտանին իրենց ներքև գտնվողներն ալ, զանոնք վարողներուն հետ մեկտեղ։

1908-ի սկիզբը լույս տեսնող Ազգային հիվանդանոցի տարեցույցին մեջ ծիսական բառարանի իր հերթական հոդվածը ավարտած ատեն կխոստանա հաջորդ մասը լույս ընծայել հառաջիկա տարի, «Եթե Տեր ճաջողեհ», խորհրդավոր կերպով ստորագծելով այս երեք բառերը։

Նույն տարվան սկիզբը հրատարակված Թեոդիկի «Ամենուն տարեցույց»-ին սկիզբը երկու տող ունի, տեսակ մը խորհրդավոր բառախաղ նույն տարվան զուգադիպող հայկական թվականին մասին, որ 4400—4401 տարեթիվն էր.

«Թվականնիս է Տն—Տնև,
Նրանի՞ թե չտնտա...»

Ու տնտնաց ճիշտ այդ տարին...։

Օրմանյանի պատրիարքության վերջին օրերը խելահեղ ցույցերու, բայց միևնույն ատեն անստուգության բացառիկ օրեր էին։ Համիդ Սահմանադրություն հռչակած էր. ժողովուրդը փողոց էր թափած ցնծությամբ արբշիռ. բացված էր բանտերուն դուռը։ Եվ սակայն իրենք զիրենք փորձառու սեպող մարդիկ չէին հավատար իրենց տեսածին. դեռ անտեղյակ անցուդարձերուն, որոնք Համիդը ստիպած էին անսպասելի այդ ժեստն ընելու, կասկածով ու զգուշությամբ կհետևեին դեպքերուն, անհամարձակ իրենց դիրքը ճշտելու իսկույն նոր կացության մեջ։ Թափորներ կանցնեին փողոցներեն «Կենցցե՞ ազատություն» պոռալով, թերթերը «Կենցցե՞ Սահմանադրություն» կաղաղակեին օրերե ի վեր, և սակայն դեռ մարդիկ կային, որ խաղ կկարծեին այս բոլոր եղածները, ու կասկածով և անվստահությամբ կսպասեին անոնց ելքին։

Օրմանյան ադոնցմե մեկն էր։ Մոտեն կճանչնար ան Համիդը և չէր հուսար, որ սիրով կատարած կրնար ըլլալ ան իր այդ խելագար ժեստը երեսուն երկու տարի աքծաններու մեջ պահելե հետո երկիրը։ Ու հետևաբար ինքզինքը ստիպված կարծեց ան վերապահ մնալ քանի մը օր, սպասելով, որ մյուս հոգևոր պետերը իրենց դիրքը ճշտեն։ Զգույշ ուզեց մնալ ան տոպչին օրերու այդ աղմուկին մեջ։

Զգուշություններ կան, որոնք կրնան ճակատագրական ալ ըլլալ։ Այդպես եղավ նաև Օրմանյանի համար։

Օրմանյան, թուրք «Հուրրիեթ»-ին հետ, կփակե իր կյանքին ամենեն դժնդակ շրջանը, գառնությանց ու մաքառումներու, հոգերու և ճիգերու տասներկու երկար տարիներ, ուր ստիպված էր հազար փորձությանց կուրծք տալ և սակայն չհուսահատիլ, տագնապե տագնապ անցնիլ և սակայն ամուր մնալ, պայքարիլ ու չտկարանալ, տքնիլ ու չհոգնիլ, տառապիլ ներսեն՝ դուրսեն զվարթ ձևանալ, ընել հնարավոր ամեն ինչ՝ հայության պահպանման համար։

Երբ փորձենք ճշտել իր տեղը մեր պատմության մեջ, պիտի դեռ անդրադառնանք նկարագրին ալ, որ անորը եղավ կյանքի այս նամ այն շրջանին պահուն։ Բայց չենք կրնար չրսել, իր պատրիարքության շրջանը փակելու առթիվ, թե նահատակություն մըն ալ իր այդ շրջանին կյանքն եղավ, որովհետև նահատակությենե տարբեր բան մը չէ ցավերու դեմ մաքառիլ ու չդտնել անոնց դարմանը, կարիքներու առջև դտնվիլ և զանոնք ամոքելու ուժը չունենալ, գանգատներ լսել և պատասխանել չկարենալ, չարչարվիլ մուրճին ու սալին միջև, փոթորկիլ ներսեն ու ստիպված բլլալ զայրույթը ներսը զսպել, և ավա՜ղ, երբեք չհասկցվիլ։ Ու փոխարեն ձախորդությանց բովանդակ մեղքը շալկել, և իրեն վերագրված տեսնել բոլոր բիծերը, որոնք կացությանն էին ու իր շրջապատինը։

Եթե ուզենք իր գործունեությունը հատկանշել պատրիարքության սույն տասներկու տարիներուն մեջ, ուրիշ բանաձև չունինք, բայց եթե իր իսկ բնորոշումը իր մասին, թե ուրիշ բան չեղավ ամբողջ այդ տասը տարին, այլ միայն «լարախաղաց» ու «գազանաղուսպ», թեև պետք է ըսել, որ ահավոր էր այդ ալ, որովհետև ստիպված էր հաճախ լարին վրա մինակը ելլալ, ու գազանը երբեմն գտնել անղուսպ և վտանգավոր նոպաներու մեջ։

Եվ եթե փորձենք մեր ալ կողմե իր պատրիարքության ճշգրիտ բնորոշումն ընել, տեղին պիտի ըլլար ըսել, թե ան ընթացավ ողոքելով և բողոքելով։ Բայց պետք պիտի ըլլար և ավելցնել, թե այդ ողոքումներուն մեջ կսկիծ ու դառնություն կար, այսինքն նաև տեսակ մը բողոք, զոր մարդ կպոռթկա հեկեկացած ատեն, իսկ բողոքները ուրիշ բան չէին հաճախ, եթե ոչ ողոքում մը իրենց կարգին, այսինքն խառնված աղերսի և սարսափի։

(Շարունակելի)

ՊՐՈՖ.-ԴՈԿՏ. Լ. Մ. ՄԵԼԻՔՍԵԹ-ԲԵԿ

(Թիֆլիսյան վաստակավոր գործիչ)

ԹԵԼԵԹԸ ՀԱՅ ԵԿ ՎՐԱՑ ՊԱՏՄԱԳՐՈՒԹՅԱՆ, ԲԱՆԱՀՅՈՒՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՎԻՄԱԳՐՈՒԹՅԱՆՑ ՄԵՋ

Անյրանգաեղ գովելի,
Անուշ և բոլորդ, Թելե՛ք։

ՇԱՄՑԻ-ՄԵԼՔՈ

Ուրտա՞վ և Թելե՞թ։ Այս զույգ տեղանունները հայտնի էին անցյալում իբրև ժողովուրդների բարեկամության, համերաշխության և միասնականության վեհ գաղափարներին ծառայող պատմական վայրեր, առաջինը Դ—է դարերից, իսկ երկրորդը Ժ—ԺԱ դարերից։

Ցուրտավի մասին[1] էր, որ Աբրահամ Ա Աղբաթանեցի Հայոց կաթողիկոսը (607—615) Կյուրիոն Ա Սկուտարցի Վրաց կաթողիկոսին (595—610) գրած թղթում (608 թ.) նշում էր, թե ինչպես «զմիաւորութիւն հաւատոյ և զասպնջականութիւն զերկոցունց աշխարհացս Ցուրտաւայ եկեղեցին անշարժ միջնորդութեամբ պահէր. ուստի սէր և խնամութիւնք մարմնաւորականք և հաղորդութիւնք հոգևորականք կատարէին ցնծալից ուրախութեամբ»[2]։

Ապա Կյուրիոն կաթողիկոսն իր պատասխան նամակում (նույնպես գրված 608 թ.) ընդգծում էր, որ «վասն հոգևոր հաղորդութեան և մարմնաւոր սիրոյ եկեղեցին Ցուրտաւայ հաստատեալ էր ի մէջ երկուց աշխարհացս»[3]։ Սրան միանգամայն համամիտ էր Աբրահամ Ա Աղբաթանեցին, երբ իր ընդարձակ «շրջագայական թղթում» (608—609) հաշտվում էր այն մտքի հետ, որ «եպիսկոպոսն եկեղեցւոյն Ցուրտաւայ... զմիջնորդութիւն ունէր երկուց աշխարհացս»[4]։

Ցուրտավի հիշատակությունը է դարից հետո իսպառ անհետանում է պատմության ասպարեզից, և մի քանի դար անց նրա տեղը աղգամիջյան փոխհարաբերությունների բնագավառում կարծես թե ստանձնում է Թելեթը։

***

Թելեթի մասին Սարգիս արքեպիսկոպոս Ջալալյանցը գրում է. «Թելեթ է գիւղ Հայոց և Վրաց հուպ ի քաղաքն Տփխիս ի կողմն հարաւոյ. շինեալ ի դաս ի վայր տեղւոյ ի միում ձորակի ի Քիկանց Կոճոռոյ լերին։ Ասա է հռչակաւոր մատուռն Սրբոյն Գէորգայ. միջակ է շինուածն, սագաշէն և աղիւսակերտ. բայց խրթին ամենևին և անշուք. սակաւ ինչ բացեալ յիւրմէ ունի զանգակատուն վայելչացեալ շքեղ կաթողիկէիւն»[5]։

---

1 Ցուրտավի տեղադրության մասին տե՛ս մեր այխատությունները. 1. «Ցուրտավի տեղադրության հարցի շուրջը». «Ռուսական աշխարհագրական ընկերության Կովկասյան բաժանմունքի Տեղեկագիր», ԻԴ, № 3, Թիֆլիս, 1916, էջ 341—345 (ռուսերեն). 2. Թոխալեթ-Մալկայի նյութական կուլտուրայի մնացորդների և տեղանունների ուսումնասիրության շուրջը». ժողովածու՝ նվիրված Ն. Մառին, հրատարակություն Թբիլիսիի պետական համալսարանի, Թբիլիսի, 1934, էջ 38—44 (վրացերեն). 3. «Վրաց աղբյուրները Հայաստանի և հայերի մասին», Ա, Երևան, 1934, էջ 12—13, ծանոթ. 6։

2 «Գիրք թղթոց», Թիֆլիս, 1901, էջ 164. նույնը՝ Ուխտանէս եպիսկոպոս, «Պատմութիւն բաժանման Վրաց ի Հայոց», Վաղարշապատ, 1871, էջ 74։

3 «Գիրք թղթոց», էջ 166. Ուխտանէս, էջ 76։

4 «Գիրք թղթոց», էջ 194. Ուխտանէս, էջ 136։

5 «Ճանապարհորդութիւն ի Մէջն Հայաստան, աշխատասիրութեամբ տեառն Սարգսի Ջալալեանց թեմական արքեպիսկոպոսի Հայոց Վրաստանի և Իմերեթի և այլոց», մասն Բ, Տփխիս, 1858, էջ 74։

Միաժամանակ Ջալալյանցը կարևոր էր համարում շեշտել, որ «ուխտատեղիս այս՝ նախքան զերեսուն ամն (այսինքն՝ 1826 թ.— Լ. Մ.-Բ.) չէր նշանաւոր, միայն սակաւ ոմանք դիմէին անդ յուխտադրութիւն. սակայն ի 1826 ամի Կաթուղիկոսն Ամենայն Հայոց Ներսէս ի ժամանակս իւրոյ առաջնորդութեան [Վրաստանի և Իմերեթի] կարգեաց անդ վանահայր զԳէորգ քահանայն Մեհրաբեանց ուխտս այս և հոչակ հարկանել ամենայն ուրեք»[6].

Բացի այս ամենից, նշված էր նաև այն, որ «տօնախմբութիւն ուխտիս կատարի ի տօնի հրաշափառ Համբարձման Քրիստոսի»[7].

Ապա Ջալալյանցը թեև մի առ մի հիշատակում է Թելեթում 1826 թվականից հետո ձեռնարկված կառուցումները, սակայն, դրժբախտաբար, չի ծանրանում այն հարցի վրա, որը ներկայումս մեզ ավելի է հետաքրքրում, թե ի՞նչ էր ներկայացնում այդ ուխտատեղին մինչ 1826 թվականը, որքա՞ն հին էին մինչ այդ ժամանակ տեղում եղած շենքերը, ի՞նչ վիճակի մեջ էին նրանք իբրև պատմական նուշարձաններ և այլն:

Մյուս կողմից, բավականին արժեքավոր է Ջալալյանցի այն ցուցմունքը, թե ինչպես Ներսես Աշտարակեցու օրոք կայացավ որոշում գործադրելու «որպէս եկամուտ այսր վանաց, նոյնպէս և ամենայն ուխտատեղեաց Վրաստանի, ի պէտս պահպանութեան նոգեոր դպրոցին Տփխիսայ»[8]:

Այստեղ խոսքը վերաբերում է Ներսես Աշտարակեցու կողմից Թիֆլիսում հիմնված հայոց ազգային դպրոցին (1824 թ.), որը 1836 թվականի 11 մարտի «Պոլոժենիե»-ի ուժով վերածվեց թեմական սեմինարիայի, կոչվելով «Ներսիսյան հոգևոր դպրոց»։ Վերջինիս, ինչպես և բոլոր մյուս ազգային դպրոցների գոյությունը, ըստ «Պոլոժենիե»-ի, ապահովված էր Հայոց Եկեղեցու նյութական միջոցներով, որպիսիք հիմնականում կազմում էին եկեղեցական անշարժ գույքից՝ կալվածներից ստացվող եկամուտները։ Իսկ այսպիսի դպրոցապատկան կալվածները (տներ, խանութներ, ջրաղացներ, այգիներ և այլն) մասնավորապես կենտրոնացած էին Թիֆլիսում, որոնց ցուցակը դեռևս ԺԸ դարում կազմել էր Սիմեոն կաթողիկոս Երևանցին իր «Ջամբռ»-ում[9]։

Սակայն մի կետում Ջալալյանցը մեղանչում է։ Նա չի հասկացել ԺԸ դարի հայ պատմագիր Զաքարիա սարկավագ Հովհաննավանեցու (ծագումով վրացի) վկայությունը («Պատմագրութիւն», Գ, գլ. ԺԶ), որը վերաբերում է Գևորգ զորավարի նշխարների փոխադրմանը Հայաստանից Վրաստան, այսինքն Մուղնի գյուղից «ի Տփխիս» և ապա Տփխիսից «յերկիրն Կոծարեթոյ, որ այժմ ասի Զխարա»[10]։ Ջալալյանցը բնագրի Կոծարեթը շփոթել է Թելեթի հետ, ըստ երևույթին երկու տեղանուններում առկա եք վերջածանցի հետևանքով։ Ուստի և, մեր կարծիքով, Թելեթին նվիրված տեսության մեջ Զաքարիա սարկավագի վկայությունը անտեղի է օգտագործված Ջալալյանցի կողմից[11], լոկ թյուրիմացության արդյունք է և շփոթության առաջացնող պարագա։

Ավելորդ չէր լինի նաև նշել, որ, ըստ Ազեքսանդր Երիցյանի, «աստիճանավոր Ստեփան Ղամբարյանը» Ներսիսյան դպրոցին ընծայել էր մի «փոքրիկ այգի Թելեթ գյուղում»[12]։

***

Վրաստանում, հատկապես Արևելյան Վրաստանում, այսինքն Քարթլիում և Կախեթում, կան մի քանի վայրեր, որոնց անունները ծագել են «թելա» բառից, որը նշանակում է ծփի, կենձի և որին համապատասխանում են ռուսերեն «վյազ»-ը և լատիներեն «ուլմուս»-ը[13]։ Ահա այս բառից է, որ

---

6 Սարգիս արքեպիսկոպոս Ջալալյանց, հիշյալ աշխատությունը, էջ 74։

7 Նույն տեղում։

8 Նույն տեղում, էջ 75—76 (ստորադրությունները, այստեղ և ստորև ամենուրեք, մերն են—Լ. Մ.-Բ.)։

9 «Ջամբռ, համաձգովեցեալ և շարադրեցեալ ի Սիմէոնէ կաթուղիկոսէ Երևանցւոյ», Վաղարշապատ, 1873, էջ 207—209։

10 Զաքարիա սարկաւագ, «Պատմագրութիւն», Վաղարշապատ, 1870, Գ, էջ 38—40, մանավանդ 40. նույնը տպագ. Մ. Բրոսսեի ֆրանսերեն թարգմանության մեջ («Հիստորիեն դ՝ իստորիեն դ՝ արմենիեն», Բ, ՍՊԲ, 1876, էջ 184—185)։

11 Սարգիս արքեպիսկոպոս Ջալալյանց, հիշյալ աշխատությունը, էջ 75։ Ամենայն կասկածից դուրս է, որ Ջալալյանցի դատողությունը Զաքարիայի վկայության շուրջը հիմնված է վերլինիս «Պատմագրութիւն» աշխատության որևէ ձեռագիր օրինակի վրա, քանի որ 1858 թվականին այն, ինչպես և նրա ֆրանսերեն թարգմանությունը դեռ հրատարակված չէին։

12 Ազ. Երիցյանց, «Պատմություն 75-ամյա գոյության Ներսիսյան հայոց հոգևոր դպրոցի, որ ի Թիֆլիս» (1824—1899)», Ա. Թիֆլիս, 1898, էջ 63։

13 Տե՛ս մեր կազմած համեմատական ծառագիտական բառարանը պրոֆ. Ս. Քուրդիանիի դրքում «Մասագիտություն», Թրիլիսի, 1934, էջ 470 (ռուսերեն)։ Ըստ իս, «Թելեթ» անվան հետ ո՛չ մի կապ չունի Մատթեոս Ուռհայեցու «ժամանակագրության» մեջ (բ տպ., Վաղարշապատ, 1898, էջ 186) հիշատակված «Թելեթուխ»-ը, իբրև բերդ «ի գաւառին Թիլմոյ», որը Հ. Մ. Ցամչյանի մոտ («Պատմութիւն Հայոց», Բ, 1785, էջ 990) «Թելեթուխ»-ի է վերածվել։

այլևայլ ածանցավորումով (օրինակ -եր, -ավ, -ովան, -աք) գոյացել են մի շարք տեղանուններ նույն Արևելյան Վրաստանի սահմաններում, նույնիսկ նրանից դուրս. այդպիսիք են.

ա. «Թելեթի», «Թելեթ» (հմմտ. «Սոմխեթ», «Կախեթ», «Իմերեթ» և այլն), հոգնակիում «Թելեթերի», այսինքն «Թելեթներ», Այստեղից են «Թելեթի սար», «Թելեթի լլաոն», «Թելեթի լեռնաշարք», «Թելեթի ձորակ», այլև «Խատիս-Թելեթի» (այսինքն «Ուխտատեղիի Թելեթ»), «Քուրդիս-Թելեթի», «Մուխրան-Թելեթի», «Միրզոյանի Թելեթի» և այլ տեղանունները[14]։ Սրանք բոլորը գտնվում են Թբիլիսիից դեպի հարավ, այսպես կոչված Թելեթի կամ Սողանլուղի լեռնաշղթայից այն կողմ։

Պարզապես «Թելեթի» հորջորջումով հայտնի է նաև Կախեթի վաղեմի մայրաքաղաք Ծերեմիի ԺԱ դարի առաջին կիսում կառուցված եկեղեցիներից մեկը, որի հիմքում ամփոփված վիմագրության մեջ հիշվում է Մցխեթայի կաթողիկոսանիստ Մայր Տաճարի կառուցող Մելքիսեդեկ Ա վրաց կաթողիկոսի (1012—1030, 1039—1045) անունը[15]։

բ. «Թելավի», «Թելավ» (հմմտ. նույն ձևով կազմված տեղանունները՝ Պարտավ, Յուրտավ, Մանավի, Զանավի և այլն), այն է Կախեթի թագավորության ԺԷ—ԺԸ դարերի մայրաքաղաքի անունը։

գ. «Թելովանի» (հմմտ. նույն ձևով կազմված Սերովանի, Վաշլովանի և այլն), գյուղ Թբիլիսիի շրջակայքում։

դ. «Թելեթ-գորա»՝ լեռան և գյուղի անուն նույնպես Թբիլիսիի մոտ։

Սրանցից Թելեթը մի փոքր հիշեցնում է Աղվանից աշխարհի «Ճալեթ»-ը (համենայն դեպս, ավելի, քան «Կածարեթ»-ը)։ Սակայն սրա մասին ստորև։

Ուշագրավ է, ի միջի այլոց, նաև այն, որ Դ դարի երկրորդ կեսի հոռոմեական քարտեզում, որը հայտնի է գիտության մեջ «Պեուտինգերյան տաբուլա» հորջորջումով, հիշված են «Տելեդա» և «Փիլադա» տեղանունները[16], և այս տեղանունները մի շարք գիտնականներ նույնացնում են Թելեթի և [Տ]ֆիլիսիի[17] (Թբիլիսիի)[18] հետ. հետևապես, նրանք ընդունում են Թելեթի և Թբիլիսիի, իբրև աշխարհագրական վայրերի, գոյությունը Դ դարում Քրիստոսից հետո։

***

Վրացական վավերագրերում և առհասարակ նորմատիվ գրավոր հուշարձաններում Թելեթը բազմիցս հիշված է ԺԷ դարի սկզբներից։

Այսպես, օրինակ, 1606 և 1697 թվականների սիգելներում հիշված են «Թելեթերի», այսինքն «Թելեթները», իբրև Կրծանիսի արվարձանի սահմանակից (հայնկուլս) վայրեր[19]։

1721 թվականի մի վավերագրում Թելեթը հանդես է գալիս իբրև սեփականություն երկու կալվածատերերի՝ Մուխրանի Թատոնիի (տիրոջ) և իշխան Ամիլախվարիի (Ամիլախորիի)[20]։

1748 թվականին Հերակլ (Էրեկլե) Բ արքան իշխան Ավթանգիլ Ջավախիշվիլուն հաստատագրված հրովարտակով Թելեթը զիջում է ոմն Արդուլբեգին[21]։

1755 թվականի վավերագրում Թելեթը նորից հիշվում է իբրև սահմանակից Կրծանիսիի[22]։

---

14 Սրանցից վերջինները առաջացած են այս կամ այն հողամասերը, գյուղացիներով հանդերձ, այս կամ այն կալվածատիրոջ (վրաց իշխան Մուխրանելիին, հայ գրամատեր Միրզոյանին և այլն) անցնելու կապակցությամբ, իսկ «Խատիս-Թելեթի»-ից առաջացած է «Խատիսյան» (Խատիսով) ազգանունը։

15 Լ. Մելիխեթ-Բեկ, «Հայկական հնություններ Թբիլիսի մոտիկ շրջակայքում. Շավնաբաթ-Թելեթ-Սավկիսի. «Վրաստանի պետական թանգարանի Տեղեկագիր», Ա, Թբիլիսի, 1922, էջ 93. նույնի «Հնագիտական ուսումնասիրություն դեպի դրսի Կախեթը և Ծերեմիի ձորը». «Սախալխո սաքմե» օրաթերթ, 1920 թ. 14 հոկտեմբեր, № 251 (երկուսն էլ վրացերեն)։ Հմմտ. նույնի «Մցխեթայի Մայր Տաճարը». «Էջմիածին», 1957 թ., № 7—8, էջ 47—51։

16 Ն. Միլլեր. «Իտիներարիա Ռոմանա Նուստոզարում, 1916 (գերմաներեն), քարտեզը։

17 Հմմտ. նմանօրինակ երևույթները հայերենում. կոնդիֆոն—Տիզբոն, նիզիբին—Մծբին, նկատերինա—Կատարինե, նվիրոսինիա—Հռիփսիմե, նվստաթեոս—Տաթև և այլն։

18 Ժ. Մարկվարտի հոդվածը «Սկիզբն քոր հիստորիշեն Տոպոգրաֆիի» և այլն, «Հանդես ամսօրյա», 1927 թ., № 11—12, էջ 830, 860 = «Մոնումենտա արքեոլոգիկա», Վիեննա, 1928, էջ 111, 128 (գերմաներեն). Հ. Մանանդյան, «Հայաստանի առևտրի և քաղաքների մասին», Բ հրատ., Երևան, 1954, էջ 166—167 (ռուսերեն). Ն. Լոմուրի, «Թբիլիսիի մասին հնագույն տարեգրությունը», հոբելյանական ժողովածու «Թբիլիսի—1500», Թբիլիսիի պետական համալսարանի հրատարակություն, Թբիլիսի, 1958, էջ 27 (վրացերեն)։

19 Յասոն Լորթիփանիձե. «Մտորին Քարթլին ԺԸ դարի առաջին քառորդում», Ա—Բ, Թբիլիսի, 1935, էջ 313, Գ—Դ, Թբիլիսի, 1938, էջ 387 (վրացերեն)։

20 Նույն տեղում։

21 Ն. Ցիրանիշվիլի. «Վավերագրեր Վրաստանի սոցիալական պատմության, Ճորտատիրական հարաբերությունների (ԺԸ—ԺԹ դ. դ.)», Ա, Թբիլիսի, 1940, էջ 1337 (վրացերեն)։

22 Յասոն Լորթիփանիձե. հիշված դիրքը, հիշված տեղերը։

1809 թվականի 30 դեկտեմբերի մի վավերագրում հիշված են Թելեթի հասույթները[23]։

Առանձնապես հետաքրքրական են վավերագրերն ու հմայիլները (որոնցից վերջինները վրացերեն «ավգարոզիս» են կոչվում), ուր Տելեթի Ս. Գևորգը հիշված է Վրաստանի Ս. Գևորգ ուխատեղիների շարքում, որոնց ընդհանուր թիվն է 363։

Այդպիսիներից են՝

ա. 1700—1724 թվականների վավերագիրը, ուր հիշատակված են, ի միջի այլոց, Գորիսջվարիի, Բոճոռնիի, Թելեթի, Մողնինի Ս. Գևորգները[24]։

բ. 1724 թվականի վավերագիրը (շնորհված Դավիթ-Գարեջայի «բազմալեռանց» մայրավանքին, ուր նույնպես հիշված են, ի միջի այլոց, Գորիսջվարիի, Ատոցիի, Թելեթի, Մողնինի Ս. Գևորգները[25]։

գ. ԺԲ դարի սկզբների մի վավերագիր, որի մեջ ևս հիշված են, ի միջի այլոց, «Ներուսաղեմի, Բեթղեհեմի, Վանքի, Թելեթի Ս. Գևորգները»[26]։

դ. Նույն դարերից մի հմայիլ, որի մեջ «Թելեթի Ս. Գևորգը» հիշված է «Դոգողինիի Ս. Գևորգի» կողքին[27], որը Քութայիսիի մոտ գտնվող վայրի անունն է, ռուսերեն նույնիսկ «Դոգոգան»-ի վերածված, հետևապես ոչ թե Մողնինի (Մուղնիի) աղավաղումը, ինչպես մենք սխալմամբ ենթադրել էինք 1935 թվականին[28]։

Եվ այլն։

23 Ն. Բերձենիշվիլի. «Նյութեր Վրաստանի տնտեսական պատմության համար. Ուշ ֆեոդալական շրջան», Բ, Թբիլիսի, 1953, էջ 189 (վրացերեն)։

24 Ն. Բերձենիշվիլի. «Նյութեր Վրաստանի տնտեսական պատմության համար», Գ, Թբիլիսի, 1955, էջ 156 (վրացերեն)։

25 Ս. Կակաբաձե. «Պատմական վավերագրեր», պրակ Ե, Թբիլիսի, 1913, էջ 36 (վրացերեն)։

26 «Ծուցակ վրացերեն ձեռագրերի Վրաստանի պետական թանգարանի», Զ, Թբիլիսի, 1953, էջ 266 (վրացերեն)։

27 Ա. Խախանով. «Մուրվագծեր վրաց գրականության պատմության», Ա, Մոսկվա, 1895, էջ 129 (ռուսերեն)։

28 «Մայաթ-Նովայի հայերեն խաղերի լրիվ ժողովածուն, թարգմանված տարբերակներով, առաջաբաններածականով, ծանոթագրություններով և բառարանցանկերով հանդերձ», ի ձեռն Լ. Մելիքսեթ-Բեկի, Թբիլիսիի պետական համալսարանի հրատարակություն, Թբիլիսի, 1935, էջ 34 (վրացերեն)։ Հմմտ. նաև Է. Թադայշվիլի, «Նյութեր Վրաստանի պատմության համար», Թբիլիսի, 1895, էջ 14 (ռուսերեն)։ Օգտվելով առիթից, պարտք ենք համարում նշել, որ այս հանգամանքի վրա մեր ուշադրությունը հրավիրեց Վրաց հանգուցյալ կաթողիկոս Կալիստրատը (1932—1952) մեզ հասցեագրված 1936 թվականի 6 ապրիլի թվակիր մասնավոր մի նամակով։

***

Թելեթի անունը բազմիցս հոլովվում է նաև վրացական պատմական և պատմա-աշխարհագրական գրականության մեջ։

Այսպես, օրինակ, ԺԸ դարի առաջին կեսի պատմիչ Բերի էգնատաշվիլին իր «Նոր Քարթլիս-ցխովրեբա» (=«Նոր վրաց տարեգրություն») կոչված երկում, որը գրված է 1716—1724 թվականների ընթացքում, հիշատակում է, որ Սիմոն Ա թագավորի (1558—1600) և Դոմենտի Բ կաթողիկոսի (1599—1603) օրոք պարսիկներն ավերեցին «Թելեթները» («Թելեթերի»)[29]։

Նույն այդ երկում հիշված են նաև «Թելեթի սարը»[30] և «Թելեթի ձորակը»[31]։

Ծանոթանալով այս տվյալներին, հայ ընթերցողն ակամա կհիշի Ղազարոս Աղայանի «Արություն և Մանվել» վեպի (1866) համապատասխան հատվածը, ուր նկարագրված է Խաչենցի Արության և նրա ուղեկից տերհոր ճանապարհորդությունը Բոլնիս-Խաչենից դեպի Թիֆլիս, նրանց մոտենալը Թիֆլիսին «Թելեթի սարի ստորոտով», ապա նրանց բարձրանալը սարի գլուխը (այսինքն Շահնաբադը—Լ. Մ.-Բ.), որտեղից նրանց աչքին երևաց «քաղաքը»։ Այսպիսով, ըստ վերոհիշյալ վեպի, Թելեթի սարը բաժանում է Թիֆլիսը Թելեթից[32]։

ԺԸ դարի առաջին կեսի վրաց ականավոր պատմաբան, աշխարհագիր և քարտեզագետ արքայազն Վախուշտի Բագրատիոնն իր «Վրաստանի աշխարհագրություն» նշանակալից գործում (1745 թ.) նշում է, որ Կումիս դյուղից դեպի արևելք գտնվում են «Թելեթները (Թելեթեբի) և [այնտեղ] եկեղեցի [հանուն] Սուրբ Գևորգի, սքանչելագործ»[33]։

Իսկ ԺԸ—Ի դարերի դրող Զ. Մթածմինդելիի (=Զաքարիա Ճիճինաձեի) կոհումով, մինչ Ագա-Մահմադ-խանի կողմից Թբիլիսիի ավերումը 1795 թվականի սեպտեմբերին, Թելեթի բնակիչներն եղել են վրացիներ, որոնք այստեղից գաղթել են և իբր թե նրանց տեղը Հերակլ Բ արքան բնակեցրել է հայե-

29 Էգնատաշվիլի Բերի, «Նոր Քարթլիս-ցխովրեբա ԺԸ դարի սկզբներից», Իվ. Ջավախիշվիլու խմբագրությամբ, Թբիլիսի, 1940, էջ 82=«Քարթլիս-ցխովրեբա», Բ, Ա. Ղաուխչիշվիլու խմբագրությամբ, Թբիլիսի, 1959, էջ 367 (երկուսն էլ վրացերեն)։

30 Էգնատաշվիլի, էջ 61=«Քարթլիս-ցխովրեբա», Բ, էջ 356, 494։

31 Էգնատաշվիլի, նույն տեղում=«Քարթլիս-ցխովրեբա», Բ, նույն տեղում։

32 Հմմտ. նաև «Տեսաս և լսեցաս (ճամբորդի նոթեր)», «Իվերիա», 1881 թ., № 12, էջ 112—126 (վրացերեն)։

33 Վախուշտի, «Վրաստանի աշխարհագրություն», Թբիլիսի, 1941, էջ 48 (վրացերեն)։

րին[34], որոնք հետագայում վրացի են դարձել[35]։

Կախեթի ինչպես հայ, նույնպես և, առանձնապես, վրաց ազգաբնակչության այրում ամենալայն ժողովրդականություն էր վայելում Թելեթը, այն էլ ոչ թե հենց Կախեթի հինավուրց մայրաքաղաք Ծերեմիի Թելեթը (որը, բնականաբար, ավելի ժողովրդականություն վայելած պիտի լիներ), այլ Թրիլիսիին առընթեր Թելեթը։

Սրա պերճախոս վկան վրաց բանահյուսությունն է և նրա մեջ պահպանված ասացվածքները վերջինիս շուրջը։

Այսպես, օրինակ, վեճի ժամանակ, երբ «գրաց են գալիս», սովորաբար ասում են. «Ով կեղծի (սուտ խոսի), նրան Թելեթը խառով կենա»[36]։

Մյուս կողմից, քեֆի և խնջույքների ժամանակ, երբ հյուրընկալը կամ թամադան աշխատում է հանդիսականներին ավելորդ գինի խմցնել, սպառնում է նրանց ասելով. «Ով որ չի խմի, նրան Թելեթը մաս-մաս կանիր»[37]։

Որ Թելեթը լայն ժողովրդականություն էր վայելում վրաց մեջ և, մասնավորապես, Կախեթում, ցայտուն կերպով երևում է վրաց նոր դրականության հիմնադիր, բանաստեղծ, վիպասան, հրապարակախոս և հասարակական գործիչ, հալազն մոր ծնունդ Իլիա Չավչավաձեի (1837—1907) մոտ 1859—1863 թվականների միջոցին հորինված «Կացիա-ադամիանիս» (=«Մի՞թե մարդ է, ադամորդի») վեպում, հատկապես Թ գլխում[38]։

Վեպի գլխավոր հերոսները Թաթքարիձե ամուսիններն են՝ իշխան Լուարսաբը 40 տարեկան և իշխանուհի Դարեջանը 41 տարեկան, որոնք տառապում են անզավակ լինելու պատճառով։ «Քառասուն տարեկան», «քառասուն և մեկ տարիս», բացականչում են նրանք, և ոչինչ չի օգնում նրանց, ո՛չ կարարադիները և ո՛չ էլ Սոդոմոն իմաստունի գիրքը։ Բայց և այնպես, նրանք իրենց «հույսը չէին կտրում» զավակ ունենալուց։

Լսելով, որ քաղաքում (Թիֆլիսում) մի դրաբաց վհուկ կա, որը կարող է իմանալ իրենց անզավակ լինելու պատճառը, թեև որդեծնության ժամանակն արդեն անցկացրել էին, նրանք մի մարդ են ուղարկում դեպի քաղաք, հետն էլ Բաղդադի մի թաշկինակ, որի վրա դիր էր բաց անում դրաբացը բացակա խնդրատուների համար և որը, ինչ ասի, կուզի, վերջը նրա մոտ էր մնում։ Երեք օրից հետո լրաբերը պատասխան է հասցնում, թե «խաչը ձեզանից խռովել է, և այն էլ ո՞ր խաչը, Թելեթինը»։ Այսպես էր ասել դրաբացը։

Ամուսիններն այս լսելով, միաժամանակ խաչակնքելով, սկսում են վիճել իրար հետ, թե այսպես հեռու տեղ ինչպես դնան ուխտի։ Կրկին խաչակնքելով և «մեղա տալով», Լուարսաբը առաջարկում է դնալ մերձակա Ղվարելի գյուղի վերևում գտնվող Նեկրեսիի Աստվածածինը։ Բայց Դարեջանը հակառակվում է և առարկում ասելով. «Թելեթի խաչը կվիրավորվի, կասի թե ես ապստրեցի, որ ինձ մոտ գան, իսկ նրանք այնտեղ դնացին։ Համաձայնվելով կնոջ հետ, Լուարսաբը դիջում է նրան և նրանք երկուսով որոշում են պատրաստություն տեսնել դնալու դեպի Թելեթ։ «Օ՜հ, մի՛ բարկանար, ո՛վ Թելեթի խաչ, փառք անունդ, կգամ, կգամ և կփառաբանեմ անունդ» ասելով, ամուսինները հավատում են դրաբացի խոսքին։

Սայլապան Թեդոյին լծել են տալիս սայլը, մի կարպետ են ծածկել տալիս գլխին, մի լավ ոչխար կապում սայլի պոչին և Աստուծո անունը տալով ճանապարհ են ընկնում քաղաքի մեծ ուղիով։ Սայլի մեջ նստում են Դարեջանն ու նրա աղախինը։ Մի ծառա և Լուարսաբը իր որձ ձիու վրա հետևում են սայլին ծանրաքայլ։ Լուարսաբը դինված է, մեջքին ունի թուր, հետն էլ լեզգու խանչալ և մի ատրճանակ։

Նրանց ճանապարհորդությունը մինչև Թելեթ տևում է ավելի քան չորս օր։ Հինգերորդ օրը բարձրանում են ուխտատեղիի վայրը, համբուրում և հենց հետևյալ օրը ճանապարհ են ընկնում դեպի տուն։

Մի այսպիսի ուխտագնացություն Կախեթի Միրզաանի գյուղից դեպի Թելեթ արձանագրված է վրաց մամուլում 1883 թվականի նիրքոս[39]։

34 Ղ. Աբովիանցի. «Թելեթը հայերի մեջին», «Դրոշակ», 1878 թ., 1 հոկտեմբերի, № 198, էջ 2—3 (վրացերեն)։

35 Հմմտ. «Մեղեմսի», 1887 թ., № 23, էջ 5—6 (վրացերեն)։

36 Լ. Մելիքսեթ-Բեկ. «Ս. Գեորգի նրկիրը», «Ռուսական Աշխարհագրական ընկերության Կովկասյան բաժանմունքի Տեղեկագիր», ԻԳ, № 2, Թիֆլիս, 1916, էջ 227—228 (ռուսերեն), նույնի «Հայկական հնություններ Թիֆլիսի մոտիկ շրջակայքում», «Վրաստանի պետական թանգարանի Տեղեկագիր», Ա, Թբիլիսի, 1922, էջ 94 (վրացերեն)։

37 Նույն տեղում (թե՛ ռուսերեն և թե՛ վրացերեն)։

38 Տե՛ս վեպի հայերեն թարգմանությունը Տ. Փիրումյանի՝ «Մուրճ» ամսագրում, 1891 թ., № 6, էջ 715—720։

39 Թղթակցություն Թելեթից, «Դրոշակ», 1883 թ., 31 մայիսի, № 101, էջ 2։

***

Անկախ վրաց պատմագրություն-բանահյուսությունից, Թելեթի անունը հաճախ է հոլովվում հայ պատմագրության և բանահյուսության մեջ, ուր, սակայն, այս պատմական վայրը հանդես է դալիս գերազանցապես իբրև ֆեֆի և զվարճալիքի տեղ՝ կապված ժողովրդական ճավատալիքների, նախապաշարմունքների, սնոտիապաշտության, կախարդությունների և նման սովորույթների հետ, որոնք այժմ, իհարկե, համարյա չքացել են և հետզհետե անհետանում են։ Բայց կարևորն այն է, որ գրեթե բոլոր չափածոները Թելեթի հիշատակությամբ հասել են մեզ Թբիլիսիի վաղեմի (Քարափի Թազի) բարբառով, հետևապես արժեքավոր նյութ են մատակարարում այդ բարբառը հետազոտողների համար (որոնց տրամադրության տակ վաղուց կան Սայաթ-Նովայի, Շամչի-Մելքոյի, Գարրիել Սունդուկյանի և այլոց ստեղծագործությունները)։

Թելեթը հաբեան Շահնաբադի (Շավնաբադի) հետ միասին հայ գրականության մեջ առաջին անգամ հիշատակված է Աղա-Մահմադ-խանի կողմից 1795 թվականի սեպտեմբերին Թբիլիսիի ավերման կապակցությամբ։

Ժամանակակցի վկայությամբ, վկայություն, որ օգտագործել է Խ. Աբովյանի դասընկերը՝ ներսիսյան դպրոցից Գալուստ Շերմազան-Վարդանյանը (1810 մոտ—1891)[40], «Շահնաբաթ[41] ու Թելեթի քարափեմեն քուրքիրը (իմա՝ պարսիկները—Լ. Մ.—Ռ.) ինչպես չիանչվելա (մրցյուն) դևեր էին գալիս», ինքնըստինքյան հասկանալի է, դեպի Կրծանիս—Օրթաճալա—Խարփուխ (Սեյդարաբադ) արվարձանները, որտեղից պիտի մուտք գործեին Թբիլիսի։

Հետևելով Սայաթ-Նովայի օրինակին, որն առնվազն երկու բանաստեղծություն էր նվիրել պատմական վայրերին (մեկը, հայերեն, Թբիլիսիի Մողնու Ս. Գևորգ եկեղեցուն նրա 1751 թվականի վերանորոգման առթիվ, մյուսը՝ քառալեզվյան, «Մշո Սուլթան Սուրբ Կարապետ Թարփիուն», անթվական), վերջինիս հետևորդ Շամչի-Մելքոն ևս ԺԹ դարի սկզբներին մի սրտառուչ բանաստեղծություն է նվիրում Թելեթին, ուր, մի կողմից, ասվիս է նրա սքանչելի բնության նկարագիրը, և մյուս կողմից, հաղորդում ազգագրական բնույթի տվյալներ Թելեթի տոնակատարության մասին։

Շամչի-Մելքոյի բանաստեղծություն, որի լրիվ տեքստը տալիս ենք սույն հոդվածի վերջում, սկսվում է հետևյալ նախերգանքով.

«Ավալի բաշտան ֆիզ գովիմ,
իժում բաղ ու բաղչաղ, Թելե՛ր.
Սեյրանգանդ գովելի,
անուշ է բուլաղդ, Թելե՛ր»։

Ապա բանաստեղծը մի առ մի հիշատակում է Թելեթի հաճախորդներին՝

«չատ ճամմար ու ասնաֆ»,
«վուրե վրացի, բուրմ ու հայեն»։

Ընդ սմին, բանաստեղծը բաներ չի խնայում նկարագրելու հանդիսականների շքերթը Թբիլիսիից դեպի Թելեթ «Համարացումի լորեքշաբթին» և տոնակատարությունը հանդերձ բոլոր մանրամասնություններով (նախապաշարմունքներ, սնոտիապաշտություն և այլն)[42]։

Ի դեպ, հատուկ ուշադրության արժանի է նաև Մանվել վարդապետ Շահինյան Կյումուշխանեցու հուշերում հիշատակված այն փաստը, թե ինչպես Հովհաննես արքեպիսկոպոս Կարբեցին, երբ ընտրվեց և հաստատվեց կաթողիկոս, «հրամայեաց պատրաստել... ձի մի, որ ընդ հանդիսին դնասցուք ընդ նմա մինչ ի Թելեթ Սուրբ Գէորգ վանքն», ուր նա հանձնեց Մանվելին իր հաստատման մասին հրամանագիրը՝ 1831 թվականի 6 սեպտեմբերի թվահամարով[43]։

***

ԺԹ դարի երկրորդ կեսից Թելեթը նորից հանդես է դալիս հայ գեղարվեստական գրականության մեջ Գևորգ Տեր-Աղեքսանդրյանի (1860), Ռաֆֆու (1871) և Գևորգ Բաշինջաղյանի (1911) երկերում։

---

40 Գալուստ Վարդանյան, «Նյութեր ազգային պատմության. Երևելի հայկազունք ի Պարսկաստան», Ռոստով, 1890, էջ 68։

41 «Շահնաբադ» նշանակում է շահի նստատեղի՝ շահանարադ, շահինարադ։ Այսպես են կոչվել Թելեթին կից սրածայր բլուրը և այնտեղ կառուցված եկեղեցին այն առթիվ, որ այստեղ էր կանգ առնում արքվելից կամ հարավից Թբիլիսի դեմ եկող թշնամի հրամակախումբը պարսից շահի հրամանատարությամբ։ Հետևելով դիտելով Թբիլիսին, այստեղ էր Շահը կշռադատում իր գործելակերպի հետագա ընթացքը և ներխուժումը դեպի քաղաք։ Այս տեղանունը կազմված է Աքսաբաղ, Սարդարաբաղ, Աշխաբաղ, Սեյդաբաղ և այլ անունների նմանությամբ, սակայն հետագայում վրացիների մոտ ադավաղվել է ու դարձել «Շավնաբադի», կամ, ավելի հիշոն ասած, իմաստաբանված է իբրև «ան յափնչիա», որը կատարյալ անհեթեթություն է։ Հմմտ. նաև Շավնաբաղ լեռան անունը Քավախեթում, Տբիսզուրի լճից դեպի արևելք։

42 Գ. Ախվերդյան, «Հայ աշուղներ», Բ, Թբիլիսի, 1903, էջ 490. Լ. Մելիքսեթ-Բեկ. Շամչի-Մելքո», Երևան, 1958, էջ 67—68։

43 Գյուսս ավագ Թանանա Աղանյան, «Դիվան հայոց պատմության», ԺԲ, Թբիլիսի, 1917, էջ 168 (Մանվել Կյումուշխանեցի, Ա.)։

Գ. Տեր-Աղեքսանդրյանի գրչին է պատկանում հումորիստական-գավեշտական ոգով և Թիֆլիսի բարբառով գրված էսքիզը՝ «Ուխտագնացություն ի Թելեթ»[44]։

Բաֆֆին, 1871 թվականին գրված իր մի քանի նկերում, որոնք են «Զահրումար», «Կատակ» և «Թիֆլիսեցու հիշողություններից», հիշում է Թելեթի անունը զանազան առիթներով։

«Զահրումար»[45] վեպում Ճանճուր Իվանիչի կինը՝ Բարբարեն, ներկայացված է իբրև մի անձնավորություն, որը «բոպիկ ոտքով [Թբիլիսիից] մինչև Թելեթ համբուրելու էր գնում»։

Նույն «Զահրումար»-ի հավելվածում, «Կատակ» գավեշտական բանաստեղծության մեջ, մի քանի անգամ հիշված է Թելեթի անունը։

Այսպես, օրինակ, «Կատակ»-ի գլխավոր գործող անձը՝ կտակարար Թոխմախենց Զաքարը երդվում է մի շարք սրբավայրերի և, ի միջի այլոց, Թելեթի անունով.

Ա

Զիզ յիս օրքում իմ տալի,
Սուրբ Մոզնի[46], Սուրբ Թելեթ,
Սուրբ Զիգուշենի[47] զուրավուր,
Մեկ էլ Սուրբ Շահնարաթին»[48]։

(Գլուխ Բ, տուն 2)

Բ

«Թե վուր Թելեթ, Խաչբեր[49]
Զիր Բոլշաթով ուխտ կերթամ,
Վրացեվար սրբերուն
Զիր աղոթքիրը կարթամ»։

(Գլուխ Գ, տուն 11)

Գ

Զիզ, գեթաղվա[50], մէ բան էլ
Միտրս էրի Սուրբ Թելեթ,
Թե ուզում իմ փուղ դադիլ,
Պիտի ձախիմ դալր[51] բիլեթ»։

(Գլուխ Գ, տուն 6)

«Թիֆլիսեցու հիշողություններից» բանաստեղծության մեջ, ուր հակադրվում են «հին» և «նոր» Թբիլիսին, Թբիլիսեցի քաղաքացին տրտնջում է այն առթիվ, որ

«Վատ ադաթներ եբրավ
Միր քաղկումը եվրոպեն,
Քեփն ու ուսիրեն դիփ կորավ,
Գրշացավ էսղանեցոբեն»[52]։

(Տուն Ա)

Ապա նույն քաղաքացին սրտի կսկիծով հիշում է վաղեմի կյանքը և ախ քաշում ասելով.

«Ա՜խ, բոռ Գարբոյի զուտնի
Գիդի՞ս ձենն ո՞ւր է էրթում.
Սոլոլակում[53] կու լրսեիր
Ձիփ նա կոծեր Թելեթում»։

(Տուն ԺԳ)

Մեծանուն հայ նկարիչ և գրող Գևորգ Բաշինջաղյանն ևս իր «Մի էջ իմ հուշատետրից» գրվածքում (1911 թ.) հիշում է այն պահը, երբ ինքը իր ծննդավայր Սղնախ քաղաքից (Կախեթում) պատրաստվում էր ուղևորվել Թիֆլիս՝ ուսում ստանալու համար, նրան տեղացիներն այլևայլ հանձնարարություններ են տալիս և, ի միջի այլոց, «հարևան պառավ Մարիամը արագաքայլ մոտեցավ ու մի զույգ գեղին մեղրամոմ ձեռքիս դնելով,— ասում է նկարիչը,— խոսք առավ ինձանից, մինչև տնգամ երդվեցրեց, որ Թելեթի Սուրբ Գևորգ եկեղեցու բեմի վրա վառեմ»[54]։

***

Թելեթի, իբրև պատմական հուշարձանի, հիմնադրման հարցը, իհարկե, չի լուծվում այն նյութերով, որոնք մենք վերև քննեցինք և որոնք ժէ դարից այն կողմ, այսինքն ժամանակի խորքերը չեն անցնում։ Մինչդեռ Թելեթում առկա մի շարք արձանագրություններ մեծ չափով նպաստում են հարցի լուսաբանմանը։

Մեր ուշադրության կենտրոնում է Թելեթի չորսհարկանի զանգակատունը (տե՛ս նկար 1)՝ կառուցված 1832 թվականին, որն ընդգրկել է իր մեջ նրանից մնացած ստորին ճարկը և, բացի դրանից, Թելեթի մի շարք վիմագրությունները տարբեր ժամանակներից։

Այստեղ աչքի է ընկնում առաջին հարկի հարավային կամարի արևմտյան քիվի (կոնիզի) մեծ քարի վրա փորագրված երկտողա-

44 «Կոռնիկ Հայոց աշխարհի», 1860 թ., № 11, էջ 898—922։

45 Այսինքն՝ օձի թույն։

46 Նկեղեցի Թբիլիսիում, վերանորոգված 1751 թվականին, որին նվիրում է իր խաղերից մեկը Սայաթ-Նովան։

47 Նույնպես նկեղեցի Թբիլիսիում, ուր պաշտոնավարում էր Սայաթ-Նովայի թոռը՝ Տեր Մովսես ավագ քահանա Սայաթնյանցը (տե՛ս մեր հոդվածը «Էջմիածին» ամսագրում, 1960 թ., № 5, էջ 28—33)։

48 Տե՛ս սույն հոդվածի 41-րդ ծանոթագրությունը։

49 Ուղիղ՝ Ղվթաբրա, որը վանք է Անտոն Միայնակյացի (մարտիրոսփելի) անվան, Թբիլիսիից դեպի հյուսիս-արևելք, Նորին գյուղի մոտ։

50 Այսինքն՝ կաղաչեմ։

51 Այսինքն՝ կերթ, շինեմ։

52 Այսինքն՝ այս աշխարհը։

53 Թբիլիսիի թաղամասերից մեկը։

54 Գ. Բաշինջաղյան, «Էսքիզներ», Թիֆլիս, 1913, էջ 183=նույնի «Ճանապարհորդական նոթեր, էսքիզներ, ֆեյլետոններ, հոդվածներ», Երևան, 1957, էջ 189։

Նկար 1. ԹԵԼԵԹԻ ՔԱՆԳԱԿԱՏՈՒՆԸ

նի հայերեն արձանագրությունը, որը թեև թերի, է սակայն հնարավոր է վերծանել[56] (տե՛ս նկար 2)։

«[Շնորհայ ամենակարողի/ն Ա[ստուծոյ] Յ[ա]սմաթ Ուտայ, Սարգիս Ուտայ [և] Գրիգորս շին[եցայ զեկեղե]ցիս (բնագրում՝ զեկեղեցին— Լ. Մ.-Բ.). [Թուին] Ք[րիստո]ս[ի] ՌԲ»։

Ինչպես երևում է, արձանագրությունը փորագրված է 1002 թվականին։

Արձանագրության մեջ ամենից կարևորն այն է, որ բացի Գրիգորից, հիշատակված են նաև «Ուտայ» հորջորջումը[56] կրող երկու անձինք, որոնցից մեկն է Յասմաթը և մյուսը Սարգիսը։ Սրանք, հավանական է, Թելեթի նախնական եկեղեցու հիմնադիրները լինեն 1002 թվականին, այսինքն այն ժամանակ, երբ, մի կողմից, Շիրակի Բագրատունյաց մայրաքաղաք Անիում ավարտված էր Կատրամիդե թագուհու ձեռնարկած Մայր եկեղեցին (1001 թ.), իսկ մյուս կողմից, Ափխազ-Քարթվելական Բագրատունյանների մայրաքաղաք Քութայիսում ավարտվում էր Բագրատ Գ արքայի կողմից կառուցվող կաթողիկե տաճարը (1003 թ.)։ Հակառակ դեպքում, պետք է ենթադրել, որ քարը բերված է մի որևէ հեռավոր ուխտատեղիից, գուցե և հենց Ուտիքից, այսինքն Ուտիացոց երկրից։

Եթե ենթադրենք, որ Յասմաթն ու Սարգիսը իսկապես ուտիացիներ են (ուղեր), այսինքն հայադավան ուտիացիներ, որոնք, իհարկե, տեղյակ պիտի լինեին հայերենին, քարն ևս կարող էր բերված լինել Ուտիացոց երկրի մի որևէ հայադավան մենաստանից[57], որպիսիք էին «Ձալեթ», «Ծղիշ առաքյալ» և «Գիս» կոչված վանքերը[58]։

***

Թելեթի հիմնադրման խնդրի շուրջը հետաքրքրական հեռանկար է բացվում մեծագույն հայ պատմիչ Ստեփանոս Օրբելյանի «Պատմութիւն Տանն Սիսականաց»-ի մեջ հիշված մի շարք աշխարհագրական կետերի տեղադրության ճշտման շնորհիվ։

Դա այն նյութն է, որ ամփոփված է Վրաց Գիորգի Գ արքայի (1156—1184) դեմ 1177—1178 թվականներին Օրբելների կողմից կազմակերպված դավադրական ապստամբության և ապա նրանց պարտվելու ու հալածանքի ենթարկվելու պատմի մեջ, որը

---

[56] Լ. Մելիքսեթ-Բեկ, «Հայկական հնությունները Թիֆլիսի մոտիկ շրջակայքում», հիշյալ հրատարակություններ, էջ 97—98. նույնի «Ուտիացոց պատմությունից (Ուտիկա-Արմենիակա)», «Թբիլիսիի պետական համալսարանի Աշխատությունները», ԻԳ, Թբիլիսի, 1942, էջ 39—42 (ռուսերեն), լուսանկարով 39-րդ էջում։

[56] Հմմտ. Ուտայ կամ Ութայ, նաև Մար-Ութայ, այսինքն «Հայր Ութայ, Մարութա եպիսկոպոսի (Ի դար) վկայաբանության մեջ (Միաբան, «Արարատ», 1893 թ., էջ 933), Մարութաս եպիսկոպոս Մայաֆարքինի, այսինքն Նիփկերտի (Ժ. Շարբ, «Հեղձ-Դիանեսիոսի ժամանակագրություն», Լուվեն, 1949, էջ 141, 143. լատիներեն)։

[57] Լ. Մելիքսեթ-Բեկ, «Ուտիացոց պատմությունից», էջ 41։

[58] Հովհաննես եպիսկոպոս Շահխաթունյանց, «Սարագրութիւն կաթողիկէ Էջմիածնի և հին դաստաց Այրարատայ», Բ, Էջմիածին, 1842, էջ 379—380. Սարգիս արքեպիսկոպոս Ջալալյանց, «Ճանապարհորդութիւն ի Մեծն Հայաստան», Բ, էջ 376—379. Մակար եպիսկոպոս Բարխուդարյան, «Աղվանից երկիր և դրացիք», Թիֆլիս, 1893, էջ 249—256. Ղազարոս Խանանա Հովսեփյան, «Ակնարկներ ուտիացի և մահմեդական հայերի մասին», Թիֆլիս, 1904, էջ 41—47. Կ. Կոստանյան, «Վիմական տարեգիրք», ՍՊԲ, 1913, էջ 171, 174, 176 և այլն։ Այստեղ տեղին կլիներ նշել, որ Գիսը վրացերեն կոչվում է Գիշի, որով այն կապվում է [ծ]ղիշ անձնանվան հետ, իսկ Ձալեթ և Թելեթ տեղանունների իրար մոտ լինելը ակներև է։

դրի է առել Օրբելյանը[59], իսկ մինչ Օրբելյանը այն մանրամասն արձանագրված է եղել դեպքերի ժամանակակից, Հաղբատի վանքի միաբան Դավիթ վարդապետ Քորայրեցու մի ընդարձակ «հիշատակարան»-ի մեջ[60]։

Աշխարհագրական կետերը, որոնց շուրջը տեղի էին ունեցել 1177—1178 թվականների դեպքերը, հիշյալ պատմիչների մոտ հիշատակված են այսպես. «Ագարակ զղեակ» ըստ Դավիթ Քորայրեցու[61], կամ «Ագարակն կոչեցեալ դարպասի»—«Ագարակն դարպասն» ըստ Ստեփանոս Օրբելյանի[62], ուր նստած էր ապստամբության ղեկավար Օրբելյան Սմբատի որդի Իվանեն իր եղբայրներով, որդիներով և յուրայիններով հանդերձ։ Եվ սրանց մոտ էին գալիս ամենամեծ դէդէպուլացն, դայր և Դեմնայնս, որին Օրբելներն ուզում էին արքայական գահ բարձրացնել. մինչդեռ Գիորգի Գ թագավորի մասին ասված է, որ նա կայ նստեալ ի Սախատէ[63] սակաւ արամբք»[64]։

Ագարակը Լոռվա բերդի մոտերքում գտնվող ավանի անունն է։ Սակայն, ըստ պրոֆ. Ն. Գ. Բերձենիշվիլու կռահման[65], ԺԲ—ԺԳ դարերում ընդհանուր առմամբ «Ագարանիս» է կոչվել Թբիլիսիի մոտիկ շրջակայքը (Շինդիսի, Տաքամելա, Կոչորի գյուղերը), որը ծառայել է իրեն ամառանոց վրաց արքայական տան անդամների ու մեծամեծների համար։ Մասնավորապես «գարպասս»—«գարապասս»-ը Կոչորիի ամառնային ապարանքները պիտի լինեին։

Սրա կապակցությամբ որոշվում է և «Սախատէ»-ի տեղագրությունը, որն, ըստ Ն. Բերձենիշվիլու, նույն «Սախատիս Թելեթիս»-ն պիտի լինի, այսինքն Թելեթի Ս. Գևորգ ուխտատեղին։

Նկար 2. ԹԵԼԵԹԻ 1002 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՅԵՐԻՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Ամփոփելով Ստեփանոս Օրբելյանի հաղորդած տեղեկությունները Օրբելների ապստամբության մասին, Ն. Բերձենիշվիլին ներկայացնում է դեպքերի ու անցքերի հաջորդականությունը հետևյալ կերպով (մեջբերումի մեջ ընդգծումները Ն. Բերձենիշվիլունն են—Լ. Մ.-Բ.)։

«Թագավորը գտնվում էր Սախատեում (ի տեղի դարպասի), Օրբելները նստած էին վերին Տաքամելայում (Կոչորիում կամ Ագարակ-դարպասում)։ Իվանեն հարձակվեց Սախատեի վրա, թագավորը փակվեց Թբիլիսիում, Իվանեն գրավեց Սախատեն. թագավորն ուժեղացավ, վերադարձրեց թե՛ Սախատեն և թե՛ Իվանեի ապարանքը (դարպասը) և ամրոցը (խիսարը)։ Եվ այսպիսի պատկերի իրավացիության վկան է, թվում է, Սախատե անունը։ Անտարակույս, այն կապված է ուխտատեղիի հետ. այս վայրը, ուր թագավորի պալատն էր գտնվում, կոչվում էր Սախատե։ Այժմ, եթե հիշենք, որ հենց այս վայրը, օի տեղի դարպասիս, գտնվում է այժմյան Թելեթից դեպի հյուսիս, նրա շրջակայքում, իսկ այս Թելեթը այժմ հռչակված է իր ուխտատեղիով, ուր ուխտավորները հե-

59 «Պատմութիւն նահանգին Սիսական արարեալ Ստեփանոսի Օրբէլեան արքեպիսկոպոսի Սիւնեաց», Թիֆլիս, 1910, էջ 384. Լ. Մելիքսեթ-Բեկ. «Ստեփանոս Սյունեցու «Օրբելների պատմության» վրացական վերնագիրը», «Պատմության Տեղեկագիր», 2, Թբիլիսի, 1952, էջ 60 (վրացերեն)։

60 Վ. Հակոբյան, «Դավիթ Քորայրեցու հիշատակարանը», «Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի Տեղեկագիր», 1952 թ., № 8, էջ 112։

61 Նույն տեղում։

62 Տե՛ս 59-րդ ծանոթագրությունը։

63 «Սախատ»-ի բառից, սա նախածանցով և Լ վերջամասնիկով, որ նշանակում է զարդ, զարդանկար, խաչ, սրբապատկեր, սրբավայր, ուխտատեղի և այլն։ Հմմտ. Հ. Աճառյան, «Հայերեն արմատական բառարան», Գ, էջ 396. Ն. Մառ. «Ընտիր երկեր», Ա, էջ 76 (ռուսերեն)։

64 «Պատմութիւն նահանգին Սիսական», էջ 384։

65 Ն. Բերձենիշվիլի, «Հին Թբիլիսիի տեղանունները (Ագարանի)», «Միմամխիվելիս», Թ, Թբիլիսի, 1951, էջ 37—60 (վրացերեն, ռուսերեն ամփոփումով)։

ուավոր տարածությունից են դալիս, և այս պատճառով գյուղն ևս Խաչիս Թելեթի է կոչվում, մենք ի վիճակի ենք ավելի մեծ համարձակությամբ կռահելու, որ այն վայրը, որի մոտերքում թագավորի դարբասն էր գտնվում, կոչվում էր Սախատեռ[66]։

Ընդ սմին, Ն. Բերձենիշվիլին հաշվի է առնում նաև մի այլ ենթադրություն. գուցե «Սախատեռ» կոչվածը Շահնաբադը (Շավնաբադը) լինի։ Սակայն, մի շարք համոզեցուցիչ փաստերով այս ենթադրությունը փարատելով, նա վերջնականապես գալիս է այն եզրակացության, որ Օրբելյանի հիշած «Սախատեռ»-ն Խաչիս-Թելեթն է[67], այսինքն հռչակավոր Թելեթի Ս. Գևորգ ուխտատեղին։

Հետևապես, եթե ընդունենք Ն. Բերձենիշվիլու միանգամայն տրամաբանական այս կռահումը, անշուշտ պիտի հանգենք և այն եզրակացության, որ 1177—1178 թվականների ապստամբության պահին Թելեթն իբրև ուխտատեղի ո՛չ միայն գոյություն ուներ, այլև վայելում էր մեծ հեղինակություն ժողովրդի մեջ։

Այստեղից բխում է մի այլ հետևություն ևս. Թելեթի նախնական եկեղեցու հիմնադրումը կարող էր տեղի ունենալ 1002 թվականին, ինչպես կարդացվում է նրա հնագույն հայերեն վիմագրության մեջ, այսինքն դեռևս այն ժամանակ, երբ Թբիլիսին իր շրջակայքով և, նրա հետ միասին, Արևելյան Վրաստանի որոշ մասը գտնվում էին արաբական խալիֆատի գերիշխանության տակ, իսկ մասնավորապես Թբիլիսին արաբական ամիրայի նստաղեղին էր, մինչև որ Դավիթ Շինող արքայի կողմից Թբիլիսիի ազատագրումով 1122 թվականին ամբողջ Վրաստանը կմիանար իր հինավուրց մայրաքաղաքի շուրջը։

***

Այժմ մեզ մնում է հրապարակել Թելեթում մեզ հասած հայերեն և վրացերեն վիմագրությունները, որոնք, ինչպես և վերոհիշյալ 1002 թվականի արձանագրությունը, ամփոփված են 1832 թվականին վերակառուցված զանգակատան (տե՛ս նկար 1)[68] պատերի մեջ, թե՛ ներքուստ և թե՛ արտաքուստ[69]։

Զանգակատան երկրորդ հարկում, արտաքուստ, արևելյան պատի հարավ-արևելյան անկյունում պատի մեջ ամփոփված է մի խաչքար, որի շուրջը կարդացվում է 6 տողանի երկաթագիր հայերեն հետևյալ արձանագրությունը.

«Սուրբ խաչս բարեխաւս է Տէր Յակոբին. թվին ՌՃԷ»։

Պետք է ենթադրել, որ Տեր Հակոբը, որ հիշված է 1681 թվականի ներքո, եղել է Թելեթի վանահայր կամ միաբան։

Նորակառույց (1826 թ.) եկեղեցու ներսում նշվում է մի տապանագիր, որը, հավանական է, նախքան եկեղեցու կառուցումը, նույն տեղում է եղել բացօթյա։ Սա նույնպես երկաթագիր հայերեն է՝ 6 տողից բաղկացած.

«Այս է տապան Տէր Ներսէսին, որ առ Աստուած փոխեցաւ. թվին ՌՃԿԹ դեկտեմբերի ԻԵ»։

Անտարակույս, այստեղ հիշված Տեր Ներսեսը, որը վախճանվել է 1713 թվականի դեկտեմբերի 25-ին, նույնպես Թելեթի վանահայր կամ միաբան պիտի լիներ։

Բացի այս տապանագրից, մի ժամանակ հիշյալ եկեղեցու բակում այս ու այն տեղ ցրված էին մի շարք այլ հուշարձաններ, որոնց մեջ հիշվում էին Թելեթի հանգուցյալ վանահայր վարդապետները, մի դեպքում նույնիսկ ծայրագույն վարդապետի աստիճանով, բոլորն էլ համեմատաբար ավելի ուշ ժամանակների[70]։

Սակայն վերադառնանք զանգակատան։ Անվիճելի է, որ Թելեթի հնությունների շարքում արվեստի տեսակետից համեմատաբար ամենահետաքրքրականն է բարձրաքանդակը, որն ամփոփված է զանգակատան պատերից մեկում, ուր ներկայացված է Ս. Գևորգը ձի հեծած և նիզակով վիշապին խորտակելու դիրքում (տե՛ս նկար 3)։

Բարձրաքանդակի ներքևի մասում շրջանակի մեջ փորագրված է հետևյալ երկլեզվյան արձանագրությունը.

ա. հայերեն՝ 4 տող.

---

66 Ն. Բերձենիշվիլի, հիշյալ աշխատությունը, էջ 37—60։

67 Այստեղ կարևոր է նշել, որ Թոլնիսի հայոց ուխտատեղին ևս կոչվում էր «խաչիս-սոփելի», այսինքն հայի գյուղ։

68 Հմմտ. Ռ. Շմերլինգ, Վ. Դոլիձե, Թ. Բառնավելի, «Թբիլիսիի շրջակայքի ճարտարապետական ուղեցույց», Թբիլիսի, 1960, էջ 88—89 և նկարներ 27 ու 28 (առաջինն)։

69 Լ. Մելիքսեթ-Բեկ, «Հայկական հնություններ Թիֆլիսի մոտիկ շրջակայքում», հիշյալ հրատարակությունը, էջ 92—101 (վրացերեն)։

70 Նույն տեղում, էջ 99—100։ Օգտվելով առիթից, կուզենայինք նշել, որ Թելեթը ուներ և իր «տիրակալները» հանձին Մեհրարյան ազգատոհմի ներկայացուցիչ քահանաների։ Ի դարի սկզբներին այստեղի վանահայրերն էին հաջորդաբար Դիոնեսիոս վարդապետ Ղամազյանը և Միքայել վարդապետ Դավթյանը, որոնց փոխարինեց Թիֆլիսի թեմական կոնսիստորիայի անդամ Սարգիս ավագ քահանա Շիրոյանը (հետագայում էջմիածնի միաբան Սարգիս եպիսկոպոսը)։ Վերջինիս մասին՝ Բագրատ Այվազյան, «Քահանհինգամյակ Սարգիս ավագ քահանա Շիրոյանի քահանայական, դպրոցական-հասարակական գործունեությանը», Տփխիս, 1930։

«Հիշատակ է Էրինենց Յեսայու որդուց Աբելի ժառանգ Գէորգին, որ ընծայեցաց ի դուռն Սրբոյ Գէորգայ զօրավարին, բուին ԻՄԽԱ»:

բ. վրացերենը՝ 1 տող.

«Ենվծիրէք շվեն խարազ Աբէլա զա շվիլի Ի.ուրճա» (*«Ընծայեցինք մենք, կոշկակար Աբելը և [նրա] որդի Գեուրքը»*).

Այսպիսով, պարզվում է, որ Ս. Գեորգի բանդակը նվիրաբերել են Թելեթին Էրինենց Եսայու որդի կոշկակար Աբելը և նրա որդի Գեորգը (Գէուրքը). Նվիրատվությունը տեղի է ունեցել 1792 թվականին, այսինքն Աղա-Մահմադ-խանի արշավանքից 3 տարի առաջ.

Բացի դրանից, արձանագրությունն արձագանքում է այն իրողությանը, որ Թելեթը իրոք «սեյբանգահ»-ի, այսինքն զրոսավայրի, դեր է կատարել Վրաստանի տարացեղ (վրաց, հայոց և «Թուրքիր»-ի) ազգաբնակչության գերազանցապես «համքար ու ասնաֆ» կոչված շերտի աչքում, ինչպես վկայում է Սայաթ-Նովայի հետևորդ բանաստեղծ Շամչի-Մելքոն.

Այնուամենայնիվ, չմոռանանք ասել նաև այն, որ, տալով Թելեթի սույն բարձրաքանդակի լուսանկարը, բնականաբար պիտի հիշենք այն վրացերեն վավերագիրը, որ Թելեթի

Նկար 4. ԹԵԼԵԹԻ ՎԱՆՔԻ ԲԱՐԱՐԱՔԱՆԴԱԿ Ս. ԳԵՎՈՐԳԸ

Ս. Գեորգը անվանված է անմիջապես Վանքի Ս. Գեորգի կողքին. ուստի և նպատակահարմար ենք գտնում կցել մեր հոդվածին և այս վերջինի լուսանկարը (նկար 4)[71].

Այժմ կանգ առնենք պատմական զանգակատան, այս յուրատեսակ թանգարանի, մնացած արձանագրությունների վրա.

Սրանցից մեկն է դարձյալ երկլեզվյան վիմագրությունը յորսհարկանի շենքի առաջին հարկի հարավային պատում, մի քարի վրա, ուր տրված է մեջբերում Սաղմոսից (խ. 1), իսկ վերևից նշված է թվականը արաբական թվանշաններով՝ 1827.

Ահա այդ արձանագրությունը.

ա. հայերենը՝ 5 տող.

Ջերանի, որ խորեի գաղիատն եւ գոնանկն, յաւուր չարի փրկէ զնա Տէր»:

Նկար 3. ԹԵԼԵԹԻ ՋԱՆԳԱԿԱՏԱՆ ԲԱՐԱՐԱՔԱՆԴԱԿ Ս. ԳԵՎՈՐԳԸ

---

71 Վանքի Ս. Գեորգի բարձրաքանդակը հայտնաբերվեց հողային աշխատանքների միջոցին Թբիլիսիի Վանքի եկեղեցու բակում 1909 թվականին և ամփոփվեց տաճարի սյուներից մեկում (հյուսիսային շարքի միջին մասում, երեսը դեպի արևմուտք), ապա 1937 թվականին տեղափոխվեց Մեյդանի Ս. Գեորգ եկեղեցին, ուր և ամփոփված է այժմ հարավային պատի մեջ, երեսը դեպի հյուսիս.

բ. վրացերենը (բովանդակությամբ նույնը)՝ 6 տող.

«Նետար արս, ռոմէլման գուլիսխմա ճղոս գլախակիսա դա դավրդոմիլիսա. դղէսա բոռոտսա իխսնաս իգի ուպալսան»[72]:

Վերջապես, նույն զանգակատուն-թանգարանի առաջին հարկում, հարավային պատում, մարմարյա մի փոքրիկ քարի վրա փորագրված է ընդարձակ ճայերեն մի արձանագրություն բոլորագիր տառերով՝ 9 տող, որը վերաբերում է զանգակատան կառուցման.

«Զանգակատունս այս Սուրբ Գէորգ վանացս Թէլէթի ճանդեռձ նորակերտ ճաստատութեամբ աշտարակիս կանգնեցաւ արդեամբք բարեպաշտ ճասարակութեան և մանաւանդ ազնիւ եպսգոր Արտեմիշի Զաւրեանց ի ձեռն աշխատասիրութեան Տէր Գէորգ աւագ քահանայի Մեհրաբեանց՝ յամի Տեառն 1832-ին»:

Այսպիսով, Թելեթի չորսհարկանի զանգակատուն-աշտարակը, «վայելչացեալ շքեղ կաթողիկէիս», ինչպես դրել է Սարգիս արքեպիսկոպոս Ջալալյանցը, կառուցված է 1832 թվականին։ Սույն թվականին է ավարտված նաև այլ շենքերի (այդ թվում և եկեղեցու) կառուցումը, որ սկսված էր 1826 թվականին։

Կարճ ասած, Թելեթի հուշարձանների պատմությունը կարելի է ամփոփել, եթե չհաշվենք Դ դարի հիշատակությունը, 1002—1832 թվականների շրջանակում։

Մեր սույն տեսությանը կցում ենք Շամչի-Մելքոյի բանաստեղծությունը՝ նվիրված Թելեթին, 4 տուն[73].

1. Ավալի բաշտան[74] ֆիզ գովիմ
  իժում բաղ ու բաղչադ, Թելե՛ք.
Սեյրանգանդ[75] գովելի,
  անուշ է բուլադդ, Թելե՛ք:
Մեռնիմ ֆու օղորմութենին,
  աշխարֆս չիկա ֆու բայն.
Դիփուճանեֆս ֆիզ կու ավտանեֆ՝
  վուրն վրացի, բուրֆ ու ճայն:
Վուրը խունկ ու մում կու բերի,
  վուրը աբասին ու շանին:
Կարոդ իս դուն, կու փրկիս
  չոլախին ու կաղին, Թելե՛ք:

2. Քու դուռն ճամփուրելու
  շատ ճամֆար ու ասնաֆ կուգա.
Մեռնիմ ֆու օղորմութենին,
  շատ աղավնի ու ճավ կուգա:
Վուրը տավար կու բերե,
  շատ օշխար ու գառ կուգա.
Թե վուր դուն ճանո կուլիս,
  կու կարին մատադն, Թելե՛ք:

3. Քաղկի տդերքն մոդ կուլին,
  դիփ միանա[76] բաղով կուգան.
Ռանգեռանգ ձիաներով
  օսկե յարաղնածով կուգան.
Մոնթիրն ֆախցր ձեռով
  շարական ու տադով կուգան.
Համբարցումի չորեֆշափիին
  կու կասիին իրդարն[77], Թելե՛ք:

4. Ասում ին՝ սազով կոսիմ.
  յիս էս խաղն նազով կոսիմ.
Զուրս խանս[78] բարիփլամեն[79]
  էսպես մուխամբազով կոսիմ.
Թիֆլիզու Շամչի-Մելքոն
  ճամաշա սոյբաթով[80] կոսիմ:
[Սեյրանգանդ գովելի,
  անուշ է բուլադդ, Թելե՛ք]:

---

72 Միանգամայն համապատասխանում է Վրացական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի հրատարակությամբ նորերս լույս տեսած համեմատական դիտական բառարանին։ Տե՛ս «Սաղմոսք հին վրացերեն խմբագրությամբ ԺԱ—ԺԳ դարերի ձեռագրերի հիման վրա», ի ձեռն Մգեֆալա Շանիձեի [«Հին վրացերեն լեզվի հուշարձաններ», Բ], Թբիլիսի, 1960, էջ 103։

73 Տե՛ս 42-րդ ծանոթագրությունը։

74 Այսինքն՝ սկզբից, էն դլխից։

75 Այսինքն՝ դրոսավայր։

76 Այսինքն՝ բոլորը մասին։

77 Այսինքն՝ խոստովանություն, համաձայնություն։

78 Այսինքն՝ տուն, բանաստեղծության տուն։

79 Այսինքն՝ գովերգություն։

80 Այսինքն՝ գրույց։



ՄԱՅՐ ՀԱՅՐԵՆԻՔՈՒՄ

ԼՈՒՐԵՐ ՄԱՅՐ ՀԱՅՐԵՆԻՔԻՑ

ՀԱՅԿԱԿԱՆ ՏԱՂԱՎԱՐԸ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՎՈՒՄ Է.— Մոսկվայում Սովետական Սոցիալիստական Ռեսպուբլիկաների Միության ժողովրդական տնտեսության նվաճումների ցուցահանդեսի հայկական տաղավարը վերակառուցվում է և ընդարձակվում։ Կարճ ժամանակից այն կրացվի նոր ցուցադրումով և կարտացոլի ռեսպուբլիկայի ժողովրդական տնտեսության բոլոր բնագավառների նորադույն նվաճումները։

Նախկին երկուսի փոխարեն այստեղ կա ինը սրահ։ 1600 քառակուսի մետր մակերեսով։ Երկու գլխավոր ցուցասրահներն արտացոլում են վերջին երեք տարում հայ ժողովրդի մեծ բերած նվաճումները արդյունաբերության, տրանսպորտի, գիտության, արվեստի, առողջապահության և ժողովրդական կրթության բնագավառներում։ Նորակառույց սրահներից մեկը կդարձնեն մեր դյուղատնտեսության վերելքը պատկերող արտոնատեսարան։

Տաղավարի վերակառուցման նախագծի հեղինակն է հարգարժան պրոֆ. Ս. Սաֆարյանը։

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԸՆԴԵՐՔԻ ՀԱՐՍՏՈՒԹՅՈՒՆԸ.— Հայ գիտնականների տքնաջան աշխատանքների շնորհիվ վերջին տարիներս Հայաստանում հայտնաբերվել են տասնյակ տեսակի զանազան օգտակար հանածոների՝ պղնձի, մոլիբդենի, երկաթի, կապարի, ձծմբաթթվի, քրոմի և այլ դժվարամատչելի ու հազվադյուտ մետաղների հանքավայրեր, ինչպես նաև աղ և բազմագան հրաբխի լիճանյութեր։ Այժմ Հայաստանի երկրաբանների առջև դրված է պատասխանատու և պատվավոր խնդիր՝ լիովին բացել ռեսպուբլիկայի բնկերքի հարստությունները։

Ավելի քան 140 երկրաբանական արշավախմբեր այս տարի ռեսպուբլիկայի տարբեր շրջաններում օգտակար հանածոներ են որոնում։ Այժմ հաջողությամբ հետախուզվում են Զանգեզուրի և Շամշադինի հանքավայրերի թեները, որտեղ հայտնաբերված արդյունաբերական նոր հանքանյութածները պարունակում են պղնձի զգալի պաշարներ։

Արագ թափով առաջ է տարվում և մոտ ժամանակներս կավարտվի Հրազդանի երկաթահանքերի հետախուզությունը, կկառուցվի հանքանյութի հարստացման ֆաբրիկա։

Զգալիորեն ընդլայնվում են Եղեղնաձորի շրջանի բազմամետաղների հանքավայրերի սահմանները։

Զոտի ոսկեհանքերի հայտնաբերումից հետո երկրաբանները մի շարք ոսկեհանքեր են գտել ռեսպուբլիկայի հարավային և հարավ-արևմտյան շրջաններում, որտեղ այժմ նախնական հետախուզական աշխատանքներ են կատարվում։

Մեծ հեռանկարներ ունեն Իջևանի շրջանի Սարիգյուղի վերջերս հայտնաբերված բնանիստային կավահանքերը, որոնց հումքը իր որակով Սովետական Միությունում լավագույնն է և կարող է բաց լինել երկրի հարավային և արևմտյան տնտեսական շրջաններին, բնանիստային արժեքավոր փոշի և հորատման կավ մատակարարելու համար։ Իջևանում նախատեսվում է կառուցել կավի ակտիվացման գործարան։

Զանազան շինանյութերի տասնյակ նոր հանքավայրեր հայտնաբերել և այժմ ուսումնասիրում են երկրաբանական արշավախմբերը։ Դրանք են տուֆը, բազալտը, բեմզան, հրաբխախառամը, շինարարական ավազը և այլն։ Մեծ ուշադրության է արժանի Այրումի դիպսի նորաբաց հանքավայրը, որը գրավում է 20—30 քառակուսի կիլոմետր տարածություն։ Հանքերում դիպսի պարունակությունը հասնում է մինչև 80 տոկոսի։

Անհոգնաջան աշխատանք են կատարում նաև հիդրոերկրաբանները, որոնք տարբերկրյա ջրերը ձառայեցնում են ռեսպուբլիկայի ժողովրդական տնտեսության կարիքներին։

Երկրաբանները հետախուզական մեծ աշխատանքներ կձեռնարկեն պղնձի և այլ սև ու գունավոր մետաղների հետագա էլ ավելի ինտենսիվ որոնման, ինչպես նաև ռեսպուբլիկայի առանձին շրջանների նավթաբազատվության պրոցեսի ուսումնասիրության ասպարեզում։ Առավել լայն աշխատանքներ կկատարվեն նաև Հայաստանի մետաղահանքերում, հազվադյուտ և ցրված տարրեր գտնելու համար։

ԳԻՐՔ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԵՆԴԱՆԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԻ ՄԱՍԻՆ.— Վերջերս Երևանում լույս տեսավ Վախտանգ Անանյանի «Հայաստանի կենդանական աշխարհը բովանդակալից գիրքը։ Դա արժեքավոր գիտական մի

ուսումնասիրություն է Հայաստանի կենդանիների մասին, հնագույն ժամանակներից մինչև մեր օրերը։

Բոլոր նրանց, որոնց սիրում են հայրենի բնությունը, նրա կենդանական աշխարհը, հափշտակությամբ կընթերցեն այս աշխատությունը։ Բայց շնորհակալության զգացումով կփակեն գիրքը նաև նրանց, որոնց, առաջին անգամ են այսպես մոտիկից ծանոթանում մեր կենդանական աշխարհին։ Հեղինակի զվարթ պատմելու ձևը, նյութի հստակ շարադրանքը, դրական մեջբերումները ապահովում են նրան մի անանխընթաց հաջողություն այս թեմայով ստեղծված աշխատությունների մեջ։

ԵՐԿԱՐՈՐՅԱ ԴՊՐՈՑԸ ԵՐԵՎԱՆՈՒՄ.— Մեկ տարի առաջ ստեղծված № 1 երկարօրյա դպրոցն իր տեսակի մեջ միակն է Երևանում։

Դպրոցի նպատակն է ընդգրկել աշխատող ծնողների երեխաների, դասերից հետո զբաղվել նրանց ուսման հարցերով։ Երեխաները դպրոց գալով վաղ առավոտյան և տուն վերադառնալով երեկոյան, կտրվում են փողոցից, զբաղվում արտադասարանական աշխատանքով և զգալի առաջադիմության հասնում ուսման և գիտության մեջ։

Դրագրվել է մոտ ապագային ավելացնել թիվը երկարօրյա դպրոցների։

ՏԵՐԵԿՆԵՏԻ ԾՆՆԴՅԱՆ 150-ԱՄՅԱԿԸ.— Վերջերս Ալեքսանդր Մյասնիկյանի անվան պետական հեսպերիական գրադարանում բացվել էր ցուցահանդես՝ նվիրված անգլիական նշանավոր գրող Վիլյամ Տերեկեյի ծննդյան 150-ամյակին։

Ցուցահանդեսի նյութերը հնարավորություն են ընձեռում ծանոթանալու անվանի գրողի կյանքին և գրական գործունեությանը։

Ցուցափեղկերում և սեղաններում ներկայացված են գրողի երկերի անգլերեն, ռուսերեն, հայերեն հրատարակությունների օրինակները։ Ուշագրավ են նաև մի շարք մենագրություններ Տերեկեյի կյանքի և նրա ռուս գրականության հետ ունեցած կապի մասին։

ԳՐԻԳՈՐ ԶՈՀՐԱՊԻ ԾՆՆԴՅԱՆ 100-ԱՄՅԱԿԸ.— Հայֆիլհարմոնիայի ամառային դահլիճում վերջերս նշվեց հայ նշանավոր նվագիչ Գրիգոր Զոհրապի ծննդյան 100-ամյակը։ Հանդիսության ներկա էին գրողներ, գիտնականներ, արվեստագետներ, մայրաքաղաքի գրասեր հասարակության բազմաթիվ ներկայացուցիչներ։

Բեմի խորքում, թարմ ծաղիկների ու կանաչի մեջ, ականավոր գրողի մեծադիր դիմանկարն է։

Գրիգոր Զոհրապի գրական ժառանգության մասին հայ գրող Նաիրի Զարյանն ասում է. «Զոհրապը մեկն է հայկական ռեալիզմի հիմնադիրներից և ամենամեծ ռեալիստը արևմտահայ գրականության մեջ։ Տաղանդավոր իրավաբան, փայլուն հռետոր, մեծահամբավ հասարակական գործիչ, թուրքական մեջլիսի հերթական պատգամավոր Զոհրապի հզոր տաղանդը իր ամենաշքեղ մարմնացումը գտավ գրականության մեջ։ Զոհրապի հոգևոր ժառանգությունը և նրա հանճարը մնացին ժողովրդին։ Զոհրապի հրաշագեղ նովելներով կարող է պարծենալ ամեն մի կուլտուրական ազգ։

Զոհրապի մասին այնուհետև ելույթներ ունեցան բանասիրական գիտությունների թեկնածու Մ. Հյուսյանը, գրողներ Ս. Տարոնցին, Ս. Ալազազյանը, Ս. Կուրտիկյանը, Վ. Դավթյանը։

Հանդիսության վերջում տեղի ունեցավ նոր հանդես։

ՎԱՐՊԵՏԻ ՏՈՒՆ-ԹԱՆԳԱՐԱՆԸ.— Երևանի Գլխավորի փողոցի վրա կառուցված տանը մեծատաղանդ բանաստեղծ Ավետիք Իսահակյանը ապրել է իր կյանքի վերջին երկու տասնամյակները։ Այստեղ են ստեղծվել Իսահակյանի բազմաթիվ երկերը։

Հայաստանի կառավարության որոշումով, Ավետիք Իսահակյանի վերոհիշյալ բնակարանը վերածվել է նրա անվան տուն-թանգարանի։

Երկհարկանի այս շենքը ունի հինգ սենյակներ։ Շուտով նեղարանը, աշխատասենյակը, գրադարանը, ճաշասենյակ-ընդունարանը կստանան այն տեսքը, ինչպես եղել են Վարպետի կենդանության ժամանակ։

Աշխատասենյակում են Իսահակյանի անկողինը, ձեռնափայտերը, գրասեղանն ու թանաքաստարը, հագուստները, կոշիկները, ակնոցները, հարյուրավոր լուսանկարներ, հուշանվերներ և այլ իրեր։ Խնամքով պահվում է տնամերձ այգին, որտեղ իր ձեռքով իլնձորենիներ է տնկել վարպետը։

Իսահակյանը թողել է գրական մեծ ժառանգություն։ Թանգարանում են նրա ստեղծագործությունների բազմալեզու հրատարակությունների օրինակները։

Ուշագրավ է մինչև այժմ էլ ձեռագիր վիճակում գտնվող «Ուստա Կարո» վեպի ստեղծման պատմությունը։

Ավարտված բայց ձեռագիր վիճակում է գտնվում նաև «Մասսա Մանուկ և Դև Սուլթանը» գուսանական ոճով գրված դյուցազներգությունը, որը նվիրված է հայ ժողովրդի ազատագրական պայքարին։ Պահպանվել են «Ծոթ օր ապատում, յոթ օր անապատում», «Ղազարոս», «Հայկական Ֆաուստ» և տասնյակ անավարտ այլ գործերի ձեռագրեր, պատառիկներ, գրական մտահղացումների համառոտագրություններ։

Իսահակյանը սիրել է գրի առնել իր խոհերը, մտքերն ու դիտողությունները։ Դրանք գրված են նրա գրքերի լուսանցքներում, ծոցատետրերում և առանձին թերթերի վրա։ Ահա դրանցից մի երկուսը, որ նա գրել է մահվանից քիչ առաջ. «Բաժանված վիշտը կես վիշտ է, բաժանված ուրախությունը՝ կրկնակի ուրախություն», «Մինչև յոթանասուն տարեկանը տարին քո կյանքից է գնում, յոթանասունից հետո դու մահից ես պակում քո կյանքը»։

Առանձին պատառիկների վրա պահվել են հայ արվեստի ու գրականության կարկառուն գործիչների մասին Վարպետի բազմաթիվ մտքերը։

Անմահ Կոմիտաս վարդապետի մասին գրվել է. «Մյանչելի են նրա մեղեդիները, վերին աստիճանի հուզական, հարուստ լիրիզմ է նրա մեղեդին, կախարդիչ։ Հայ գեղջուկը և Կոմիտասը նույն ստեղծագործական գեմքերն են։ Գեղջուկը տեր է անցած հարստությանն, դարերով բյուրեղացած այս հարուստ գանձը Կոմիտասը հասցնում է գեղարվեստական կատարելության։

Հարուստ է նաև Իսահակյանի նամականին, Հայկական մշակույթի պատմության առանձին հարցերի լուսաբանման համար այն առատ նյութ կտա ուսումնասիրողներին։

Իսահակյանի անձնական գրադարանում կա հայերեն, ռուսերեն, ֆրանսերեն, գերմաներեն, իտալերեն և այլ լեզուներով շուրջ 6000 հատոր գիրք։ Դրանցից մի քանի հարյուրի վրա կան Վարպետին ուղղված ընծայական մակագրություններ։

Այս բոլոր նյութերը ուսումնասիրվում, կարգի բերվում են ցուցադրելու համար։ Շուտով բազմահազար այցելուների առջև թանգարանը կբացի իր դռները։

ԴԵՐԱՍԱՆ ՀՈՎՀԱՆՆԵՍ ԱԲԵԼՅԱՆԻ ՄԱՀՎԱՆ 25-ԱՄՅԱԿԸ.— Վերջերս Երևանում նշվեց անվանի դերասան Հովհաննես Աբելյանի մահվան 25-ամյակը։ Հովհաննես Աբելյանը փոքր տարիքից նվիրվել է հայ թատրոնի բեմին և եղել է, Աղամյանից հետո, ամենասիրված դերասանը հայ բեմում։ Աբելյանը 1925 թվականին արտասահմանից վերադառնալով, հպարտությամբ և մեծ նվիրումով ծառայել է հայ թատրոնին, մինչև իր մահը։ Նրա մեջ Հայրենիքի սերը շատ խորն է եղել։ Նրա բեմական արվեստը, իր կյանքի վերջին շրջանում, փայլել է իր ամբողջ գեղեցկությամբ։ Այդ մասին ինքն ասում է. «Եթե ես մինչև հիմա երկաթե շղթաներով էի. կապված թատրոնին, այսօրվանից ոսկե շղթաներով կկապվեմ նրանց»։

ԿՈՍՏԱՆ ԶԱՐՅԱՆԻ ԴԱՍԱԼՈՍՈՒԹՅՈՒՆԸ.— Մի քանի ամիս է Հայաստանում հյուրընկալվում էր հայտնի գրող Կոստան Զարյանը։ Վերջերս Արվեստի աշխատողների տանը Կ. Զարյանը հանդես եկավ «Լեոնարդո դա Վինչին և Հայաստանը» նյութի շուրջը հետաքրքիր դասախոսությամբ։

Քննելով Վերածննդի խոշոր ներկայացուցիչ, հանճարեղ նկարիչ, դիտնական և նկարիչ Լեոնարդո դա Վինչիի «Ամայանտյան մատյան»-ը, Զարյանը փաստական հարուստ տվյալների հիման վրա նշեց, որ 1482 թվականին մեծ արվեստագետը եղել է Մերձավոր Արևելքում (Կիպրոս, Կիլիկիա, Հայաստան), ուսումնասիրել է տեղական կենցաղը, սովորություններ, հետաքրքրվել է հայկական ճարտարապետությամբ, կատարել է չափագրություններ և իր հետ Իտալիա տարել գծագրերը։

Դասախոսությունից հետո մտքերի փոխանակության մասնակցեցին Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի իսկական անդամ Ա. Կարինյանը և արվեստի վաստակավոր գործիչ, ճարտարապետ Մ. Մազմանյանը և ուրիշներ։

ՍՈՒՆԴՈՒԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԱԿԱԴԵՄԻԱԿԱՆ ԹԱՏՐՈՆԻ 40-ԱՄՅԱԿԸ.— Այս տարի լրանում է Սունդուկյանի անվան պետական ակադեմիական թատրոնի 40-ամյակը։

Թատրոնի տաղանդավոր կոլեկտիվը ձեռնամուխ է եղել հանդես գալու հոբելյանական նոր խաղացանկով։

Քառասնամյակի առթիվ թատրոնը ներկայացնելու է Դ. Դեմիրճյանի «Վարդանանք»-ը, որի դրամատիկական կոմպոզիցիան կատարել է ժողովրդական արտիստ Գ. Ջանիբեկյանը։ Գինը բեմադրելու է նույնինքն կոմպոզիցիայի հեղինակը։ Գլխավոր դերերը ստանձնել են՝ Վարդան Մամիկոնյան՝ Դ. Մալյան և Գ. Հարությունյան, Վասակ Սյունեցի՝ Գ. Ջանիբեկյան և Գ. Հակոբյան, բեմադրության մեջ զբաղված է թատրոնի ստեղծագործական ողջ կոլեկտիվը։

40 տարի առաջ թատրոնի առաջին թատերաշրջանը բացվեց Գ. Սունդուկյանի «Պեպո» պիեսով։ Իր 40-ամյակին թատրոնը որոշել է բեմ հանել դարձյալ նույն պիեսը նոր բեմադրությամբ։

Հոբելյանական թատերաշրջանում թատրոնը որոշել է նաև բեմադրել Կոռնելյի «Սիդ» ողբերգությունը։

Այս թատերաշրջանում լուրջ ուշադրություն է դարձվելու նաև սովետահայ դրամատուրգների ստեղծագործություններին։

Իրենց լավագույն բեմադրություններով, որոնց մասնակցում են թատրոնի հոբելյանական խաղացանկի մեջ, սունդուկյանցիները հանդես են գալու նաև տարբեր քաղաքներում։

Թատրոնի ամբողջ ստեղծագործական կոլեկտիվը լցված է հոբելյանական թատերաշրջանը նոր, բարձրարվեստ ստեղծագործություններով նշանավորելու ցանկությամբ։

ԱՄԵՐԻԿԱՀԱՅ ԵՐԳՉՈՒՀԻ ՇԱՔԵ ՇԱՀԲԱԶՅԱՆԻ ՀԱՄԵՐԳԸ ԵՐԵՎԱՆՈՒՄ.— Սեպտեմբերի 3-ին, Երևանի Հայֆիլհարմոնիայի մեծ դահլիճում, ելույթ ունեցավ ամերիկահայ սիրված երգչուհի Շաքե Շահբազյանը։

Շնորհալի երգչուհու ասարիների երգերը՝ լինեն Հայաստանում և երգել իր հարազատների համար, իրականացել էին։ Համերգասրահը լեփ-լեցուն էր և երաժշտասեր հասարակությունը ծափահարում էր հեռավոր ափերից Հայրենիք եկած իր արվեստագետ զավակներից մեկին։ Շաքեն համարձակ էր երգում, որովհետև իր Մայրենի հողի վրա էր կանգնել և իր սիրտը թրթռում էր իր ժողովրդի և Հայրենիքի սիրով և կարոտով։ Երգչուհու երգացանկում էին Գերգոլեզիի, Բրամսի, Սկարլատիի, Գունոյի, Գերշվինի, Բեռնստայնի, Լյոմբի և հայ երգահանների՝ հանճարեղ Կոմիտաս վարդապետի, Ալան Հովհաննեսի, Վարդան Սարգսյանի, Սրվանձտյանի, Կոտոյանի և Դոլուխանյանի երգերը։

ՑՈՒՑԱԿ ՄԱՏՅՈՒ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ՆՈՐ ՍՏԱՑՎԱԾ ՁԵՌԱԳՐԵՐԻ*

№ 143

ՃԱՐՏԱՍԱՆՈՒԹԻՒՆ

*ԹԵՐԹԵՐԸ՝ 160։— ՓՐԱԿՆԵՐԸ՝ 20, յուրաքանչիւրը 8 թերթից, միայն Ը՝ 10, ԺԴ՝ 10 և Ի՝ 4 թերթից։— ՄԵԾՈՒԹԻՒՆԸ՝ 14,5×10×2,6 սմ.։—ՆՅՈՒԹԸ՝ հաստակ դիմացկուն թուղթ։— ԿԱՋՄԸ՝ կաշեպատ տախտակ։— ՊԱՀՊԱՆԱԿՆԵՐ՝ սկզբում և վերջում մեկական թերթ հաստակ թուղթ։— ՎԻՃԱԿԸ՝ ձեռագիրը լավ վիճակի մէջ է, միայն կազմի կաշին տեղ-տեղ պոկված և քայքայված։—ԳՐՈՒԹՅՈՒՆԸ՝ միապաղաղ։— ՏՈՂԵՐԸ՝ 21։— ԳԵՌԻՄՆԵՐԸ՝ ոչ ճշգրտորեն։— ԳԻՐԸ՝ նոտրդիր։— ՋԱՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ՝ ձեռագիրն ունի մի քանի շատ հաստակ զարդագիր և մի հատ էլ լուսանցազարդ (թ. 4ա)։ Սրանցից բացի կան նաև 6 հատ տպագիր կիսախորաններ, ինչպես նաև յոթ հատ տպագիր թռչնագրեր։— ԳԱՏԱՐԿ ԹՂԹԵՐԸ՝ 1—3, 156—160։— ԳՐԻՉԸ՝ անհայտ։— ԺԱՄԱՆԱԿԸ՝ ԺԸ—ԺԹ դ.։— ՎԱՃԱՌԸ՝ անհայտ։— ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ՝ Սուլթան ձեռագիրը Մայր Աթոռի Ձեռագրատան 1958 թվականին նվեր է ուղարկել Կոստանդնուպոլսից Տ. Շավարշ քահանա Պալբյանը։

ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆ

Թ. 121բ—ին այսոքիկ սակայք համառոտապէս շարադրեցեալք բուսականք լիցին յաղագս ճարտասանական արհեստին ի փառս Յիսուսի, և ի պատիւ ծնողին իւրոյ, ամէն, օրհնեցելոյ կուսին Մարիամայ։

ՀԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Թ. 2բ.— Մայր Աթոռ Ս. Էջմիածնի թանգարանին կը նուիրէ Շաւարշ քահանայ Պալբեան 14 Յունիս 1958, Պոլիս։

Թ. 3ա.— Ճարտասանութիւն։

Թ. 3բ.— Այս ճարտասանութիւնս Յովակիմ Տէր Ներսէսեանի է։

Այս գիրքս խաչատուր մեծ սարկաւագին ընծաեցի։

Թ. 130բ.— Գրակ։

Թ. 153բ.— Իլէլ։

Թ. 158ա— Աս ճարտասանութիւնն արշը Մաքէնսան է։

Թ. 158բ.— Ասյ ճարտասանութիւն արշը մանգիլ։

Թ. 159բ.— Ճարտասանութիւն այսինքն համենան գիտութեան։

№ 144

ՇԱՐԱԿՆՈՅ

*ԹԵՐԹԵՐԸ՝ 262։— ՓՐԱԿՆԵՐԸ՝ 23, յուրաքանչիւրը 12 թերթից։ Միայն հետևյալ պրակները բաղկացած են տարբեր քանակի թերթերից՝ Ա և ԻԳ՝ 8, Գ, Զ և ԻԲ՝ 10 թերթից։— ՄԵԾՈՒԹՅՈՒՆԸ՝ 14,2×9,7×4,8 սմ.։— ՆՅՈՒԹԸ՝ գեղեցիկ և կեղտոտած դիմացկուն հաստ թուղթ։ Միայն վերջին 8 թերթերը (255—262) մագաղաթ են, գեղեցիկ և կեղտոտած, վերջին թերթն էլ կիսով չափ պատռված։ 255ա թերթում կան թռչնագրեր, թռչուններ, մի լուսանցազարդ և մի խորան, նկարված մավուկան գեղեցիկ ոճով։— ԿԱՋՄԸ՝ չունի։ —ՊԱՀՊԱՆԱԿՆԵՐ՝ չունի։ ՎԻՃԱԿԸ՝ սկզբից և վերջից թերթ։ Սկզբից մի պրակ բնկել է։— ԳՐՈՒԹՅՈՒՆԸ՝ միապաղաղ։— ԳԱՏԱՐԿ ԹՂԹԵՐ՝ չկան։— ՏՈՂԵՐԸ՝ 23։— ԳԵՌԻՄՆԵՐԸ՝ ճշգրտորեն։— ԳԻՐԸ՝ բոլորգիր։— ՋԱՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ՝ ձեռագիրն ունի հաստակ ոճով նկարված թռչնագրեր և զարդագրեր, լուսանցազարդեր և գմբեթներ, ծառեր և ծաղիկներ, թռչուններ և զարդեր։ Կան մի խորան (թ. 101ա) և յոթ հատ կիսախորաններ (թ. թ. 34բ, 78բ, 138ա, 176ա, 218բ, 234բ և 254բ), բոլորն էլ նկարված հաստակ ոճով։— ԳՐԻՉԸ՝ անհայտ։— ՊԱՏՎԻՐԱՏՈՒՆ՝ անհայտ։— ԾԱՂԿՈՂԸ՝ անհայտ։— ԺԱՄԱՆԱԿԸ՝ ԺԶ—ԺԷ դ.։— ՎԱՃԱՌԸ՝ անհայտ։— ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ՝ սաստկած է Վեհափառ Հայրապետից 1966 թվականի հունվար ամսին։

ՀԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Թ. 9բ.— Աստ դատ։

Թ. 45ա.— Առաւաւ աղօթն։

Թ. 77ա.— Ասդուր։

Թ. 100բ.— Իշատակ է այս սուրբ շարականս։

Թ. 204բ.— Իշատակ է շարական... Տէր անվէ նորին հալալ... ընչիս...ն, հզատ...գիսն...բեստ ...ուաւ ...վարեա ...էայ մի բնաւն ...զորմի սակ Ա՛ն. է։

Թ. 243բ.— ...ուան կարդա ի։

Թ. 245ա.— Ցառնեն մեռեալ ...ատաջի ահաւոր։

№ 145

ԺՈՂՈՎԱԾՈՒ

ԹԵՐԹԵՐԸ՝ 102։— ՓՐԱԿՆԵՐԸ՝ 23, անկանոն ծավալով։ Ժ, ԺԴ, ԺԷ և ԻԱ պրակները 2-ական թերթ են, Զ, Թ, ԺԱ, ԺԲ, ԺԳ, ԺԵ, ԺԶ, ԺԸ, Ի և ԻԳ պրակները 4-ական թերթ են, իսկ Ա, Բ, Գ, Դ, Ե, Է, Ը, ԺԹ և ԻԲ պրակները՝ 6-ական թերթ։— ՄԵԾՈՒԹՅՈՒՆԸ՝ 12,8×8,6×1,7 սմ.։— ՆՅՈՒԹԸ՝ գեղեցիկ և կեղտոտած հաստակ թուղթ։— ԿԱՋՄԸ՝ չունի։— ՊԱՀՊԱՆԱԿՆԵՐ՝ չունի։— ՎԻՃԱԿԸ՝ անբավարար, ցնցակեր և պակասավոր։— ԳՐՈՒԹՅՈՒՆԸ՝ միապաղաղ։— ՏՈՂԵՐԸ՝ անհամաչափ՝ 13—18։— ԳԵՌԻՄՆԵՐԸ՝ առանց ճշգրտման։— ԳԻՐԸ՝ անկանոն, նոտրդիր և բոլորգիր մի խառնուրդ։— ՋԱՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ՝ չունի։— ԳՐԻՉԸ՝ անհայտ։— ԺԱՄԱՆԱԿԸ՝ ԺԸ դար։— ՎԱՃԱՌԸ՝ անհայտ։— ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ՝ սույն ձեռագիրը ստացված է 1954 թվականին Ռոստովի հայկական եկեղեցուց, դոկտ.-պրոֆ. Աշոտ Վարդանյանի միջոցով։

---

* Շարունակված էջմիածին ամսագրի 1960 թվականի № № 6-ից, 7-ից, 8-ից և 1961 թվականի № № 1-ից, 3-ից, 5-ից և 7-ից։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Անկանոն կերպով գրված սույն ձեռագիրն ունի երեք բաժիններ, մի մասը տոմար է, մյուս մասը՝ բժշկարան, իսկ երրորդը՝ ողբ Պղնձե քաղաքի մասին։

ՀԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Թ. 55բ.— Հայրիկ Տէր Յակոբեան։
Թ. 101բ.— Մասէն ասաց ինչ մարդ որ գայ...։

№ 146

ԱՒԵՏԱՐԱՆ

ԹԵՐԹԵՐԸ՝ 305.— ԳՐԱԿՆԵՐԸ՝ 26, յուրաքանչյուրը 12 թերթից, ի բաց առյալ ի՝ 7, ԻԴ՝ 14 և ԻՁ՝ 8 թերթից։— ՉԱՓԵՐԸ՝ 18,2×13,5×6,5 սմ.։— ՆՅՈՒԹԸ՝ դնչնած և կեղտոտած սովորական հաստ թուղթ։— ԿԱԶՄԸ՝ կաշեպատ տախտակ, որի վրա ճնշումով մի խաչ և այլ զարդեր են նկարված, կազմին ամրացված են նաև շուրջ երկու տասնյակ կոթագլուխ գամեր, որպես զարդ։ Կազմի երկու բռնիչները բնկել են։— ՊԱՀՊԱՆԱԿՆԵՐԸ՝ օգերից մի թերթ թուղթ։— ՎԻՃԱԿԸ՝ բավարար։— ԳՐՈՒԹՅՈՒՆԸ՝ երկաբուն։— ՏՈՂԵՐԸ՝ 20—21։— ԳՈՒՄՆԵՐԸ՝ արնշումով։— ԳԻՐԸ՝ բոլորգիր։— ՁԱՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ՝ Ձեռագիրն ունի հասարակ ոճով նկարված չորս ավետարանիչների մեծ նկարներ (թ. թ. 3բ, 90բ, 149բ և 238բ)։ Կան նաև բավական գեղեցիկ չորս խորանները (թ. թ. 4ա, 91ա, 150ա և 237ա), ինչպես նաև բազմաթիվ լուսանցազարդերը, մուշեղները, զարդերը, թռչունները և խաչերը։ Ձեռագիրն ունի նաև մի հատ սրբագիր (թ. 4ա) և մի հատ էլ զաղանագիր (թ. 150ա)։— ԳՐԻՉՔ՝ Ստեփանոս։— ՊԱՏՎԻՐԱՏՈՒՆ՝ Փիրգատագ։— ՄԱՂԿՈՂԸ՝ անհայտ։— ԺԱՄԱՆԱԿԸ՝ 1491 թ.։— ՎԱՃԱՌԸ՝ Թանահատի վանք (աշխարհում 3-րդ ձեռագիրն է Թանահատի վանքում գրված)։— ՍԱՆՈՒԹՅՈՒՆ՝ սույն արժեքավոր ձեռագիրը ստացված է Երևանի Ս. Զորավոր եկեղեցուց 1954 թվականին, Տ. Հովհաննես քահանա Կարապետյանի միջոցով։

ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆ

Թ. 300ա.— Փառք համագո, անբաժանելի Սուրբ Երրորդութեանն և եռահիւսակ անձնաւորութեանն Հաւր անծնի և անբսկզբնականի և Որդոյ ծնիցելոյ և սկսելոյ ի նմանէ յառաջ քան զյաւիտեանս և բղխեցելոյն ի նոյն յէութենէ Հոգւոյն Սրբոյ անորոշաբար և անքննաբար, երկրանձնեա ակրութեանն և միասնական աստուածութեանն, յորմէ եղեալքս ամենայն գոյացան իմանալիքն և զգալիքս, նմա փառք և գոհութիւն և արհնութիւն անդադար յամենայն գոյից յիմանալեաց և ի զգալեաց ի բանականաց և յանբանից, այժմ և անդրաւ յաւիտեանս յաւիտենից, ամէն։

Թ. 300բ.— Արդ, արհնեալ ես և բարեբանեալ ամենասուրբ Երրորդութիւն յամենայն սրբոց և արժանաւորաց բերանովք, որ եռուր կարողութիւն տկար և անարժան անձինս գծագրել անարժան ձերաւք և անմաքուր մտաւք զբաստուածածին քո գիծ տառիս, աստուածածաւս Սուրբ Աւետարանիս, յորում աստուածածին և քաղցրալուր բարբառովն և աւետաւոր ձայնիւ զոչէ Միածին Բանդ քո ի սմա ասել, թէ խնդրեցէք և տացի ձեզ, հայցեցէք և գտցիք, բախեցէք և բացցի ձեզ, և մեք յուսով վստահացեալ յանեռուտ խոստմունս քո, և դարձեալ փափագիմք միւս երանաւէտ ձայնիտ զոր խոստանաս մեղաւորաց դարձելոց, թէ եկայք առ իս ամենայն աշխատեալք և ծանրաբեռնիք, և ես հանգուցից զձեզ։ Եւ դարձեալ, եթէ յայնժամ ծագեսցին արդարքն իբր և զարեգակն յարքաւորեան երկնից և դարձեալ թէ զանձեցէք ձեզ զանձ յերկինս։

Թ. 301ա.— Որք զմտաց աչս անաղաւտ և վճիտ ունիցին, երկնանկաւ գիտմամբ առէական լոյս, և իմանալեացն տեսարան, նոցին ոչինչ է փոյթ բովանդակ բնաւին ինչ որ յաշխարհի և որ ընդ հոսանուտ և եղծանելի բնութեանս բերին, այլ միանգամայն զհուր սիրոյն, զոր հուրն կենդանի արկ ի բանական բնութիւնս, աւր ըստ աւրէ առծարծեն յոգիս անշիջանելի բորբոքմամբ հոգեորացն տուր և առութեամբ, որով և լուսաւորին ըստ բանի աստուածահայր մարգարէին, որ ասէ՝ պատուիրանք Տեառն լոյս են և լոյս տան աչացս։

Սովորութիւն է աստուածային արանց միշտ և հանապազ խոկալ յաստուածային պատուիրանս ի տուէ և ի գիշերի, միշտ զվերինն խորհել ուր Քրիստոս նստի ընդ աջէ Աստուծոյ, և վասն բազում պատճառի բազումք փափագին ջերմեռանտ սիրով և ըղձալի ցանկութեամբ արդիւնս և գործս կատարեալ։

Նախ՝ վասն յուսոյ յաւիտենական և անմահ կենացն, զանցաւորս արհամարհեն և զայն ստանան կեանս որ մնացականն է, որպէս ասէ Տեառն, երթայք գործեցէք մի զկորրստական կերակուրն, այլ զկերակուրն որ մնա ի կեանսն յաւիտենականս։

Երկրորդ՝ գրեմք զսայ, որ զամենայն զանձ լինքն պարունակեալ ունի։ Նախ զվերին իմաստութիւնն, և ապա զամենայն սուրբս որ գրեալ են։

Երրորդ՝ վասն բարեխաւսութեան միշտ անդադար առ Աստուած, զկենդանի բանս աստուածային գրեմք և մարմնացնեմք ի քարտիսի որպէս բանն Աստուած մարմնացաւ և փրկեաց զմեզ յամենայն չարեաց և տանջանաց, և արժանացոյց անմահ կենացն, նոյնպէս և բանս գրեալ հաւատով և

յուսով զամենայն խնդրուածս մեր կատարել ասա ի հանդերձեալն։

Վասն որոյ ցան(թ. 302ա) կացող եղեալք աստուածաշունչ Սուրբ Աւետարանիս (երկու տող բաց է թողնված այստեղ), յուսալով ի բան մարգարէին, որ ասէ՝ Երանի որ ունիցի զաւակ ի Սիովն և ընդանի ի վերինն Երուսաղէմ, և ի բան Տեառն, որ ասէ՝ Գանձեցէք ձեզ գանձ յերկինս, ուր ոչ գող մերձենայ և ոչ ցեց և ուտիչ ապականէ։ Ըստ այսմ յուսոյ և պայմանի պատուական արքս այսոքիկ հանդերձ հարազատովքն Փիրզատ աղէն և կենակիցն իւր Մարեանն և միւս կողակիցն Տալաքն և որդիքն իւր Աղամիրն, Էվատն, Բարսեղ քահանայն, Ղաւնչէն, և այլքն առ հասարակ մեծ և փոքր խնդրեցին յինէն փափագանաւք գրել զՍուրբ Աւետարանս ի դառն և ի վշտաշարժ ժամանակիս, զոր նեղիմք յանիրաւ պահանջողաց։

Արդ, եղև զրաւ գրչութեան աստուածախաւս Սուրբ Աւետարանիս ի թվականութեան Հայկ(թ. 302բ)ազգեան տումարիս ՋԼԹ (1491), ի զանութեան Աղուպ պէկին որդոյ Հասան բէկին, ի հայրապետութեան հաց Տեառն Սարգսի (1484—1515 թ. թ.), ի յաթոռ Սուրբ Էջմիածնին և յեպիսկոպոսութեան մերում Նահանկիս Տէր Յոհանիսի և Տէր Ստեփանոսի, ի յերկնահանգէտ և ի գերահռչակ սուրբ ուխտիս Թանհատի վանից, ընդ հովանեաւ մարս լուսոյ Սուրբ Աստուածածնիս, և Սուրբ Կարապետիս, և Սուրբ Ստեփանոսիս, և այլ բազմահաւք Սրբութեանցս որ աստ կան, և սոցին սպասաւորացս՝ Տէր Կարապետին, Տէր Մելքիսէթին, Տէր Ստեփանոսին և Ստեփանոսի գծագրաւղի, և դեղոյ քահանայից Տէր Եղիշի, Տէր Հայրապետի, Տէր Անտոնի, նայն իմոցն ամենայնի, հարն իմոյ Հասանի, և մարն Դաւնտիլի, և եղբարս Մելիք Ասաթի և որդոցն իւրոց, զոր Տէր Աստուած ընդ երկայն աւուրս պահեսցէ, ամէն։ Եւ զայլ ամենայն արեան մերձաւորսն, զկենդանիս և զննջեցեալսն յիշ(թ.303ա)ել աղաչեմ։ Այլ և զրստացող Սուրբ Աւետարանիս զվերոյգրեալսն, զի ողորմածն Աստուած թողցէ զյանցանս նոցա զկամա և զակամա, զմահացուն և զնեռելին, ցաւղն ողորմութեան ցաւեսցէ յոսկերս ննջեցելոց նոցա, և բուսուսցէ յարն վերջին, ամէն։ Զի ողորմածն Աստուած, որ առատն է ի տուրս բարեաց, ձեզ յիշողաց և մեզ յիշեցելոցս առ հասարակ ողորմեսցի աստ և ի հանդերձելումն։ Ամէն։ Եւ Քրիստոսի Աստուծոյ մերոյ փառք և գոհութիւն յաւիտեանս յաւիտենից, ամէն։

Դարձեալ յիշեցէք զՏէր Անանիէն և զկողակիցն իւր Մարճանն, զորդին իւր Մանուէլ, զեղբայրն իւր զԱզարիէն, Մարկոսն, դուստրն իւր Մարգարիտն, Եղիսաբեթ, զՄանուէլն և զկողակիցն իւր Կարվարն, Տէր Կոստանդն, եղբարն զԱղաալէկն, Սարգիսն, (թ. 303բ) Սարուխան, դուստրն իւր Շահումաղէն· Խանաղէն, Խանսոլթան. Ազարիէն, և որդին իւր Հախում, որդին իւր Պալին, Ամիրն, դուստրն իւր Խոսրովն, Տէր Կոստատն և կողակիցն իւր Խանին, որդին Անանիա սարկաւագն, եղբարն Սարուխանն, քիւր իւր Տավլաթ խանում, Սաթիրաղէն, Սալվարն։

Զվերջին ըստացաւղ Սուրբ Աւետարանիս հեզահոգի և բարէմիտ, Աստուածասէր Աղէն ետ վերըստին նորոգել դասայ ի հալալ արդեանց յիշատակ հոգոյն իւրոյ և ծնաւղացն, հարն Աղամիրին, և մարն Գաւզալ աղին, խանփարին, և կենակիցն իւր Մարգարիտն, և Մարէանն, և որդին Ագուլն, (թ. 304ա) Ազարիէն, և կողակիցն իւր Թանումն, որդին իւր Փանոս, դուստրն իւր Տավլաթ խանումն, Փիանդէն, Հախումն, և կողակիցն Մինէն։ Դարձեալ յիշեցէք զՍարուխանն, կողակիցն իւր Փիանդէն, որդին իւր Ղարիաշան, որ փոխեցաւ Քրիստոս։ Յիշեցէք ի Քրիստոս զհանին, որ բազում յաշխատանք ունի վեր գրոցս։

ՀԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Թ. 1ա.—Թվին ՌԿ (1800)։

Ես Սարուխան որդին տանդ ինքիցին ի Նոգ գեղէ, իմ սրտի... ուրք զմեր հատենի յԱւետարանս ծախեցի Մելիք Նազդոյն, և գինն առայ անպակաս, այլ ոչ ումէք դա... ի չկայ, ոչ յիմոց և ոչ յոտարաց, Սահակ վարդապետն վկայ, Մաղաք եպիսկոպոսն վկայ, Քմէ...պուլին, յատին նար ամդուն ...յՈսկանն Տէրուն էրհայն վկայ, Աստուած վկայ, Յովհաննէս վարդապետս գրեցի, Յովասափն, Յուլուն, Տէրունն վկայ, Յուլունն վկայ։

Թ. 88ա.—Եղ (նույնը նաև թ. 90բ և 91ա)։

Թ. 249ա.— Մեշտակ տն ըստ ժամանակի երջանէր յաւազանն և յուզէր զշուրսն առ նախ ի շարժումն շուրցն իջանէր բժշկէր շունչով նշան հիւանդութեամբ։

Թ. 304ա.— Դարձեալ յիշեցէք ըստացող Սուրբ Աւետարանիս հեզահոգի և բարէմիտ, Աստուածասէր, հիրրնկալ և ողորմած Տէր Բարսեղն, և հայրն իւր Ղաւնչապէկն, և մայրն իւր Նազումն, և կենակիցն իւր Շահ Զամանն, և եղբայրքն իւր Պէկումն, Էվատն, Գուլապն, Տէր Ռան Իսկանդարն, և քոյրն իւր (թ. 304բ) Սէվիխանն, և որդիք (մի անուն չնչված է այստեղ), Էվազ սարկաւագն, Տալաք Պէկն, Եղիէն և դստերքն իւր Աճապխանն, Պարան Նամն, յիշեցէք ի Քրիստոս։

Դարձեալ յիշեցէք Աղէն, և կողակիցն Մարեան, Մարգարիտն, և որդիքն իւրեանց Եղիէն, Էտկարն, Ակորճան, Փիրզատն, Ղարագաշն և Ակոբճանն, Մարտիրոսն, և դստերքն իւրեանց Ուլուխանումն, Ղզլարպէկն Թուքուշն, Աճապխանն, և քոյրն իւր Խոնտաղէն, Խանպէկին Խանումն, և եղբայրն իւր Ակոբճան, և հօրեղբայրն իւր Էվատն, և կողակիցն իւր Խաթունն։ Յիշեցէք Եղիսաբեթն, և որդին իւր Բաղ(թ. 305ա)ասարն, և դուստրն իւր Շահումն, և դարձեալ յիշեցէք Շէխին, և դուստրն իւր Արուսխին։ Դարձեալ յիշեցէք

Աւաքն, և կողակիցն իւր Գէկին, և որդիքն իւր Ովանէսն, յիշեցէք և Աստուած ողորմի ասացէք, Աստուած ձեզ ողորմեսցէ իւր միւս անգամ գալըստեանն, ամէն։

Թվին ՌՃՁԴ (1735) ձեռամբ Սիմէոնի անարժանի աղաչեմ զձեզ, ո՞վ սուրբ հանդիպողք, յիշման արժան առնէք աղաչեմ զձեզ։

Թ. 305ա.— Դարձեալ Գապն կողակիցն, զիմ որդիքն Լէյլզարն, Էվանէսն, դպին իւր Փարին, Մարան, եղբարս որդի Մելիքսէթն, Գիրիգորն, դուստրն Սափուն, դարձեալ Տէր Դաւթն, ով կարդայ ողորմի ասի, Աստուած ողորմի։

Թ. 305բ.— Ես Անանի, էս իմ կամաւրն ոդիս էմք Աւետարանն...

№ 147

ԱՒԵՏԱՐԱՆ

ԹԵՐԹԵՐԸ՝ 256.— ԳՐԱԿՆԵՐԸ՝ 21, յուրաքանչիւր 12 թերթից, ի բաց առյալ ԺԸ՝ 16 և ԺԱ՝ 11 թերթերից։— ՉԱՓԵՐԸ՝ 16.3×12.2×5.5 սմ.։— ՆՅՈՒԹԸ՝ դեղնած և կեղտոտած սովորական թուղթ։— ԿԱԶՄԸ՝ կաշեպատ տախտակ։ Կողքի առաջին երեսը ծածկված է ամբողջութեամբ կլորագոյն զամերով։ Միայն կենտրոնում գտնվում է մի տափակ խաչ, որի վրա էլ ամրացված է Հիսուսի խաչելության նկարը։ Երկու բռնիչները ընկել են, եւ նրա վրա կա հետևյալ գրությունը. «Յիշատակ է սուրբ խաչս Սահակին ի դուռն Սուրբ Նախավկային։— ԳԱՂԳԱՆԱԿՆԵՐ՝ ձեռագրի սկզբում կա 4 թերթ, որոնցից երկուսը մագաղաթ են (թ. թ. 3 և 4), իսկ վերջում կա 3 թերթ, որոնցից երկուսը մագաղաթ են (թ. թ. 255 և 256)։— ՎԻՃԱԿԸ՝ բավարար։— ԳՐՈՒԹՅՈՒՆԸ՝ երկսյուն։— ՏՈՂԵՐԸ՝ 23։— ԳԵՌԻՄՆԵՐԸ՝ ճնշումով։— ԳԻՐԸ՝ բոլորգիր։— ԴԱՏԱՐԿ ԹՂԹԵՐԸ՝ 1, 2, 3, 4, 5, 6, 76, 77, 123, 124, 197, 253, 254, 255 և 256։— ՁԱՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ՝ կան տառ հատարակ խորանների և լուսանցազարդերի, թուղթերի և զարդագրերի, գազանագրերի և ձկնագրերի, ծառերի և ծաղիկների, սրերի և թոյուններ։— ԳՐԻՉԸ՝ Աբրահամ։— ԺԱՄԱՆԱԿԸ՝ 1672։— ՎԱՅՐԸ՝ Որոտան նահանգի Լոր գյուղ։— ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ՝ սուն ձեռագիրը նվեր է ստացվել Լենինականից, մի հավատացյալի կողմից, Տ. Նորայր քահանա Սարգսյանի միջոցով։

ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆ

Թ. 74բ.— Գրեցաւ ի թվին ՌՃԻԱ (1672) ամին ձեռամբ սուտանուն Աբրահամ գրչի, ի յերկիրս Որոտան, ի գեղն որ կոչի Լոր։

ՀԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Թ. 4ա.— Գիրք փորձ (գրված է մագաղաթի վրա)։

Թ. 6բ.—Թվին ՌՄԸ (1759) շաբաթն ես Տէր Տորգաս նոգիրքի փէտրվարի ԺԵ։

Թ. 74բ.— Յիշատակ է Սուրբ Աւետարանս ազուլեցի մեղապարտս Ալէքսանոս երիցու, որ անուանս միայն ունիմ քահանայի, և գործովս սակ և փոչի, բղհայրն իմ Ազարիայ քահանայն, և մայրն իմ Խանումն, և եղբարքն իմ ըստ փանոսն և վեհաշատուր սարկաւագն և զքրոջերն իմ և ամենայն արեան մերձաւորքն իմ, որ սոքա ամենեն հանգուցանել են առ Քրիստոս, հայել արդեանց իմոց գնեցի զՍուրբ Աւետարանս և նոսա յիշատակ ի գեղն Հալիձորի, դուռն Սուրբ Աստուածածին եկեղեցւոյն, յիշատակ ինձ և իմ ամուսնայն Զարիպ Սուլթանին, և իմ ծնողացն, առաջատարակ ամենեցուն, յիշեցէք և Աստուած ողորմի ասացէք և Աստուած ձեզ ողորմի ի միւս անգամ գալըստեանն, ամէն։ Թվ. ՌՃԻԳ (1674)։

Տուի ի ձեռն Տէր Խաչատուր սրբասնունդ քահանային։

Թ. 75ա.— Յիշատակ է Սուրբ Աւետարանս Նախչեւանցի Սյուակին, Առաքելին, Օսկանին, Ավոին, Գէվորին, Ստեփանին, Մկոին և ամենայն արեան մերձաւորաց որ սոքա ամենեն հանգուցել են և նոսուն ի դուռն Սուրբ Նախավկային յիշենայ Տէր Սուքիասին և ամենայն արեան մերձաւորք եմ, ամէն։ Գնեցին հայել արդեանց և նոսուն ամենայն յիշատակ յիշեցէք, Աստուած ողորմի ասացէք և Աստուած ձեզ ողորմի միւս անգամ գալրստեանն, ամէն։

Թվ. ՌՄԻԶ (1777) սի։

Թ. 121ա.— Յիշատակ է Աւետարանս Ազուլեցի Ալէքսանոս երիցուն, դնայրն Ազարիայ քահանայն, և մայրն Խանումն, և եղբարքն իմ, և քոյրքն իմ, և եղբայրորդին իմ Ազարիայն, և որդիքն իւր Գալուստն և Մագաքիայն, և յիշեցէք ի Քրիստոս, և Աստուած զձեզ յիշի, ամէն։

Եւ նոսա յիշատակ ի գեղն Հալիձոր, ի դուռն Սուրբ Աստուածածնոյն, և կենակիցն իմ զրՂարիպսուլթանն, որոշ ունէաք մարմնոյ յիշատակ աշխարհի, մեր հոգւոյ յիշատակ լիցի, խնդրեմ ի ջէնչ լի բերանով ողորմի ասացէք ննջեցելոց մերոց։

Թ. 252բ.— Յիշատակ է Սուրբ Աւետարանս Ալէքսանոս երիցոյն, և իւր ամուսնոյն Զարիպ Սուլթանին, ի դուռն Սուրբ Աստուածածնոյն, ի գեղն որ կոչի Հալիձոր, ի ձեռն Տէր Խաչատուր սրբասէր քահանային։ Դարձեալ անմիզդիր լիրուր որ հանդիպեաց Սուրբ Աւետարանս գնեցի, բայց վասն ծաղկին որ ոմն ոչ ուսեալ և ոչ վարժեալ, այլ լրբարար ձեռն ատ արկեալ և աւերեալ, մի մեղադրէք վասն Տէր, այլ յիշեցէք բոլորով սրտիւ զվերոյգրեալսն ամենայն և զուր յիշողքդ յիշեալ լինիք ի Քրիստոսէ, ամէն։

Թ. 253բ.— Ես գրիչս Գրիգորս թ. ՌՃՆԶ (1707) սեպտեմբերի ու է Զ. ես գրիչս Գրիգորս հայր Տէր Գնտսու։

(Շարունակելի)